

4049

ՏԳԱ  
07.4.11.6.1ST

Ամ 832


# ՀԱՍԿԵՐԻ ՄԱՀԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

XXIII—VI

ԿԱՊՏԵՐԵՒ

ԵՐԿԻՒՂՆ ՈՒ ԱՆՎԵՐԵՐՈՒԹԻՒՆՆ

Սկզբնական դաստիարակութեան ժամանակ



Փոխ. Մ. Ասիլեանց



Պ Ի Ֆ Լ Ի Զ

1911

157.7

Կ-24

ՄԻՆՉԵՒ ԱՅԺՄ

Լոյս են ՏԵՍԵԼ հԵՏԵԼԵՎԱԼ ԳՐՔՈՎԼԵՆԵՐԸ

I ԵՐԵԽԱՋԻ ԿՐԹՈւԹԻՒՆԸ մԻՆՉև 6 տարեկան հասակը — ՀԵՆՐԻԿ ՎԵՐՆԻԳԻ, թարգմ. Ստ. Լիսիցեանի 25 կ:

II ԵՐԵԽԱՋԻ ԲՇԻՆԸ — ՎԻՃԵՆԻԿՈՎԻ, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.

III ԵՐԵԽԱՋԻ ազատագրութիւնը — Կ. Հ. ՎԵՆԱԳԵՂԻ: ՄԵծերն ու փոքրերը — տիկ. Իսահակսէնի. թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.

IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը — Կ. ԵՆԻԳԿՈՎ, թարգմ. Մ Աղ. և Ստ. Լ. յս կ.

V. Պարգևներն ու պատիժները ընտանեկան դաստիարակութեան մէջ — Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.

VI Որտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղայրը — Գալանդառէրի, թարգմ. տ. Հ. Թոփչեանի: Ծանօթացրէք կեանքի ծագման հետ — տիկ. Սելմերի թարգմ. Ստ. Լ. 15 կ.

VII Ըստան. դաստիարակութեան նպատակները և հիմունքները. — Պ. Կապտերեի, թարգմ. Միս. Աս. 15 կ.

VIII Ինչն է հետաքրքրում և զարգացնում մանկան — Ական. Արստալի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.

IX Մանուկների աշխատանքն ընտանիքում. — Ական. Արստալի, թարգմ. Մ. Ասիլեանի: 15 կ.

X Տղան և աղջիկը անցողական շրջանում — Բուլի և Նելսէնի. թարգմ. Ստ. Լիսիցեանի: 10 կ.

XI Մանկական ազատութիւնն ու ուրախութիւնը — Օտառ Էրնստի, թարգմ. Լ. Բարայեանի 20 կ.

XII Ժողովրդական մանկական խաղեր, խմբագրեց Ստ. Լիսիցեան: 20 կ.

XIII Ըստաննեկան լաբարերութիւններն ու նրանց կրթիչ նշանակութիւնը, — Ա. Ն. Օստրոգորսկու թարգմ. Լ. Շ. 20 կ.

Հարմ.  
2-55662

9-55662 4 JUL 2009 9

«ՀԱԽԵՐ» ՄԱՆՈՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1577 ? առջ. Փառական  
4-24

ԿԱՊՏԵՐԵԻ

## ԵՐԿԻՒՂՆ ՈՒ ԱՆՎԵՐԵՐՈՒԹԻՒՆՆ

ՄԿ.ԶՐՆԱԿԱՆ ԴԱՍԻՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Փոխ. Մ. Ասիլեանց

ԽԽ. № 21535

Թիվ 1 ի ջ  
Էլեկտրոնայի առ. օր. Ն. Աղամենացի Պոլից. № 7.

1911

04 FEB 2014

4049

ԵՐԿԻՒՂՆ ԵՒ ԱՆՎԵՀԵՐՈՒԹԻՒՆՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԴԱՍ-  
ՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

Ա.

Դաստիարակութիւն սիրով եւ դաստիարակութիւն  
երկիւղով։ Երկիւղի գանազան տեսակները դաս-  
տիարակութեան ժամանակ։

Սկզբից իվեր մարդկութիւնն ալեկոծում են մի-  
մեանց ներհակ երկու զգացում՝ ուրախութիւն և արխ-  
րութիւն, սէր և ատելութիւն, երկիւղ և բարկութիւն։  
Այս երկու զգացումները մարդկային քնութեան ար-  
մատական հիմնական զգացումներն են. մարդը ամեն  
բանի վրայ նայում է այս երկու հայեցակէտով։ թէ որ-  
քան ուրախ է կամ տխուր. սիրում է մէկը, ատում միւ-  
սը։ Որքան մարդս բարձր է կանգնած միջակութիւնից,  
այնքան էլ նրա գործունէութեան մէջ խիստ են արտա-  
յայտում այդ ներհակ յուզումները։ Այն ոչ այնքան ո-  
րոշ զգացումները, որոնք այդ երկու ներհակ զգացում-  
ների մէջ կազմում են միջին տրամադրութիւններ՝  
հետեանք են աւելի նուրբ և զարգացած կեանքի և ա-  
ռաջացել են աւելի ուշ ժամանակներում։

Մարդն իր երեխաների հետ վարւում էր այդ  
երկու հզօր զգացումների ազդեցութեան ներքոյ. եր-  
բեմն նրանց չափազանց երես էր տալիս, կատարում էր  
նրանց բոլոր ցանկութիւնները, իր կամքը հպատակեց-



39661-63

նում էր մանկան կամքին. երբեմն էլ իրեւ ամենադաժախան դատաւոր խստութեամբ պատժում էր նրանց ամենաչնչին չարութեան և անմեղ վարմունքների համար:

Ի՞արկէ, դժւար է գտնել անխառն դրութեամբ դաստիարակչական այս կամ այն սիստեմը. միայն այս երկու զգացմունքների ներհակ տրամադրութիւնները կազմում են մարդկային բնութեան արմատական յատկութիւնները: Երկիւղով դաստիարակութեան դաժան սիստեմը կամ սիրով դաստիարակութեան միջմ սիստեմն արտայայտում է միայն որոշ զգացման զօրեղ գերակշռութիւնը, բայց ոչ դրան ներհակ զգացման գլխովին բացակայութիւնը:

Ամերիկացի կարմրամորթ մանուկներն օրորոցից դուրս գալուն պէս սողում կամ թաւալում են տաղաւարների մէջ բոլորովին մերկ, մինչև իրենք իրենց սովորում են մանգալ: Մինչև չորս տարեկան լինելը նըրանք չեն կրում որևէ հագուստ. բայց այդ տարիքից սկսած կրում են կաշէ հանդերձ, որպիսին կրում են և նրանց ծնողները: Մանկութեան վաղ հասակում փոքրիկ կարմրամորթներին ամենեին չեն ճնշում. նրանք գնում են, վազվում, թափառում են ուր որ կամենում են—լիոներում, անտառներում, ջրերի մէջ, ցեխերում: Ամառայ մեծ մասն անցնում են լողալով գետերում, լճերում, ինչպէս ձկներ: Չորս կամ հինգ տարեկանից սկսւում է նրանց իսկական ընտանեկան դաստիարակութիւնը: Փոքրիկ աղջիկները, որքան նրանց ուժը պատում է՝ օգնում են իրանց մայրերին: Սկզբում նրանց ընտելացնում են փայտ հաւաքել. 8 տարեկան հասա-

կում նրանք կապում են փայտի տրցակներ և շալակով տուն բերում: Այդ հասակից վեր սկսում են փայտ կտրել, փայտ ճղել, եղիպտացորենի արտերը մշակել և այլ այդպիսի գործեր: Նրանց սկզբնական աշխատանքները թեթև են և բոլորովին համապատասխան մանկական հասակի թոյլ ուժերին: Տղաները վայելում են աւելի ազատութիւն, քանթէ աղջիկ երեխաները: Կարմրամորթների կարծիքով տղաները ծնւած են որսորդութեան և պատերազմների համար: Այդ պատճառով նշան առնելու համար մատաղ հասակից նրանց ձեռքը տալիս են նետ և աղեղ, միայն բութ ծայրով: Մարմնական պատիժը բոլորովին արտաքսուած է նրանց դաստիարակութիւնից: Կարմրամորթների կարծիքով ծեծն ստորացնում է մարդուն: Հարուած ստացած պատանին իրաւունք ունի իր վրէժը լուծել արիւնով և սպանութեամբ: Նրանք զգուշանում են մինչև անգամ սպանալիքներ տալ մանուկներին: Պատահել են դէպքեր, երբ փոքրահասակ աղջիկները մի թեթև յանդիմանութեան համար անձնասպանութեամբ վերջ են տւել իրենց կեանքին կամ թէ միմիայն այն պատճառով, որ մայրերը նրանց երեսին ցայտել են ջրի միքանի կաթիլներ. այս վերջինը համարւում է ընդունւած պատիժներից ամենածանրագոյնը:

Աւելի մեղմ, քնքուշ և սրտագին է Գրելանդացի մանուկների գաստիարակութիւնը, համաձայն իրենց ցեղական ընաւորութեան: Ծնողները շատ են սիրում իրենց երեխաներին: Վերջիններս էլ յայտնի են իրենց բարեբարոյութեամբ և հնագանդութեամբ, չը նայելով

որ էսքիմոսները մարմնական պատիժներ ամենափառ չեն գործադրում: Վեց և եօթ տարեկան ճասակում էսքիմոս մանուկներն արդէն զեկավարում և խնամում են իրենց կրտսեր եղբայրներին և քոյրերին: Նրանք բոլորն էլ հանդարտաբարոյ և համբերող են. ճամարհառություն միամասնակ չեն, աղաղակում, ճշում, մինչև անգամ երբ վայր են ընկնում և չեն կարողանում իրենք իրենց ոտքի կանգնել: Մէկին տւած շաքարի կտորը կարգով անցնում է բերանից բերան բոլոր ընկերների մէջ, այնպէս որ իւրաքանչիւրն էլ ստանում է իր բաժինը: Նրանց դաստիարակութեան միակ միջոցը խաղերն և մեծերին նմանելն է: Վեց կամ եօթ տարեկան հասակից նրանց պարապմունքն է փոքր կենդանիներ, թռչուններ որսալ և այս վերջինների ձւերը վնտուել, գտնել ու հաւաքել:

Դաստիարակութեան այս տեսակ սիստեմները հաղուադէպ են. ընդհակառակ յաճախ կարդում ենք այն տեսակ սիստեմների մասին, որոնց մէջ մանուկների վրայ աղղեկու համար առաջին տեղն են բռնում ահն ու սարսափը: Վայրենիների մօտ այս տեսակ սիստեմի գոյութիւնը հասկանալի է: Նրանց ապրուտը ապահովւած չէ, նրանք դժուարութեամբ են հայթայթում իրենց պարէնը. հարկ է լինում յաճախ և արագ տեղից տեղ փոխելու: Այդ ժամանակակից մանուկներին գրկած կամ շալակած պէտք է տանեն իրենք, աւելի մայրերը. դրացի ցեղերի յարաբերութիւնը միմեանց հետ թշնամական է: Այդ բոլոր հանգամանքները, իհարկէ, ծնողներին չեն կարող տրամադրել բնքշաբար

վերաբերեւել իրենց երեխաներին: Յաճախ իրանք ծնողներն այնպիսի ծանր, անտանելի դրութեան մէջ են լինում, որ երեխաները նրանց աչքով չեն գալիս, աւելացրէք դրան և այն, որ վայրենիներն աւելի անգուսություն են: Նրանց կեանքի բոլոր պայմանները պահանջում են մեծ տոկունութիւն, համբերութիւն՝ տանելու ամեն տեսակ նեղութիւններ: Նրանք պիտի լինեն ֆիզիքապէս արի, կարիքի գէպքում չափազանց սակաւապէտ: Այս բոլորն այնպիսի յատկութիւններ են, որոնք չեն տրում միանգամից, այլ ձեռք են բերում երկար և դաժան փորձութիւններով և վարժութիւններով: Վայրենի շատ ցեղերի մօտ երիտասարդ տղան և մատաղահաս աղջիկը չափահաս են համարում միայն այն ժամանակ, երբ կարողանում են դիմանալ զանազան տեսակի խիստ տանջանքների: Այդպիսի խիստ քննութեան ենթարկելու համար, իհարկէ, առաջուց պիտի պատրաստել: Յայտնի է արդէն սպարտական խիստ դաստիարակութիւնը, սպարտացիք հրապարակով իրենց պատանիներին ձաղկում և խարազանում էին: Այդպիսի խիստ դաստիարակութեան նպատակն էր նրանց դարձնել դիմացկուն, անզգայ մարմնական տանջանքներից ցրտի, քաղցի, վէրքերի, յոզնածութեան և այլն:

Ահա այդպիսի վաղ ու հին ժամանակներից է ըսկիպմն առել դաստիարակութեան այն ամենակոպիտ ձևը, որ կարելի է անւանել դաստիարակութիւն մարմնական տանջանքի երկիրով: Թէ որքան և ինչ տեսակ մարմնական տանջանքներ է կրել զանազան

դարերի և զանազան ժողովրդների ուսանող պատանեկութիւնը՝ անհնար է միառ մի թուել: Յունաստանում և Հռոմում մանուկներին ծեծում էին. միջին դարերում ամենաանգութ կերպով ձաղկում և խարազանում էին. նոր ժամանակներում ծեծում էին բազմադիմի ձևերով—ճիպոտներով, գաւազանով, քանոնով, խըփում էին երեսին, միջքին, ձեռքերին, քաշում էին մազերը, ականջներն և այլն և այլն: ԺԲ դարում մի ծերունի մանկավարժ պահել է հաշիւն այն պատիժների, որոնց ենթարկել է մանուկներին իր 51 տարւայ և 7 ամսւայ ուսուցչութեան ընթացքում: Այս այդ հետաքրքիր հաշիւը:—Նա իր աշակելուներին հասցրել է գաւազանով 911,527 հարւած, ճիպոտներով 124,010, ձեռքով և քանոնով շրղկացրել է 20,989 անգամ, ձեռքով տւել է 136,715 հարւած, երեսին ապատակել է 10,235 անգամ, վզակոթին հասցրել է 7,905 հարւած, ձեռքով գլխին չմիացրել է 1,115,800 անգամ և 22,763 անգամ էլ Աստւածածունչ գրքով, հաւատապատումով, շարականով և քերականութեան գրքով: 777 անգամ երեխաներին չոքացրել է գետնին փըռած սիսեռների վրայ, 613 անգամ եռանկիւնի փայտի (ծղանի) վրայ, 5,001 անգամ աշակերտների գլխին հազցրել է իշխ գլխանոց և 1,707 անգամ գլուխներից բարձր դէպի վեր բռնել է տւել ծեծի ճիպոտները: Այս հաշւի մէջ զանց է արւած այն պատիժները, որ անպատրաստից հնարել է ինքը կարևոր համարւած դէպերում: Այս մանկավարժի հայհոյանքի բառարանը կազմւած է եղել 3000 բառից, որի  $\frac{2}{3}$  իր մայրե-

նի լեզուի սեփականութիւնն է, իսկ  $\frac{1}{3}$  իր սեփական հնարածը: Դպրոցական մանուկներն այս մանկավարժի ձեռքին իսկական նահատակներ են եղել:

Մանուկներին ծեծելը հասել է մինչև մեր օրերը: Այս մասին կարելի է գտնել բազմաթիւ փաստեր շատ ազգերի ընտանեկան և դպրոցական՝ դաստիարակութեան պատմութեան մէջ: Եւ մինչև այժմս էլ դեռ շատերի համար խնդիր է, արդեօք հարկաւոր է մանուկներին ծեծել՝ թէ ոչ: Այս էլ պէտք է ասել, որ մանուկներին ծեծելով և մարմնական ցաւ ու տանջանք պատճառելով՝ չէին բարականանում. հնարում էին դեռ էլի զանազան չարչարանքներ, օրինակ՝ երկար ժամանակ կանգնած և չօքած էին պահում, ձեռքերը դէպի վեր բարձրացրած, ձեռքը տալիս էին հաստ գիրք, փակում էին առանձին տեղում, կանգնեցում և նստեցնում էին անշարժ. պահում էին առանց ճաշի և այլն և այլն: Այս տեսակ բազմաթիւ պատիժների ընդարձակ գործադրութիւնը դպրոցները և ընտանիքները դարձրել էր տանջարաններ, որոնց մէջ չարչարւում ու նահատակւում էին երեխաները: Մարդկութեան գոյութեան պատմութեան ամբողջ ընթացքում մինչև մեր օրերը չի դադարել մարմնական պատիժներով դաստիարակւող մանուկների աղիողորմ լացն ու ճիչը: Դաստիարակութեան պատրւակով մանուկների ջարդը՝ ծնողների, ուսուցիչների և հասակաւորների շատ հին զբաղմունքն է: Ով հասել է՝ խրատել է խեղճ մանուկներին, այսինքն՝ գանակոծել է նրանց, կարծելով թէ նրանց մարմինն ու հոգուն մեծ վարձք է անում:

Այժմ ևս մարմնական պատճի կոպիտ ձեռ դեռ գործադրում է բացառիկ կարծւած դէպքերում։ Թէ՛ համեմատաբար սակաւ՝ գերմանական և անգլիական դպրոցներում։

Մարմնական պատճմների երկիւղով մանուկներին դաստիարակելու անյարմարութիւնը վաղուց արդէն հասկացել են, ուստի այդ սիստեմի բռնութիւնը փոքր առ փոքր կարճելու վրայ է, այնպէս որ այժմ այդ ահաւոր և ահագին հիմնարկութեան աւերակներն են միայն մնացել որոնք յիշեցնում են նրա անցեալ մեծութիւնը։ Առաջ դպրոցներում աշակերտներին ծեծում էին ամենայն օր իւրաքանչիւր դասի ժամանակ, իսկ հիմա ծեծում են հազիւ։ Առաջ կարծում էին, եթէ մանուկներն առանց ծեծի մեծանան՝ նրանցից լաւ մարդ չի դուրս գայ. ի՞նչպէս կարելի է առանց երկիւղի։

Մարմնական պատճմների աստիճանաբար վերանալով, թուլացաւ և նրանցից առաջացող երկիւղը. ուստի շատերը բոլորովին անհրաժեշտ համարեցին մանուկների մէջ անշէջ պահել աւելի նուրբ և քաղաքակիրթ երկիւղ—երկիւղ հոգեկան տանջանքների, խայթւած ինքնասիրութեան, անյագ փառասիրութեան և սնապարծութեան, մրցութեան, յաղթանակի։ Դպրոցների մէջ մտցրին մէկ կողմից ինքնասիրութիւնը վիրաւորող մի շարք նախատական պատճմներ, իսկ միւս կողմից՝ փառասիրութիւնը և սնապարծութիւնը գրգըռող բազմատեսակ պարզեներ և մրցանակներ. այնպէս որ այնուհետև դպրոցները գարձան մի ասպարէզ, որտեղ աշակերտներն իրեւ ախոյեաններ իւրաքանչիւր

քայլափոխում միմեանց դէմ պիտի մրցէին և մաքառէին։

Նախատական պատճմները բաւական բազմատեսակ էին, օրինակ՝ յանցաւորին արգելում էին կրել որ և է հագուստ (օրիորդաց դպրոցներում, օրինակ՝ գոգնոց), հացցնում էին տարբեր գոյնի աւելի կոշտ հանդերձ, յանցաւորը կրում էր իշխ գլխի ձեռվ գլխանոց, խեղկատակի գլխարկ. հանգերձի վրայ գրում էին յանցանքն և այդպէս շրջեցնում ամբողջ դպրոցում։ Նըստացնում էին վերջին սեղանի վրայ. վատ թւանշան էին դնում. անունը գրում էին սև մատեանում, յանցաւորը ծառայի կամ աղախնու փոխանակ կատարում էր դպրոցին վերաբերեալ թեթև ծառայութիւններ և այլն և այլն, նախատական պատճմներին զուգընթաց դպրոցներում բարեբարոյ, առաջադէմ աշակերտներին և աշակերտունիներին տալիս էին պատւաւոր պարզեներ, դասարաններում և դպրոցի այլ մասերում առաջին տեղերը, գովասանական թերթեր, նշանակում էին բարձր թւանշաններ, տղայոց դպրոցներում շքանշաններ կամ այլ այլ տեսակ իրեր, ազգանունները գրում էին մարմարեայ տախտակների վրայ։ Օրիորդաց դպրոցներում տալիս էին ժապաւենական հանգոյցներ, տղայոց նշանակում էին դասապետներ, ուղղիչներ և այլն։ Մէկ խօսքով ամեն ըովէ և ամեն կերպ աշխատում էին մանուկների մէջ վառ պահել ինքնասիրութիւնը, փառասիրութիւնը և սնապարծութիւնը։

Միենոյն ժամանակ անդադար ներշնչում էին մանուկներին, որ նրանք պէտք է աշխատեն գերազանցել

իրենց ընկերոջը, կորդեն նրանից առաջին տեղը, պատւաւոր պաշտօնը, դասապհատութիւնը և այլն։ Դպրոցները վիտում էին մրցութիւններով, նախանձով, հակառակորդին կործանելու ամեն տեսակ նենդութիւններով։ Ինչպէս կեանքի մէջ, այնպէս էլ դպրոցներում՝ ոմանք բարձրանում էին, բռնում առաջին տեղը, երբեմ պատւաւոր դիրքից, կոչումից ցած էին գլուռում հակառակորդից, նորից ընկնում համարեա վերջին տեղը, գնում խառնում ամբոխի հետ, առժամանակ անհետանում նրանց շարքերում։ Մէկ խօսքով՝ մանկան ինքնասիրութիւնը պահում էին լարւած դրութեան մէջ։

Նախատական պատիժները և մրցանակները աւելի մեծ կամ փոքր չափով այս կամ այն ձեռվ դեռ պահանում են բոլոր քաղաքակիրթ երկիրներում։ Այս միջոցները մանրամասն մշակել են մանաւանդ եղութները և ընդարձակ չափերով գործադրել փոխանակ բիրտ մարմնական պատիժների։ Մարդասիրական հիմնարկութիւններն էլ նոյնպէս օգտակացին այս սիստեմով, գրգռելով իրենց սաների մէջ պատուի և ինքնասիրութեան զգացումներ։ Աշակերտների ինքնասիրութիւնը, փառասիրութիւնը և անապարծութիւնը գրգռող մրցանակաբաշխութիւններն այժմ ոչ մի տեղ այնպիսի մեծ չափերով չեն գործադրում, ինչպէս ֆրանսիայում։ Այստեղ մանուկներին տալիս են բազմատեսակ պատւանշաններ, շքանշաններ, որոնցով նըրանք պահնում ու պարծենում են։

Դպրոցների ղեկավարներն ինքնասիրութիւնը

դրգորդ այդ միջոցները դեռ բաւական չը համարեցին, որովհետև նրանք սահմանափակուում էին միայն դպրոցով։ Շատ աշակերտներ հասկանում էին, որ դպրոցը դեռ կեանք չէ, այլ նախադուռը, պատրաստութիւն կեանքի։ այն ամենն, որ սահմանափակուում է դպրոցով՝ դեռ առանձին նշանակութիւն չունի։ Կեանքն աւելի կարեռ է, այնտեղ՝ կեանքի մէջ են մարդու իսկական շահերը։ Դպրոցական յաջողութիւնները դեռ գրաւական չեն կեանքի մէջ ունենալիք յաջողութեան։ Դպրոցում շատ յաջողակներ կեանքի մէջ լինում են ձախողակ բաղդի տէր մարդիկ։ «Եւ առաջինները կինեն վերջինները», կարծես, ասւած է, ի միջի պյուղ՝ և դպրոցականների վերաբերմաբ։ Այդպիսով դպրոցական պատիժներն ու պարզեաբաշխութիւններն ուրշեալ չափով հետզհետէ կորցնում էին իրենց գոյութեան խարիսխը և սահմանափակուում էր նրանց ազդեցութիւնը։ Դպրոցական պարզեաբաշխութիւններն և պատիժները խաղալիքներ են, որոնք կարեռութիւն ունին երեխանների համար և միայն նրանց են հետաքրքրում, բայց որոնց վրայ մեծերը նայում են ժըպիտով։

Դրանից յետոյ երկիւղն իբրև դաստիարակութեան հիմք ու խարիսխ ընդունողների մէջ ծագեց այսպիսի մի միտք։ չի կարելի արդեօք մանուկներին ահարեկել այնպիսի միջոցներով, որոնք չը սահմանափակւեն միայն դպրոցով, այլ և նրանց ազդեցութիւնը տարածւի և կեանքի մէջ։ Առաջնորդուելով յիշեալ մըտքով, բայց և գլխաւորապէս աչքի առաջ ունենալով

պետական նպատակները՝ մտածեցին կրթական ցենզը  
միացնել քաղաքացիական արտօնութիւնների հետ, այն  
է՝ ով չի ստացել որևէ կրթութիւն, նա լիազօր,  
իրաւատէր քաղաքացի չէ. միայն նա է վայելում քա-  
ղաքացիական բոլոր իրաւունքները, ով ստացել է՝ թէն  
տարրական՝ կրթութիւն։ Որքան կրթական ցենզը բար-  
ձըր է, այնքան էլ անձնաւորութիւնն իրաւունքներ է  
ունենում աւելի պատւաւոր և նիւթական ապահով  
պաշտօններ, տեղեր ստանալու. այդպիսին կեանքի մէջ  
գիւրութեամբ է ճանապարհ հարթում իր համար և  
յաջողութիւնների հասնում։ Դիպլոմը բանում է բոլոր  
ապահով պաշտօնների և տեղերի դռները։ Այդ ուղ-  
ղութեամբ աշակերտներին խրախուսեն այն սատիճան  
առաջ գնաց, որ ուսանողը դեռ դպրոցական նստարա-  
նից ձեռք էր բերում աստիճաններ. կրթութիւն ստա-  
նալը համարւեց պետական ծառայութիւն և վարձա-  
տրեց աստիճաններով։ Հասկանալի է, որ այսպիսի  
հանգամանքներում աշակերտին դպրոցից արձակելը զար-  
ձաւ մի շատ սովորական ահարեկիչ միջոց, որով միե-  
նոյն ժամանակ զօրացաւ դպրոցական սպառնալիքների  
և ազդարարութիւնների երկիւղաբեր նշանակութիւնը։  
Աւելի ուժեղացան և աճեցին դպրոցական նախկին առ  
սարսափները, իրանց դաշնակից ունենալով քաղաքա-  
ցիական զանազան իրաւունքներ և արտօնութիւններ,  
որ կարելի էր ձեռք բերել միայն կրթութեամբ։

Զինսաստանում ճիշտ և բացայատ որոշւած են այն  
քաղաքացիական իրաւունքները, որոնք կապւած են դիպո-  
լոմի հետ։ Այնտեղ ով կամենումէ պետական ծառայու-

թիւան մէջ տեղ ստանալ, պարտաւոր է տալ քննու-  
թիւններ։ Այդ քննութիւնները միքանիսն են. իւրաքան-  
չեւր քննութիւն բռնում են յաջորդական կարգով. որո-  
շեալ ժամանակամիջոց անցնելուց յետոյ և որոշեալ  
տեղերում։ Քննութիւնները լինում են չափազանց խիստ։  
Պետական պաշտօն ստանալը կախւած է քննութեան  
սատիճանից. միայն նա ունի իրաւունք պետական ա-  
մենաբարձր պաշտօններ ստանալու, ով տւել է սահ-  
մանւած քննութիւնները։ Ովոր բռնել է միայն մէկ կամ  
երկու քննութիւնն, նա աւելի նւազ իրաւունք է ստա-  
նում պետական ծառայութեան մէջ։ Մեր սիստեմների  
հիմքն էլ, այն է՝ կապել ստացած կրթութեան հետ ծա-  
ռայութեան իրաւունքներ և աստիճաններնոյնն է, ինչ  
որ Զինսաստանում, բայց ոչ այնպէս վճռական և հետե-  
ղական, ինչպէս այնտեղ է։

Վերջապէս միքանի դպրոցներում վաս սովորող  
աշակերտներին վախեցնում էին Աստուծոյ բարկու-  
թեամբ, որ Նա կը զրկէ նրանց իր երկնաւոր թագաւո-  
րութիւնից, նրանք կը ժառանգեն գեհենի անշէջ կը-  
րակը։ Լաւ սովորողներին և դպրոցական բոլոր  
կարգերին հնագանդւողներին խոստանում էին դպրո-  
ցական իշխանութիւնն և Աստուծոյ հաճութիւնը, իսկ  
դպրոցական յանցանքների համար սպառնում էին Աս-  
տուծոյ բարկութեամբ ու պատժով։ Այդպէս, Աստուած  
երեխանների համար դպրոցական երկիւղի ամենաբարձր  
և վերջին աղբիւրն էր։

Դրանից այն կողմն անցնել այլ ևս անհնար էր, էլ  
ուրիշ ճանապարհ չը կար, երկիւղի բոլոր տեսակներն

արդէն սպառւել և գործադրուել էին գպրոցական գործի ծառայելու համար:

2

Ամեն տեսակ երկիրների հիմնական տարրերը:  
Երկիրի ընդարձակ գործադրութեան պատճառ-  
ները դաստիարակութեան ժամանակ:

Դպրոցներում և ընտանիքներում գործադրած ու  
գործադրող երկիւղի բոլոր տիսակները հոգեբանա-  
կան տեսակէտից կարելի է վիրածել միմեանց հետ  
սերտ շաղկապւած ու մերժաւոր առնչութիւն ունե-  
ցող երկու կարգի—ֆիզիքական և հոգեկան տանջանք  
առաջացնող սպառնալիքներ, և սպառնալիքներ՝ որոնց  
նպատակն է զրկել մարմարական և հոգեկան բաւակա-  
նութիւններից: Եւ իսկապէս զրանցից էլ աւելի սպառ-  
նալիքներ չըկան. իւրաքանչիւր որևէ սպառնալիք ան-  
պատճառ կըմտնէ յիշեալ երկու կարգի սպառնալիք-  
ներից մէկի մէջ:

Ամենախիստ և անմիջական սպառնալիքը, որ սաստիկ բարկացած մարդը թափում է իր բերանից՝ այն սպառնալիքն է, որով նա կամենում է անմիջապէս պատճառի ֆիզիքական կամ հոգեկան զգալի տանջանք:—Ես քեզ կըծեծիմ. ես քեզ փայտով ջարդու փշուր կանեմ, հաց չեմ տայ, որ ուտես. ձեռք ու ոտքը կըկապեմ. մութ սենեակում կը փակեմ. ես քեզ բոլորի առաջ կըխայտառակեմ. արարքներդ բոլորի առաջ կը բանամ, ես ցոյց կըտամ, թէ գու որբան իշ-

մար ես, փոփոխամիտ ես, թոյլ ես. քեզ ծաղրի առարկայ կըդարձնեմ: Ահա թէ ինչ է սպառնում հասակաւորը մեղանչող, բարկացնող երեխային: Այս սպառնալիքները բովանդակում են իրենց մէջ զանազան տեսակի դրական տանջանքներ:

Երկիւզի երկրորդ հիմնական տեսակը, որին յաճախ գիմում են հասակաւորներն երեխաների վերաբերմամբ՝ բաւականութիւնից զրկելու սպառնալիքն է: Ես քեզ կը զրկեմ մրգից, քեզ հիւր չեմ տանի, քեզ համար խաղալիքներ չեմ գնի, քեզ համար նոր հանդերձ չեմ գնի կամ չեմ կարի, մրցանակ չես ստանայ, դպրոցից դուրս գալուց յետոյ չես ստանայ արտօնութիւններ, շուտափ չես ստանայ լաւ պաշտօն, բարձր աստիճան: Այդ էլ տանջանք առաջացնող սպառնալիք է, միայն ուրիշ տեսակ, որ չի պատճառում անմիջական տանջանք, այլ բաւականութիւն ստանալու զրկանք: Բաւականութիւնից զրկելը կարելի՞ է արդեօք համարել տանջանք: Այդ իսկական տանջանքի ստերը կամ թոյլ արձագանքը չէ արդեօք: Կարելի՞ է արդեօք հաւասարագոր համարել երկիւղի այդ երկու տեսակները՝ տանջանք պատճառելը և բաւականութիւնից զրկելը:

Բաւականութեան և տանջանքի հոգեբանութեան  
խորը չը մտնելով, նկատենք միայն, որ շատ զրկանքներ  
բաւականութիւնից մարդուս մէջ առաջացնում են նոյն-  
պիսի գառն զգացումներ, որպիսին առաջացնում է  
դրական տանջանքը։ Փառասէր մարդուն չը տւին  
սպասած աստիճանը կամ շքանշանը. մանկանը հիւր  
չը տարան կամ զրկիցին մրգից։ Դիտեցէք նրանց



դրութիւնը—նրանց անբաւականութիւնը շատ պարզ և մեկին է: Այդ դրութիւնը շատ հեռու է ստւեր լինելուց կամ արիւն ու մարմին չստացած անորոշ իրականութիւնից: Տրամադրութեան բոլոր նշանները նոյնն են, ինչ որ նկատում են և դրական տանջանքի ժամանակ: Բաւականութիւնից զրկուելու զգացումը յաճախանմիջական տանջանքից աւելի խիստ է լինում. ինդրի ամբողջ էութիւնը նրանումն է, թէ մարդու ինչից է զրկում, ինչ տեսակ բաւականութիւնից:

Եթէ ուշադրութեամբ դիտենք այս դրութիւնը, որ անուանում է զրկանք բաւականութիւնից, կը դժւարանանք տարբերել նրան անմիջական տանջանքից: Ի՞նչ կը նշանակէ զրկել մանկանը քաղցր կերակրից, մրգից:—Այդ կնշանակէ նրան մարել մի առանձին քաղցով—քաղցրի քաղցով: Մանուկը զանազան նիւթեր ուտելու բնական պահանջ ունի, ի թիւս որոնց և քաղցր նիւթեր: Քաղցրի պահանջը պակաս անհրաժեշտ չէ, քան թէ միւս կերակուրների պահանջը: Եռյապէս է և ընկերութեան բաւականութիւնից զրկելը և այլն, որ ոչ թէ մտացածին, իրականութիւնից զուրկ մի տանջանք է, ընդհակառակը բոլորովին իրական մի տանջանք է: Ընկերութեան, գւարճութեան պահանջը, իսկական պահանջ է, և այդ բաւականութիւնից զրկելն ոչ պակաս չարատանջ է, քան թէ շարժողութիւններից զրկելը: Փառասէր աշակերտին չըտեին պարզե, իսկ փառասէր պաշտօնեային՝ աստիճան կամ շքանշան, մինչդեռ նրանց կարծիքով պէտք է որ ստանային այդ նախապատռութեան նշանը: Նրանց անբաւականու-

թիւնը լիովին իրական է, որովհետև նրանց վերաբերմամբ գործազրեցին նախատական մի պատիժ, միայն այլ ձեռվ: Մի մարդու անընդունակութեան մասին կարելի է յայտարարել զանազան միջոցներով: Կարելի է մէկին արտայայտել անբարեհաճ վերաբերմունք զանազան եղանակով՝ կարելի է ուղղակի հրապարակական խայտառակութեան առարկայ դարձնել, հագնելով նրա գլխին յիմարի գլխանոց, այդպէս շրջեցներով նրան շուկաներում, թէ ահա նայեցէք, այ մարդիկ տեսէք, որքան յիմար է այս մարդը. երբեմն էլ կարելի է նոյնն արտայայտել, չըտալով նրան նշան, տիտղոս, պարզեներ, որ տրում են լաւելին, խելօքներին, վաստակաւորներին: Եթէ բոլոր խելօքները, լաւերը և վաստակաւորներն ստանում են, իսկ դռչես ստանում, դրանով լուր խայտառակում են քեզ:

Աշակերտի ընկերն ստացել է լաւ թւանշան, իսկ ինքն անբաւարար կամ պակաս թւանշան: Ի՞նչ բան է այդ. ըստ երեսյթին դա չըպէտք է լինի՝ դրական տանջանքի պատճառ, մինչդեռ վաստ թւանշանը շատերի համար մեծամեծ տանջանքների աղբիւր է: Շատերն իսկապէս տանջում են, եթէ պակաս թւանշան են ստանում, քան թէ ստացել է ընկերը, մանաւանդ, եթէ աւելի լաւ թւանշան ստացողն իր մրցակիցն է: Պատահել են դէպքեր, որ պակաս թւանշանի համար, ստացողի կարծիքով՝ ոչ բաւարար, վերջինս անձնապանութիւն է գործել: Եթէ անբաւարար թւանշանի հետ կապւած են ընտանեկան գժտութիւններ, աշակերտը կարող է դիմել իր կեանքին վտանգ սպառնա-

ցող միջոցների: Յայտնի են բազմաթիւ գէպքեր, երբ աշակերտը վատ թւանշան ստանալու համար փախել է տանից: Բազմաթիւ գէպքերից մէկը:—1899թ. «Սարատով» շոգենաւի վրայ կալանառում են 13 տարեկան մի գիտնադիստ, որ սկզբում իր իսկական ազգանունը ծածկում էր, բայց յետոյ ստիպւած յայտնում է, որ Աստրախանի ուսուցիչներից մէկի որդին է, վատ թւանշան ստանալու պատճառով երկիւղից ստիպւած՝ փախել է տանից: Նրա հետ փախած է լինում և մի ուրիշ երեխայ, որ շոգենաւից իջնում է Յարիցին քաղաքում: Այդ գունատ, նիհար և հիւանդու երեխան պատմում է, թէ տանը նրան ասել են. եթէ 2 կըստանաս, տուն չըգաս. «Ես երկու հատ 2 ստացայ, ուստի շոգենաւ նստեցի ու փախայ»:

Դրանից կարելի է հասկանալ, թէ երեխան ինչ յուսահատ դրութեան հասած պիտի լինի, որ 2 ստանալու համար ձգում է ծնօղական տունը և փախչում: Այս գէպքը պարզ ցոյց է տալիս, թէ մանկան հոգեկան վիճակը շատ հեռու է եղել անորոշութիւնից:

Երկիւղի ազգեցութեամբ դաստիարակելու սիստեմը մինչև այսօր էլ գոյութիւն ունի և ամենատարածւած սիստեմներից մէկն է. դաստիարակութեան մնացեալ միւս սիստեմները միայն թոյլ փորձեր են ազատւելու այդ ի հնուց տիրող սիստեմից: Ինչո՞ւ այս սիստեմն այսպէս տարածւած է և ինչո՞ւ այսպէս ամուր պահպանում է: Նրա համատարած տիրապետութիւնն ունի իր միքանի պատճառները: Ամենից առաջ հասկաւորների համար այս սիստեմի գործադրութեան յարմա-

րութիւնն է, որ դաստիարակչից չի պահանջում որևէ նախապատրաստութիւն: Երեխային ծեծելու, ձաղկելու, հանոյելու, կերակրից կամ որևէ բաւականութիւնից զրկելու, ծաղրելու, ստորացնելու համար չի պահանջւում ոչ մի գիտութիւն, ոչ մի հմտութիւն և ոչ մի զարգացում. այդպիսի ազդու միջոցներ բոլոր հասակաւորներին էլ մատչելի են: Երկար մտածելու ի՞նչ կարիք կայ, կամեցար՝ ծեծեր կամ հայհոյիր, նախատիր—սրանից էլ չեշտ բան: Մէկը կարող է լինել ամենատգէտ և բոլորվին անկիրթ մարդ, բայց երեխաներին ծեծելու և պատժելու մէջ՝ ամենաանգութը: Զափահաս մարդը միշտ աւելի ուժեղ է երեխայից. այդ պատճառով էլ ամեն ըոպէ կարող է նրան ճնշել և տանջել: Երեխային ծաղրելու, շշմեցնելու, ստորացնելու, իր գիտութեան և փորձառութեան գերազանցութիւնը ցոյց տալու համար չափահասի գլխում միշտ այդքան խելք կըգտնւի: Իսկ ինքնասիրութիւնը գրգռող, աւելի նուրբ խայտառակիչ պատիժներ և պարզեներ գործադրելու համար պահանջւում է աւելի հմտութիւն և շրջանայեցողութիւն. այդ սիստեմի դաստիարակիչները պէտք է ճանաչեն այն անհաների ընաւորութիւնը, որոնց վերաբերմամբ գործադրում են այդ պատիժներն ու պարզեները: Եզրիտները գիտէին մեծ վարպետութեամբ գտնել երեխաների փառասիրութեան և սնապարծութեան թոյլ դամարը, և այդ միջոցով իրենց աշակերտների վրայ մեծ ազգեցութիւն էին ձեռք բերում: Ծնողների և դաստիարակների մեծ մասը գործադրում է այդ միջոցները, բայց շատ ան-

յաջող, Գրգռելը՝ գրգռում են երեխաներին, բայց գրաւ-  
նից շատ աննշան հետևանք է ստացւում:

Երկիւղով դաստիարակելու սիստեմի լայնածա-  
ւալ տարածման երկրորդ պատճառը, նրա տեսանելի  
ազդեցութիւնն է: Մարմական պատիմներով, բաւա-  
կանութիւններից զրկելով, ինքնասիրութիւնը ստո-  
րացնելով՝ մանկան կամքը հպատակում է հասակա-  
ւորների կամքին: Դրանից աւելի էլ ինչ կարելի է  
ցանկանալ: Մասնուկը փոխում է, լինում է այնպէս,  
ինչպէս մեծերն են հրամայում նրան լինել: Առաջնրա  
համար գալ չէին կարողանում, իսկ երկիւղը նրան  
սանձաւարում է, փափկացնում է ինչպէս մեղրամոմ:  
Երկիւղի ազդեցութեամբ այս՝ ըստ երեսութիւն՝ օգտա-  
կար կարծւած հետևանքիցն է սկիզբն առել և արժա-  
տացել այն վարդապետութիւնը, թէ մանուկների դաս-  
տիարակութեան գործում երկիւղն օգտակար և մինչև  
անգամ բոլորովին անհրաժեշտ գործօն է: Առանց եր-  
կիւղի բոլորովին չի կարելի երեխայ դաստիարակել,  
մտածում է մեծամասնութիւնը, եթէ ոչ նրանից լաւ  
մարդ չի գուրս գայ: Երկիւղով կարելի է վատն ոչն-  
չացնել իսկ լաւն արմատացնել:

Եւ վերջապէս երկիւղի ազդեցութեամբ դաստիա-  
րակութեան երրորդ պատճառը պիտի համարել այս  
սիստեմի լիովին համապատասխան լինելը ներկայ հա-  
սարակական և մեծերի գործունէութեան ներքին շար-  
ժառափթներին: Մեծերը մանուկներին միշտ իրենց չա-  
փոխ են չափում: Իրենց կեանքի և գործունէութեան  
կարգերն են մտցնում և գործադրում նրանց կեանքի

և գործունէութեան մէջ: Իսկ ի՞նչ են տեսնում հասա-  
կաւորներն իրենց շուրջը—մի ընդհանուր սարսափ: Ամ-  
բողջ հասալակութեան կեանքը համակւած է երկիւղով:  
Հասակաւորի գլխինկախւած ենքրէական և քաղաքացիա-  
կան օրէնքները, հասարակական կարծիքի դատաստանը,  
անձնական վրիժառութիւնը և անպատածների և նա-  
խանձորդների նենգութիւնները. Նրան ճնշում են մահ-  
ւան երկիւղը, խղճի խայթը, Աստուծոյ բարկութիւնը,  
ահեղ դատաստանը և դժոխքի սարսափը: Միւս կողմից՝  
հասակաւորին առաքինի գործերի համար խոստանում  
են աստիճաններ, շքանշաններ, ապահով պաշտօններ,  
ամեն տեսակ երջանկութիւն և բաղդառութիւն երկ-  
րի վրայ, արբայութիւն՝ միւս կեանքում, պատմութեան  
մէջ անմոռաց յիշատակութիւն, հրապարակներում՝  
արձան: Հասակաւորը ընտելացած լինելով կեանքի  
այսօրինակ սկզբունքներին, կարող է արդեօք գրա-  
նից գուրս մանուկների հետ վարեցողութեան մի նոր  
եղանակ ունենալ: Իհարկէ՝ ոչ. ուստի մանուկների  
դաստիարակութեան վերաբերմամբ գործադրում է եր-  
կիւղ առաջացնելու և ինքնասիրութիւնը գրգռելու  
սիստեմը, որ իսկապէս հասարակական կազմի ընթօ-  
րինակութիւնն է, այսինքն՝ հասակաւորների կեանքի  
կարգերը փոխադրւած մանկան կեանքի մէջ:

Քննենք այժմ, կարելի՞ է արդեօք խելացի դատո-  
ղութեամբ և գիտակցաբար ընդունել երկիւղն իբրև  
հիմք դաստիարակութեան: Դրա համար վերլուծութեան  
կենթարկենք երկիւղի ազդեցութիւնը մարմնական և  
հոգեկան դանագան կողմերի վրայ:

գ.

Երկիւղի վնասակար ազդեցութիւնը մարմնական կեանքի վրայ—շարժողութիւնների, արեան շրջանադարձութեան, արտաթորութեան։ Երկիւղի վնասակար ազդեցութիւնը հոգեկան գործունէութեան վրայ—բարոյական գարգացման, յիշողութեան,—ուշիմութեան։

Երկիւղը նախաճաշակումն է ապագայ տանջանքի։ Երկիւղի այս բացատրութիւնը իր մէջ ամփոփում է նրա բոլոր տեսակները, բացի ժառանգական՝ բնածին վախից։ Սարսափը բոլորովին անսպասելի մի ահ է, այնպէս որ չենք էլ կարողանում մտածել, թէ մեզ ինչ դժբախտութիւն է սպառնում, և դժբախտութիւն է այդ արդեօք, թէ մի նոր տպաւորութեան հանդիպում։ Բնածին վախը փորձով ձեռք բերած վախից աւելի առաջ է, օրինակ՝ հաւի ձագը, որ դեռ ոչ մի անգամ չի տեսել բազէ և փորձով չը գիտէ, թէ նա ինչ կարող է անել

հէնց որ նկատում է առաջին այդ գիշատիչ թռչունին, շտապում է թագնւել։ Բայց երկիւղի այդ երկու տեսակն էլ միենոյն երկոյթի արտայայտութիւնն ունին, այսինքն՝ ապագայ տանջանքի նախաճաշակումը։

Կենդանի արարածների կեանքի մէջ երկիւղը շատ վաղ ժամանակներից կազմում է մի ընդարձակ և կարևոր երկոյթ։ Որ կարծես դարձել է մարդկային բնաւորութեան անբաժան մի մասն ու խոր արմատներ արձակել նրա մէջ։ Կենդանիների և մարդկանց կեանքի մէջ իշխում է գոյութեան կուի անողոք օրէնքը։ Կատարում է մի անընդհատ պատերազմ, շատերը ընկնում մեռնում են, շատերը ստանում են վէրքեր, հաշմանդամանում, կրում են պէսպէս տանջանքներ։ Եւ կենդանին, և մարդը գտնուում են անընդհատ վտանգի մէջ, այդ իսկ պատճառով հակամէտ են ամեն մի նորութեան կասկածանքով վերաբերեւ, թէ այդ նորութիւնն արդեօք որ և է մի վտանգ չի սպառնում։ Կարելի է չվախենալ միայն այն բանից, որի անվտանգ լինելն անկասկած է, երկար փորձով հաւաստիացել ենք դրան։ իսկ նորի մասին սկզբում գեռ յայտնի չէ, թէ ինչպէս է նա, հաշտ թէ թշնամաբար է տրամադրւած, օգտակար է թէ վասակար։ Կենդանիների և մարդու ներսը արմատացած երկիւղի պատճառով իւրաքանչիւր մի անծանօթ տպաւորութիւն վերաբրւում է ահաւոր առարկաների կարգին, ապա թէ փորձով ստուգելուց յետոյ՝ դասւում է անվտանգների կարգը։

Այստեղից առաջանում են սարսափը և ժառանգական բնածին վախը։ Սարսափն այն առաջին սոս-

կումն է, որ զգում ենք անսպասելի նոր տպաւորութեան ժամանակ, որի սկզբնապատճառը դեռ լիովին մեղյացտնի չէ, այսինքն՝ չըգիտենք, նա ահաւոր է թէ ոչ ահաւոր: Մարդն արդէն առաջուց վախենում է ամեն մի նորութիւնից, ըստ առածին՝ թէ «սարսափահար ագուաւը թիից էլ կը վախենայ»: Մարդը և կենդանիներն անյիշելի ժամանակներից չափազանց շատ են սարսափահար եղած: Այսպէս է և բնածին երկիւղը. օրինակ՝ կենդանին առաջին անգամն է տեսնում մի ուրիշ աւելի մեծ կենդանի, սարսափահար վախչում և թագնուում է նրանից: Այս էլ նոյն տեսակ երկիւղ է. սրա մէջ էլ նոր բան չըկայ:

Մեծ հոգացողութեամբ պէտք է հետևել, որ երկուութիւնը խոր արմատներ չարձակէ մարդու մէջ. որովհետև ամենազօրեղ ներգործութիւն է ունենում նրա ամրոջ էութեան վրայ, նրա բոլոր ֆիզիքական և հոգեկան գործունէութեան վրայ:

Առաջ բոլոր զօրեղ զգացումները, կամ ինչպէս անւանում են յուզմունքները (աֆֆեկտ), երկու կարգի էին բաժանում՝ ճնշող և գրգուղ: Առաջին խմբին էին վերագրում երկիւղը, սարսափը, տիրութիւնը, յուսահատութիւնը, երկրորդ կարգին՝ բարկութիւնը, ուրախութիւնը, վրէժինդրութիւնը և այլն: Ներկայումս ընդունում են, որ յուզմունքները մարդու վրայ ունին խառն ներգործութիւն՝ մասամբ ճնշող և մասամբ՝ գրգուղ, նայած իրենց զօրեղութեան և լարման աստիճանին. այդ պատճառով էլ նախկին բաժանումն անկանոն է, եթէ այդ հասկանանք խիստ բառացի: Բայց

և այն անկասկած է, որ մի քանի յուզմունքների մէջ զերակշում են գրգուղ տարրերը, իսկ միւսների մէջ՝ ճնշող: Վերջինների թւին է պատկանում և երկիւղն իր մասնաւոր կերպարանափոխութիւններով և առանձնակի ձևերով:

Մարմաւոր կեանը վրայ արած երկիւղի գլխաւոր ներգործութիւններից է նրա առաջացրած խոչընդուները և խանգարումները շարժողութիւնների դէմ, որ լինում են բազմատեսակի:—Շարժողութիւններն երբեմն զօրեղանում են և մկանունքներն աւելի ուժով են կծկում քան թէ սովորական պայմաններում, երբեմն էլ շարժողութիւնները թուլանում են, երկան են գալիս արենատար երակների և մկանային ուրիշ գործարանների յոգնածութիւն և զանդաղկոտութիւն. Երբեմն էլ շարժողութիւններն ոչ զօրեղանում են և ոչ էլ թուլանում, այլ կատարում են անկանոն՝ ոչ միանման և հաւասար չափով. այդ պատճառով մկանունքների փոխադարձ ներգործութիւնը լինում է ոչ բաւականաչափ պարզ: Զօրեղ երկիւղի հետևանքը սովորաբար լինում է մկանունքների կամաւոր շարժողութիւնների կարկամութիւն, երակային՝ և առ հասարակ բոլոր օրգանական մկանունքների ցնցում: Սաստիկ երկիւղից մարդ մնում է անշարժ, քար է կտրում, կարծես գետնին է միաւում: Զայնական մկանունքների կաթւածածարութեան պատճառով դժւար կամ անկարելի է լինում բառ անգամ արտասանել, ձայնը կերկերում, ընդհատում է, լեզուն չի դառնում, երկիւղից պալանձում է: Միենայն ժամանակ երեսը կախ է ընկնում.

կափիչ մկանունքների կաթւածահար լինելուց՝ աչքերը մեծանում են, չուռմ, մնում անշարժ։ Յանկարծական երկիւղով սարսափահար եղածը կարող է վայը ընկնել, ինչպէս կաթւածահար. կամ թէ մկանունքների գործունէութիւնը լինում է անկանոն, ընդհատ-ընդհատ, այդ պատճառով մարդը կապէ ընկնում, դողում է, կակազում։ Եթէ երկիւղը չի հասնում սոսկումի աստիճանի, երբ մկանունքներն ընդարձանում են՝ այն ժամանակ առաջնում է ցնցուների նման արագ շարժողութիւններ. մարմնի որոշեալ մասերը միենոյն ժամանակ երբեմն՝ կծկում են, երբեմն մնում են անշարժ, կարծես ընազդմամբ կամենում են թագնել, այդ պատճառով կարծես մարմինն էլ կարճանում է։ Հետապնդումից փախչող մարդը գլուխը խոնարհեցնում է. ճիշտ են նմանեցնում նրան շանը, որ միենոյն պարագայում պոչը պահում է ոտների արանքում։ Երկիւղն ազգելով կորացնող մկանունքների վրայ, ստիպում է ամբողջ մարմինը կորանալու։

Երկիւղի ժամանակ մկանային երակները ճնշող ցնցողական կծկումը և դրանից կախւած կաշու սակաւարիւնութիւնն առաջացնում են գունատութիւն, սարսուռ—ամբողջ մարմնով սարսոսց, արիւնը երակներում սառեց։ Բացի դրանից՝ վախեցածին պատում է քափութրտինք. բայց այդ սառը քրտինք է, որի կաթիւներն երկում են ճակատի վրայ։ Երկիւղը արագացնում է սրտի գործունէութիւնը, իսկ սաստիկ երկիւղը կաթւածահար է անում սիրտը, որից կարող է առաջանալ յանկարծական մահ։ Սաստիկ երկիւղի ժա-

մանակ կաշու արեան չափազանց պակասութիւնից մազերն արագ ճերմականում են, թափւում են։ Իտալացի բնախօս Մանտէգացցան պատմում է, թէ մի գիշերւայ մէջ ճերմակեցին գաղաններ զսպող ֆայլորու մազերը, երբ նա ստիպւած էր վանդակից իր վրայ յարձակող կատաղի առիւծի դէմ կեանքի և մահւան կուի վարել։ Անցեալ դարու եօթանասուն թւականներին ֆրանսիական մի քաղաքում մի տուն է կործանւում. այդ տան բնակիչներից մի աղջիկ գերանից ամուր բռնած՝ մնում է կախւած, մինչև նրան ազատում են։ Այդ դէպքից մի քանի օր անցնելուց յետոյ՝ աղջկայ գլխի մազերը, յօնքերը, արտևանունքը և ամբողջ մարմնի մինչև վերջին մազը թափւում են։

Երկիւղն ազդում է և աղիքների վրայ։ Պատերազմում կուի մօտեցած ժամանակ երիտասարդ զինուորները կարիք են զգում շարքելից դուրս գալու։ Երկիւղի ժամանակ բաւական շուտ զգացւում են աղիքների և ստամոքսի մէջ ծակոցների հետ միասին ցընցումներ և կծկում։

Ոիրօն հետևելով լանգէին, այսպէս է բնորոշում երկիւղի արած Փիզիքական ազդեցութիւնը։

1. Երկիւղն առաջացնում է մկանունքների կամաւոր շարժողութիւնների թուլութիւն, ջղաձգական սարսուռ. ծայրահեղ դէպքերում՝ շարժողութեան միանգամայն ընդհատում—վախեցածը մեխւում մնում է անշարժ իր տեղում. ձայնը խոպոտում կամ կերկերում է, կամ թէ՝ բոլորովին պապանձւում. ընդհանուր առմամբ առաւել կամ նւազ չափով նկատում է կա-

մաւոր մկանունքների կաթւածահարութիւն:

2. Սերական կեանքի մկանունքներում դադարում է կաթի, դաշտանի, լորձունքի արտաթորումը: Բերանը չորանում է, լեզուն կպչում քմքին. սառը քրտինք է գալիս, մարմինը փշաքաղում, մաղերը ցցւում, շունչը կտրւում, կուրծքը նեղուում է, կոկորդը ճնշուում է: Յայտնի է արդէն երկիւղի ազգեցութիւնը աղիքների արտաթորութիւնների վրայ:

3. Երակաշարժ գործարաններում նկատւում է արենատար խողովակների անձկութիւն, իսկ սաստիկ զօրեղ տպաւորութեան ժամանակ՝ սրտի կաթւած, որի ահետևանքը կարող է լինել մահ. վերջապէս դալկութիւն և պերիփերիական սակաւարիւնութիւն:

Երկիւղն ոչ սակաւ ազգեցութիւն է անում և հոգեկան գործունէութեան վրայ: Երկիւղն ամենից առաջ և անմիջապէս արգելք է լինում բարոյական զարգացման, ազնւաբարոյութեան, վսեմ տրամադրութիւնների և զգացումների:

Յաձախակի երկիւղ զգացող մարդը շարունակ մտածում է իր անձի ապահովութեան մասին, աւելի կոտիտ խօսքով ասած մտածում է իր սեփական «կաշուի» մասին: Երկոտ մարդն իր սեփական անձի մէջ շունկմւած՝ շուրջը տեսնում է միայն թշնամիներ, ուրոնցից իր մի կողմի դիրքը դեռ չը պաշտպանած և չամրացրած, սպասում է յարձակում մի ուրիշ կողմից: Նա ժամանակ չունի գլուխը վեր բարձրացնելու, նայելու Աստուծոյ աշխարհի և մարդկանց վրայ, ապրել հասա-

րակական համաշխարհային կեանքով, հասկանալ ուրիշների կացութիւնը, մտնել նրանց դրութեան մէջ: Նա չափազանց զբաղւած է իր անձով. խճաւել է անձնական շահերով, միայն նրանց մասին է մտածում և երևակայում, գիշերն էլ նրանց մասին երազ տեսնում: Եւ երկոտը չի կարող ըմտածել իր մասին—չես մտածի, չես էլ պաշտպանելի յանկարծահաս փորձանքից, մին էլ տեսար հարւածն եկաւ զիսիդ:

Երբ անհատն այսպիսի վիճակի մէջ է գտնւում, նրա բարոյական զարգացումը, ազնիւ ձգտումները, վսեմ զգացումները չեն կարող իրենց բարգաւաճման համար բաւականաչափ հաստատուն հող պատրաստել: Եսականութիւնը նրա մէջ արձակում է խոր արմատներ և խեղդում ու ցամաքեցնում այն ամենը, ինչ որ չի վերաբերում նրա անձնական ապահովութեան, անձնական շահին: Թէ ինչ աստիճանի կորստաբեր ազգեցութիւն ունի երկիւղը բարոյականութեան վրայ, ոյդ մեղ յայտնի է պատմութիւնից: Տերրօրի շրջանում հասարակութեան բարոյականութեան անկման մասին ունինք բազմաթիւ վկայութիւններ. ծնողները մատնում էին իրենց զաւակներին, որդիները ծնողներին, այրերն իրենց կանանց, կանայք իրենց ամուսիններին: Այսպէս էր և Հոռմում Սուլլայի հալածանքների ժամանակ (պրօսկրիպցիա): Այդպիսի ժամանակներում ամենահաստատուն բարոյական կապերը քակտուում են, հասարակութեան զարաւոր հիմքերը խորտակուում, մարդիկ առանձնանում են, բաժանուում են միմեանցից և իրաքանչւրն սկսում է ապրել միայն

իր համար. միայն ինձ չըմսասեն, ուրիշներին ինչ լինելու է, թող լինի: Կարելի է հաստատապէս ասել, որ սաստիկ երկիւղն ուղղակի ապականում է մարդուն, նրա ազգեցութեան ներքոյ մարդը հրաժարւում է իր նւիրական համոզմունքներից և հայեացքներից, այն ամենից, ինչ որ սուրբ է իր համար. «կաշուի» խնդիրը գերակուում է միւս բոլոր շահները: Ի հարկէ, գտընւում են մարդիկ, որոնք չեն ենթարկւում երկիւղի ձնշման, բայց մենք խօսում ենք մեծամասնութեան՝ ամբոխի մասին և ոչ նրա հերոսների մասին:

Ըստ երեւութիւն երկիւղի ազգեցութիւնը մտածողութեան վրայ աւելի սակաւ վնասաբեր է, բան թէ բարոյական զարգացման վրայ. բայց այդ ըստ երեւոյթին է, երկիւղը մտածողութեան չի խանգարում միայն այն ժամանակ, երբ երկիւղալի առարկան հեռու է գտնւում մեզանից և մեր մէջ բաւական ոյժ կայ, հետեւաբար այն ժամանակ՝ ոչ առանց պատճառի՝ կարող ենք յոյս դնել, թէ սպառնացող վտանգը մեզ չի շօշափի, զանց կանի: Ուրիշ խօսքով երկիւղը չի խանգարում մեր մտածողութեան այն ժամանակ, երբ համարեա երկիւղ չըկայ, միայն կայ վախի սակաւ ինչ կասկած, որն ըստիպում է մեղ կենտրոնացնել մեր ուժերը յայտնի առարկայի վրայ որոշ նպատակի հասնելու համար:

Բոլորովին այլ կերպ է ազդում մտածողութեան վրայ իսկական մերձաւոր, մեծ երկիւղը: Նա շփոթում է միտքը, անդադար հեռացնում է նրան մտածողութեան առարկայից, տանում է դէպի երկիւղի առարկան, այսինքն դէպի այն անհանոյ հետեւանքները, որոնք

անպատճառ տեղի կունենան անյաջողութեան դէպում, միտքը բաժանուում, ցրւում, գործը առաջ չի գնում, գլխի մէջ տիրում է խարնափնթորութիւն, չըքանում է երեակայութիւնը, կորչում յիշողութիւնը, և խելացի մարդն սկսում է խօսել և անել տխմարութիւններ: Խելացի, լուրջ և խորին մտածողութեան համար անհրաժեշտ է հոգեկան հանգստառութիւն և մարդուն յատուկ մարմնական և հոգեկան ուժերի լրիւներկայութիւն. իսկ երկիւղը ոչընչացնում է հանգստութիւնը, տոաջացնում է անհանգստառութիւն, շփոթութիւն, վրդովմունք և մտքի անկարգ թոփքներ զանազան կողմեր, և միւնյոյն ժամանակ թուլացնելով ֆիշիքական կազմուածքը, ընդարմացնելով շարժողութիւնները, խանգարելով արեան շրջանադարձութիւնը՝ խորտակում է մարդու բոլոր մարմնական և հոգեկան կարողութիւնները: Սաստիկ երկիւղի ազգեցութեան ներքոյ մարդ մոռանում է այն, ինչ որ շատ լաւ գիտէր. չի կարողանում մակաբերել ամենահասարակ բաներ, մինչև անգամ չի կարողանում շարժողութիւններ անել. սաստիկ վախեցածը ստանում է ֆիզիքական և հոգեկան կաթուած. երկչուր կորցնում է ունեցած ֆիզիքական և հոգեկան կարողութիւնները: Դըպուցում դիտեցէք այն երեխային, որը վախենում է վատ թուանշան ստանալ. նա ծածուկ երեսը խաչակնքում է, երբ սպասում է, թէ ուսուցիչն իրեն դուրս կըկանչէ դաս հարցնելու. աղօթք է մրմնջում, երբ դրաւոր աշխատանքը ներկայացնում է ուսուցչին. երբ դուրս է գալիս վրատախտակի առաջ կամ դասարանի 2

մէջտեղը դաս պատասխանելու՝ շփոթւում է և չի կա  
րողանում պատասխանել այն գասը, որ քիչ առաջ շատ  
լատ գիտէր. նրա կերպարանքն արտայայտում է  
վիշտ և տանջանք: Իերենք մի օրինակ, ուր բաւական  
մանրամասը և ճշտութեամբ նկարագրուած է, թէ ինչ-  
պէս է ազգում երկիւղը մարդու ամբողջ ֆիզիքական  
և հոգեկան դրութեան վրայ:—

Մի երեխայ մանկական կանուխ հասակից աչքի  
էր ընկնում իր մտաւոր կարողութիւններով, առանձ-  
նապէս իր գիտողական ընդունակութիւնով: Երեխայի  
մօտ կարգացած ժողովրդական հէքիաթները վեց տա-  
րեկան հասակից այնպէս սարսափելի կերպով ցնցում  
են նրա ամբողջ էութիւնը, որ ընթերցանութեան ժա-  
մանակ, երբ հասնում էին հէքիաթի սարսափ ազդող  
տեղերին, նա գունատուած փախչում էր, խնդրելով  
որ իրան իմաց տան, երբ վերջանայ ահարեր հատուա-  
ծի ընթերցանութիւնը: Այս մանուկը զիշերները գըլ-  
խացւից յաճախ արթնանում էր գունաթափուած:  
Այդ դրութիւնը վերջանում էր փսխումով և խորը քը-  
նով: Վերջ տալով հէքիաթների ընթերցանութեան, վեր-  
ջացւ և երեխայի հիւագոտ դրութիւնը. տասը տարե-  
կան հասակում նոյն երեխային տուին զինուորական  
դպրոց իբրև երթեկ աշակերտ: Զինուորական խիստ  
կեանքի ազգեցութիւնից նա ստացաւ ականջի հիւան-  
դութիւն: Առողջանալուց յետոյ սկսում է յաճախել  
դպրոց. դպրոցում աղմուկից գլուխն սկսում է պտոյտ  
գալ. նրան միառժամանակ պահում են տանը, թոյլ  
չեն տալիս դպրոց յաճախելու. բայց երեխան անհան-

գստանում է, երկիւղ կրելով դասերից յետ մնայ. նա  
ուսանելու մեծ փափագունէր: Վերջապէս մօրից թոյլ-  
տութիւն է ստանում դպրոց գնալու և շտապելով որ  
դասի սկզբին այնտեղ լինի, չի հասցնումնոր ու հաստ  
մահուղից կարած վերարկուի բոլոր կոճակները կոճկել,  
թէ և մայրն էլ է օգնում, բայց չի կարողանում, նա մօ-  
րը խնդրում է չուշացնէ իրեն, որպէսզի մինչև դասի  
սկիզբը մնացած տասն ըսպէից օգտուէ, դպրոցում  
համբ քարտէզի վրայ աչքի անցնէ արդէն սովորած աշ-  
խարհագրութեան դասը: Որովհետեւ տունը հեռու չէր  
դպրոցից, հարկաւոր էր միայն անցնել զինուորական  
մարզանքի հրապարակը (ուլաց), ուստի մարդը չէ  
ընդգիմանում, թոյլ է տալիս մէր չըճգել մնացեալ կո-  
ճակները: Հիւանդութիւնից յետոյ տղայի գլխարկը նեղ  
էր գալիս ուլիմին, տուել էին նորողելու, լայնացնելու,  
ուստի նա գլխին դնում է իր մեծ եղօր հին գլխար-  
կը, որի կազիրոկը հազիւ երկում էր:

Զինուորական մարզանքների հրապարակում երե-  
խան պատահում է բարձր դասարանների աշակերտ-  
ներին, որոնք զրօնում էին այդ տեղ հերթապահ վե-  
րակացուի հետ: Վերջինս բարձր ձայնով հրամայում  
է տղային մօտենալ իրեն: Այս քաջամարտիկ սպան  
սկսում է ամենախիստ խօսքերով յարձակուել այդ տասը  
տարեկան երեխայի վրայ, որ հազիւ նոր ծանօթացել  
էր զինուորական կարգապահութեան. «ինչո՞ւ վերար-  
կուիդ բոլոր կոճակները չեն մէր ձգած: Այդ ի՞նչ գըլ-  
խարկ է դրածդ: Դուք կադէտ չէք, այլ ցնցուտիազգես-  
տի մէկը», ու այդպէս սկսում է գորգոռալ երեխայի

վրայ. մինչ այս մինչ այն, անցնում է 10 րոպէն, ուրից կամենում էր օգտուել երեխան դասը համբ քարտէզի վրայ կրկնելու: Վերակացուի գորգոռոցն այնպէս վախցնում է զգայուն երեխային և վիրաւորում նրա ինքնասիրութիւնը, որ այդ աեսարանին ներկայ գտնող բարձր դասարանների աշակերտները տեսնելով տղայի տանջանքը՝ խղճում են նրան, իսկ վերակացու սպան ոչինչ չի նկատում, շարունակում է աղաղակել: Դասարան մտնելուց յետոյ երեխայի հետ սկսում է հիստէրիկային լաց ու հեկեկանք, որ տեսում է բոլոր դասերի և դասամիջոցների ընթացքում, երբեմն մեղմանալով, երբեմն սաստկանալով: Դասերից յետոյ տուն վերադառնալով, կրկնն սկսում է լաց ու հեկեկանքը, հեծկլտանքով հազիւ կարողանում է բացատրել իր հետ պատհած դէպքը: Նրան մի կերպ հանգստացնում են, բայց տիրութիւնը չի անցնում. զիշերը լաց ու կոծը կրկնում է: Դրանից յետոյ ամեն անգամ, երբ իշխանաւորները, այսինքն վերակացուները որևէ է հարցումով դիմում էին նրան, մինչև անգամ եթէ ձայները բարձրացնում էին կամ թէ ուսուցիչները դուրս էին կանչում դաս հարցնելով՝ տղային տիրում էր ահ ու դոդ, կարկամում մնում էր: Որքան էլ լաւ իմանար դասն, այնուամենայնիւ ուշքի գալու և պատասխանելու համար հարկաւոր էր լինում մի երկու րոպէ: Ուսուցիչներից շատերն այդ դրութիւնը վերագրում էին նրա դաս չիմանալուն, բայց նրա գիտութեանն իբրև վկաներ կարող էին լինել այն ընկերները, որոնց նա բացարում էր դասը, և որոնք աւե-

լի բարձր թուանշան էին ստանում, քանթէ նրանց բացատրողը: Տղան ինքն լաւ հասկանում էր, որ դասը որքան էլ լաւ պատրաստած լինի, այնուամենայնիւ չի կարող հանդիսան լինել. սպասելով թէ ահա այս է՝ իրեն դաս կը հարցնեն, սկսում էր վրդովուիլ և յուզուիլ: Այդ սարսափելի դրութիւնը թունաւորում էր նրա դրոցական կեանքը և սառեցնում նրա մէջ ուսման սէրը: Բայց այդ դրութիւնը սկսում է փոքր առ փոքր անցնել. նա սկսում է աւելի ջանասիրութեամբ ուսանել: միայն մի դժբաղդ դէպք նորից ամեն բան տակն ու վրայ է անում, սկսում է հին պատմութիւնը:

Մէկ անգամ դաս պատասխանելու ժամանակ «Նովգորոդը» սխալմամբ անուանում է «Նիժնի-Նովգորոդ»: Ուսուցիչը կամենալով հնարաւորութիւն տալ աշակերտին ուշքի գալու, հրամայում է կրկնել: Տղան վրդովմունքից շփոթուած՝ կրկնում է նոյն սխալը: Ուսուցիչը ձայնը բարձրացնելով գոռում է. «Կրկնեցէք նորից»: Երեխան վրդովմունքից դարձեալ նոյն սխալն է անում: Ուսուցիչը զայրացած՝ հրամայում է. «Քացէք գիրքը և կարդացէք»: Կատարելով պատուէրը յուզուած երեխան կարդում է. «Նիժնի-Նովգորոդ»: Վերջապէս ուսուցիչը տեսնելով, որ տղան այլայլուած է, ասում է, գնացէք: Այդ դէպքից յետոյ նոյն գիշերը կրկնում է երեխայի նախկին հիւանդութիւնը (զլխացաւը և փսխումը): Մօքը յայտնում է, որ ուսուցչի վրայ նեղացած չէ, ինքն ակամայից պատճառ եղաւ ուսուցչի բարկութեան. չըկարողացաւ դասը պատասխա-

նել, որովհետև ահ ու սարսափը տիրել էր իրեն։ Այդ գրութիւնից ազատուելու համար մայրը խորհուրդ տուեց դասը պատրաստել 12 թուանշանի և համոզուած լինելու համար թէ գիտէ, թող նոյնը կրկնէ մեծ եղբօր հետ։ Տղան այդպէս էլ արեց, դասը սովորեց բոլորովին անսխալ. միքանի անգամ նոյնը եղբօրը համար տուեց։ Առաւտեան բոլորովին հանգիստ գնաց դպրոց, որտեղ առաջին դասերն անցան յաջող։ Ուսուցչի գալուց առաջ կամեցաւ ճշտել անսխալ սովորած դասը, որովհետև արդէն սկսել էր յուզուիլ. և դասը կրկնելով, յոյս ունէր թէ վրդովմունքը կանցնէ, բայց սոսկումը միրեց, երբ տեսաւ, որ սովորած դասից ոչ մի բան չի յիշում։ Յուսահատ դրութեան մէջ վաղեց մեծ եղբօր մօտ եղբայրը նկատելով նրա դրութիւնը, խնդրեց վերակացուին՝ տղային աղատել դասերից և թոյլ տալ տուն գնալու։ Երեխան տուն վերադառնալով, սարսափահար կրկնում էր, թէ բոլորովին ոչինչ չի յիշում, ոչ ժամանակը, ոչ էլ թէ ինչ է պատահել։ Նա ընկճուած, սարսափահար և յուսահատ էր։ Համարեա անզգայ անկողին է մտնում։ Իսկոյն սկսում է սաստիկ գլխացաւ. հիւանդն անհանգստութեամբ այս և այն կողմն է շուռ ու մուռ գալիս, տնքում է, փըսխում, ապա երկարատև խոր քուն մտնում։ Երեկոյեան ուշ գուրս է գալիս իր սենեակից շշմած դրութեան մէջ։ Նրան այլևս թոյլ չեն տալիս դպրոց գնալու. բժիշկը սահմանափակում է նրա զբաղմունքների ժամանելը, թոյլատրում է միայն չափազանց կարճատև զբաղմունք։

Տղան մնում է նոյն դասարանում, բայց և բոլորովին առողջանում է, թէն երբ դուրս էին կանչում դաս պատասխանելու, դարձեալ յուզում և իրեն կորցնում էր, որը շարունակուեց և իւնկերների ուսումնարանում, մանաւանդ նոր մտած ժամանակներում։ Բայց երբ հետզհետէ նրանց ցոյց տուին բարեկամական և բարեհաճ վերաբերմունք, սկսեց պատասխանել դասերըն աւելի հանգիստ և ստանում էր բարձր թուանըշաններ։ Այս տղան ընդհանրապէս առողջ էր և փիզիքապէս ամրակազմ։

Այս մէջ բերածս դէպքը շատ հետաքրքիր է, որովհետև միքանի կողմերով բնորոշում է դպրոցը և ընտանիքը. բայց մեզ համար կարեոր է ուրիշ կողմից։ Նա ամենավատ գոյներով պատկերացնում է մեր առաջ երկիւղի խորը և կորսարեր ազգեցութիւնը մարդու ֆիզիքական և հոգեկան բոլոր գործունէութեան վրայ։ Այս դէպքում երկիւղն առաջացնում է մարմնական և հոգեկան անմիջական խանգարում—փսխում և գլխացաւ, զրկում է յիշողութեան և մակարերութեան ընդունակութիւնից. պատճառում է խիստ անհանգըստութիւն՝ տակն ու վրայ անելով երեխայի կեանքը. Երեկոյեան սովորած դասը՝ առաւտեան բոլորովին մոռացում է, տղան մինչև անգամ կորցնում է տպած գրքի վրայ կարգալու ընդունակութիւնը։ Զը պէտք է կարծել, թէ այս մի բացառիկ դէպք է և չի կարող ծառայել իբրև փաստ երկիւղի ազգեցութեան ընդհանուր ապացուցութեան համար. ընդհակառակն սա մի ամենասովորական դէպք է, բացառութիւն չի ընդհա-

նուր օրէնքից, այլ ինքն օրէնքն է:

Սաստիկ երկիւղից առաջանում են զանազան հիւանդութիւններ, իսկ երբեմն՝ մահ: Երկիւղի պարգացման մէջ առաջնակարգ տեղ է բռնում երեակայութիւնը: Ուսուցչապետ Բենէտը պատմում է մի մսագործի հետ պատահած հետևեալ դէպը: Մսագործը կամենում է մսի մի ծանր կտոր կախել կեռից, ոտքը սայթաքում է, ինքն թեկից կախ է ընկնում կեռից: Նրան ազատում են կեռից և տանում են դեղագործի մօտ, որովհետեւ գանգատուում էր մսատիկ ցաւից: Բանից դուրս է գալիս, որ կեռը պատառել էր միայն նրա հանդերձի թեկը, իսկ կուռը բոլորովին անփաս էր: Մինչդեռ մսագործը չէր դաշտարում գոռալուց, գանգատում էր կուան ցաւից այն ժամանակ, երբ վէրքը նայելու համար կտրատում էին հանդերձի թեկը:

Բուդիբօն անունով մէկը մասնակցում էր Վագրամի մօտ պատերազմում: Մինչեռ նա զբաղուած էր հրացանը լցնելով, մի ոռումք գալիս շօշափում է նրան և անցնում ոտների մօտով: Բուտիբօնը կարծում է, թէ ոռումք ծակել անցել է ծախից աջ սրունքների մօտով և նրանց փեցրել է ազգըներից: Նա գլորում նստում է գետնին. նրա զգացողութիւնները կաթուածահար են եղած լինում: Այդպէս նստած դրութեան մէջ մնում է գիշերուայ մի մասը, վախենալով ամենաաննշան շարժողութիւն անզամ անել, որպէսզի դրանից չառաջանայ վտանգաւոր հետևանք: Նա առանձին ցաւ չէր զգում և այդ անզգայութիւնը վերագրում է առհասարակ իր ուղեղի նեարդային համակարգութեան

ցնցման «Ընկերներս փոռւած էին շուրջս, ասում է նա, նրանք ցաւից կծկում էին, իսկ ես չէի համարձակուում խօսել, զնշալ անգամ և անել որևէ է շարժողութիւն. երկիւղ էին կրում, թէ շարժողութեամբ կը բացուեն կտրատուած արեան երակները, կսկսուի մահաբեր արիւնհոսութիւն: Հետևեալ օրը արշալուսին անհանգիստ քնից ինձ արթնացընց բժիշկը, որ եկել էր վիրաւուրուածներին օգնութիւն հասցնելու: «Ի՞նչ է պատահել, ընկեր», հարցընց ինձ: «Ա՛խ, ինդըում եմ ձեզ, զգոյշ շարժեցէք ինձ, ոռումք ոտներս պոկել տարի է», Նա սկսեց զննել աղլբներս և սրունքներս. կտակով խփեց ինձ և, բարձրածայն ծիծաղելով, ասաց. «Կանգնեցէք, դուք առողջ էք»: «Ես վերկացայ, ոտքերիս վրայ կանգնած էի ամուր, այն ոտքերիս, որ ես յաւիտեան կորած էի համարում: Ես ոչ մի վէրք չէի ստացել: Խսկապէս ինձ գետին էր գլորել ոռումքը, բայց ինձ չէր վիրաւորել, այլ գետինը ճղելով, անցել էր ոտներիս տակով. փորել էր գետնի մէջ մի ոտնաչափ խորութեամբ փոս, որի մէջ և ես վայր էի գլորուել, և այդ իմ մէջ առաջացընել էր այն զգացողութիւնը, իբրև թէ ոռումքն ոտներս պոկել տարել է»:

Ահա այդպէս, երկիւղը կարող է առաջացնել բաւական երկարատե կեղծ զգացումներ ու զգացողութիւններ, մինչև անգամ այնպիսի սաստիկ զգացողութիւններ, ինչպէս ցաւն է:

Հետևաբար երկիւղն այնպիսի զգացում է, որի մէջ գերակռում է ճնշող յատկութիւնը: Երկիւղն իր զարգացման ընթացքում գրգռում էլ է, բայց և այն-

պէս այդ ըոպէները լինում են կարճատև, որոնց հետևում է ուժերի չափազանց սպառում և անկում: Երկիւղի էական յատկութիւնն է՝ ճնշել գործունէութիւնը: Երկիւղի ընթացքում բարձրացող մէկ ալիքին հետևում են ուրիշ տասնաւոր ալիքներ, որոնք գործունէութեան ոյժը ցածրացնում հասցնում են զրօյի և, վերջապէս, ուղղակի ընդհատում են կենսական գործառութիւնը: Այդպէս է երկիւղի աղղեցութիւնը. մինչեւ դաստիարակութիւնն ժամանակ անդադար դիմում են երկիւղի օգնութեան, իբրև գործունէութիւն գրգռող մի խթանի, որով առաջ են վարում ծոյլ ձիուն: Երկիւղի վրայ նայում են բոլորովին սիսալ հայեցակետով, քան թէ հարկաւոր է նրա վրա նայել: Ի՞նչպէս է պատահել, որ երկիւղի մասին հասկացողութիւնը այդպէս յեղաշրջուել է և ընդարձակ գործածութիւն դտել կեանքի և դաստիարակութեան մէջ:

Դ.

Թէ ի՞նչպէս երկիւղն արգելում է ոչ ցանկալի գործողութիւնները եւ թէ ի՞նչպէս կարելի է այդ գործողութիւններն արգելել: — Երկիւղով չի կարելի պահպանել եւ զօրացնել լաւ յատկութիւնները: — Ի՞նչ է ազնիւ երկիւղը:

Երեխային կամ թէ հասակաւորին որևէ երկիւղան երկու նպատակ ունի—արգելել ճնշել, հեռացնել միքանի գործողութիւններ, որոնք որևէ պատճա-

ոով ցանկալի չեն, և գրգռել, պահպանել ու զօրացնել այնպիսի գործողութիւններ, որոնք որևէ պատճառով ցանկալի են: Առաջին տեսակի երկիւղի աղղեցութիւնը բացասական բնոյթ ունի, երկրորդինը՝ դրական: Քննենք երկու տեսակի աղղեցութիւնն ևս գործունէութեան վրայ:

Ի՞նչ է ճնշանակում երկիւղով արգելել գործունէութիւնը: — Կնշանակէ մարդու ընդհանուր կենսունակութիւնը և եռանդը նուազեցնելով՝ աշխատել որոշեալ գործողութիւնների առաջն առնել: Երկիւղը, ի՞նչպէս գիտենք, ջլատում է մկանունքների կամաւոր և ակամայ շարժողութիւնները, խանգարում է արեան շրջանագարձութիւնը, կաշկանդում է միտքը, թուլացնում է յիշողութիւնը, առաջին տեղը տալիս անձնական շահերին: Այդ բոլորը միասին առած՝ կազմում են մարդու կենսունակութեան նուազումը: Երկիւղն իբրև թէ ընդհանուր կազմուածքի վրայ պէտք է ունենայ այնպիսի աղղեցութիւն, որ համապատասխան է բնաւորութեանն այն առանձին նպատակի, որին ձգտում ենք այս կամ այն գործողութիւնն արգելելու ժամանակ. օրինակ հարկաւոր է որոշեալ գործողութիւն արգելել, ձեռք են առնում միջոցներ, որոնք անկասկած, արգելում են բոլոր գործունէութիւնները, նուազեցնում են կազմուածքի ընդհանուր կենսունակութիւնը: Նպատակի և միջոցի մէջ համապատասխանութիւն կայ, բայց շատ անորոշ և ընդհանուր, հարկաւոր է արգելել որոշ գործողութիւն, սակայն արգելում է կազմուածքի ամբողջ գործունէութիւննը. այդ

սքանչանում են, թէ ինչպէս նախկին աւազակն իրեն հանգիստ է պահում: Երկիւղն ու պատիժը վերջապէս խելքի բերին, ասում են նրա մասին. ճէ, երկիւղն ամենաօգտակար և վրկարար միջոցն է, ում ասես խելքի կըբերի, անդարձ մեղաւորին դարձի կըբերի: Ահա այդ տեղից է ծագում երկիւղով դաստիարակութեան հաւատքը. երկիւղն ընդունում է իրրկ մի գործունեայ սկզբունք, որ վերակենդանացնում և վերածնում է մարդու յանցաւոր բնաւորութիւնը:

Այդ տեսակ հաւատքից էլ անմիտ և անհեթեթ բան դժուար է երևակայել: Այդպէս մտածել, կընշանակէ չընականալ, թէ ինչ է երկիւղը, ինչպէս է ազգում մարդու վրայ: Երկիւղը ջլատում է մարդու մարմնական և հոգեկան եռանդը, նուազեցնում է նրա կենսունակութիւնը. իսկ կենսական եռանդից ինչ կարող է ասելի վսեմ և թանգագին լինել, Եթէ նա անարժեք է, ուրեմն նրա մասին խօսել էլ չարժէ: Այդպէս, որկ է գործողութիւն արգելելու համար առանց տատանուելու՝ երկիւղի ներգործութեամբ մարդու ամբողջ կենսունակութիւնն են նուազեցնում: Այդ ճիշտ նման է առածին, թէ «բարկացաւ ոջիների վրայ, մուշտակը կըակը ձգեց», որ կընշանակէ որկ է գործարանի թեթև հիւանդութիւնը բժշկելու համար՝ ամբողջ կազմուածքը սպանող զօրեղ թոյն տուլ. կամ թէ՝ քո սանցրուածքն ինձ գուր չի գալիս և չիս կարողանում կարգին սանցրուել, ուստի ամենալաւն այն է, որ զլուխտ կտրենք: Այս խօսքերն ամենեին չափազանցութիւն չըպէտք է համարել. եղել են դէպեհը, որ չար երեխային սաստելու համար՝ նրան փակել են

պատճառով երկիւղով ազդելու ժամանակ յաճախ առաջանում է անյաջողութիւն—ցանկացած առանձին գործողութիւնը ոչ թէ արգելում է, ընդհակառակն կըկնում է: Մարդու կենսունակութեան ընդհանուր նուազման և մասնաւոր գործողութիւնն արգելելու մէջ որկ է տրամաբանական կապ չըկայ. հարկ է լինում այդ կապը հաստատել արուեստական կերպով. իսկ այդպիսի արուեստական կապն ամենեին համոզեցուցիչ չէ և այդ պատճառով էլ շուտով քակտում է: Պատճառում է որկ է չար երեխայի պատիժում են, պատժում են նրա չարութիւնների համար և այնուամենայնիւ չեն կարողանում ճնշել նրա չարաճճիութիւնը. չարաճճին շարունակում է իր չարութիւնները: Չարկ է լինում պատիժն անդադար խստացնել ու խստացնել, այսինքն՝ չարաճճի երեխայի ընդհանուր կենսական գործունէութիւնն աւելի ու աւելի նւազեցնել, մինչև որ, վերջապէս, օրդանական եռանդի ընդհանուր նուազումն ազդէ և չարութեան նուազման վրայ: Հնումն այդ միջոցն անուանում էին «կոտրել» չար համբակին «կարգապահութեան խիստ պատիժներով նրան խելքի բերել» և այլն: Այդպէս են վարում և հասակաւորի հետ—որկ է գողի, թափառաշրջիկի, աւազակի ծեծում են, բանտում պահում, մինչև որ նա կըդադարէ գողութիւն անելուց, շրջմոլիկութիւնից, աւազակութիւնից, առհասարակ կըդառնայ անպէտք որկ է գործունէութեան՝ եռանդի և կենսունական ուժերի չափազանց ճնշուած լինելու պատճառով: Դրանից յետոյ նրան տեղաւորում են որկ է մի անկելանոցում և

մութ նկուղում և երեխան վախից ստացել է ապշութիւն, ընկնաւորութիւն կամ մեռել է։ Դեռ այնքան էլ շատ ժամանակ չի անցել, երբ զանազան դպրոցական հիմնարկութիւններում աշակերտներին ծեծի տակ կիսամահ գրութեան հասցըած՝ փոխադրում էին դըպրոցից ուղղակի հիւանդանոց։ Իսկ ներկայումս գանակոծութեան փոխանակ աշխատում են վախեցնել այլ և այլ միջոցներով, անգամ դժոխքով։ Զափազանց մեծ վայրենութիւն, անմտութիւն և անգթութիւն է՝ մի որև է գործողութիւն արգելելու համար՝ խորտակել մարդու ընդհանուր կենսական եռանդը։ Այդպէս վարուել նոյնիսկ կենդանու հետ՝ շահաւէտ չէ։ Այդ պատճառով արարացիք իրենց ձիերը կրթում են սիրով, գուրգուրանքով, առանց ծեծի։ Բժշկութեան միջոցը հարիւր անգամ վնասակար է հիւանդութիւնից։

Զանազան ոչ ցանկալի գործողութիւնները ձնշելու համար նախքան նրանց գէմ միջոցներ ձեռք առնելը, անհրաժեշտ է մօտիկից քննել և ճանաչել այդ ոչ ցանկալի գործողութիւնները կամ, ճիշտն ասած՝ բնաւորութիւնները։ Նրանք սովորաբար երկու կարգի հն բաժանում, որովհետև բղում են երկու տարբեր աղբիւրից՝ ուժի առատութիւնից ու նրա անկանոն ուղղութիւնից և երեխային շրջապատող միջավայրի անբարեյաջող ազդեցութիւններից։ Առաջին խմբի պակասութիւնները լինում են այս տեսակի—խստաըրտութիւն և կոռարարութիւն (տղաների մօտ), զգայնութիւն (սենտիմենտալիուն) և լացկանութիւն (աղջկանց մօտ), հապճեպ դատողութիւններ և գործողու-

թիւններ, մանր դէպքերին խիստ վերաբերմունք և այլն։ Երկրորդ խմբի պակասութիւններն են—կեղծաւորութիւն, ստախօսութիւն, պարծենկոտութիւն, գողութիւն և այլն։ Պարզ է, այդ արատները ձնշելու համար ձեռք առած միջոցները լիովին պիտի բղխեն մանկան կեսնքի մէջ ոչ ցանկալի յիշեալ երկոյթներն առաջացնալ պատճառներից և նրանց յատկութիւններից։

Առաջին կարգի պակասութիւններն ունին մի ընդհանուր պատճառ, այդ այն է, որ մանկան մէջ ամբարուած առատ ուժի մի մասն է միայն գործադըրւում կանոնաւոր գործառնութեան վրայ, այդ պատճառով մնացեալ մասն էլ ծախսւում է այն տեղ, որտեղ ամենակին պահանջ ըլկայ. օրինակ՝ մանուկը սրա նրա հետ կռւում, ծեծկռւում է, զրանից պարզ երկում է, որ նրա մէջ գեռ չըծախսուած ֆիզիքական ուժի և եռանդի առատ պաշար կայ, որը նա սիրով գործադըրում է կռուի վրայ։ Եթէ մանուկը բաւական չափով զրաղուել է ֆիզիքական աշխատանքով և մինչեւ անգամ յոգնել է, նա այլև չի մտածի կռուի մասին, նա կարիք ունի ֆիզիքապէս հանգստանալու և ոչ թէ ֆիզիքական ուժերը սաստիկ լարելու, որը պահանջում է կռուի համար։ Այն աղջիկն, որ յաճախ դէպք է ունենում ցաւակցելու ուրիշների վշտերին, թեթևացնում է նրանց թշուառ վիճակը գործով, մասն և բաժին հանելով նրանց իր զուարձութիւններից ու բաւականութիւններից, այդպիսին անձնատուր չի լինի ապարդիւն զգայնութեան և լացկանութեան, որովհետև աւելորդ եռանդըն արդէն ծախսուած կըլինի։ Ուժերին համապատաս-

խան օգտակար գործունէութիւնը մի շանթարգել է և հապճեպ դատողութիւնների, գործողութիւնների ու մասն դէպքերի խիստ վերաբերմունքին, նոյնպէս ընդգէմ այն բոլոր ոչ ցանկալի գործողութիւնների, որոնք առաջանում են չըծախսուած ուժի առատութիւնից, ուժի՝ որ չը գիտէ մանուկը, թէ որտեղ քործադրէ, ուր թափէ. այդ պատճառով էլ նա (ոյժը) ընդունում է անկանոն և անյարմար ուղղութիւն

Ի հարկէ, յիշեալ թերութիւններն արմատախիլ անելու համար կարելի է երբեմն գործադրել և առանձին միջոցներ. օրինակ՝ կուտարար երեխային կարելի է թոյլ տալ կուելու միայն այն պայմանով, որ ուրիշց մի լաւ ծեծ ուտի, զգայական (սենտիմեատալինայ) աղջկանը կարելի է թեթև ինչ ծաղրել, ցոյց տալու համար, թէ նրա լացկանութիւնն որքան պարզիւն է, թէ դրանից ոչ ոքի շահ չըկայ, միայն իզուր իր աչքերն է կարմրացնում, և թէ ցաւակցութիւնը պիտի լինի գործով և ոչ թէ լացկանութեամբ, նոյնպէս թէ հապճեպ կրքոտ դատողութիւնն ու գործողութիւնը պատճառ են լինում սխալմունքների, շփոթութիւնների և փոխադարձ զայրոյթի, որոնք տեղի չէին ունենալ, եթէ դէպի գործն աւելի շըջահայեաց և հանդիստ վերաբերմունք ունենայինք:

Երեխանների երկրորդ կարգի թերութիւններն առաջանում են նրան շըջապատող անբարեյաջող պայմաններից: Մանուկն ինքնըստինքեան չըպէտք է կեղծաւորէ, ստէ, գողանայ և այն, որովհետ դրա համար չըկան դրդիչ պատճառներ, բացի դըա-

նից ըսկղբում այդ արատները անծանօթ են: Այդ գործողութիւնները կատարում են միայն այն ժամանակ, երբ երեխայի առաւել կամ նուազ կարևոր պահանջը ծնողները չեն կատարում և իրանք օրինակ են տալիս պարծենկոտութեան, ստախօսութեան և այլըն, որովհետև երեխայի համար գժուար է ինքնարերաբար այդ բանները մտածել: Սովորաբար այդպէս էլ լինում է: Հետեաբար այդ թերութիւնները վերացնելու համար անհրաժեշտ է, որ նախ մեծերն իրենք իրենց միջից վերացնեն այդ պակասութիւնները. բացի դրանից հոգ տանեն, որ երեխանների բոլոր իսկական կարիքները ժամանակին ու լրիւ բաւականութիւն ըստանան: Իսկապէս անխոհեմութիւն է կոիւ վարել այդ տեսակ պակասութիւնների դէմ: Հէնց որ գործը հասնում է մեծերի ինքնուղղման՝ խնդիրը խիստ ծանրանում է, որովհետև մեծերը դերադասում են երեխաններին ուղղել, քան թէ իրենք ուղղուեն: Մեզանից օրինակ մի առնէք, ասում են մեծերը մանուկներին: Յամենայն դէպս, ամենակին չըպէտք է մոռանալ, որ ամենազլիսաւոր միջոցը արգելելու և երեխանների միջից արմատախիլ անելու. ոչ ցանկալի գործողութիւններն այն է թոյլ չը տանք անհաճոյ գործողութիւնը կրկնուելու, վերսկսկուելու, հարկաւոր է խեղճել ոչընչացնել նրան, քանի որ թոյլ է: Գործողութիւնը չի կրկնուի, եթէ պահանջը, որից նա ծագում է առեւ, լիովին բաւարարութիւն ստանայ, եթէ միայն շըջապատող պայմաններն այդ գործողութիւնը կրկնուելու առիթ չըտան:—Օրինակ՝ երեխան ստում է, թէ իրեն

ընծայած քաղցրաւենիներին ձեռք չի տւել, մինչդեռ նրանցից միքանի հատ կերել է: Այդ տեսակ ստախօսութեան առաջն ի՞նչպէս պէտք է առնենք:— Ամենից առաջ հարկաւոր է երեխաներին ուտելու բաւականաչափ քաղցրեղէն տանք: Երեխաները քաղցրեղէն ուտելու պահանջ ունին, և այդ պահանջը բոլորովին օրինաւոր է: Այդ պահանջին պէտք է բաւարարութիւն տանք, եթէ ոչ նա միշտ պիտի ձգտի, ձեռքը մեկնի դէպի քաղցրեղէնը: Յետոյ՝ պէտք է միջից վերացնել սուտը կրկնուելու առիթները: Օրինակ՝ եթէ ստախօսութիւնն երեխայի համար սովորութիւն է զարձել և միենոյն ժամանակ նա սիրում է քաղցրեղէն, աւելի լաւ է նրա ձեռքին չըթողնենք քաղցրաւենիներ, այլ վերցնենք, որպէսզի գայթակղութեան առիթ չըլինի. իսկ եթէ թողնում ենք, պէտք է հաշուենք, որ լիովին հնարաւորութիւն լինի երեխայի խօսքը ճշտելու, հետեարար և ստախօսութիւնը դարձնենք անօգուտ: Վերջապէս հարկաւոր է, որ երեխան մեծերի շրջանում չըտեսնէ և չըլսէ ստութիւն, որպէսզի նա համոզուած լինի, թէ սուտն ատուած և արհամարհուած է բոլորից: Այսպիսի պայմաններում միայն կարելի է յուսալ, թէ երեխայի ստախօսութիւնը հետզհետէ կըվերանայ:

Բոլորովին սխալ է առաջ և այժմ էլ բոլորից ընդունուած այն կարծիքը, իբրև թէ երկիւղի աղեցութեամբ մանկան մէջ գրգիռ են ստանում և զօրանում գովանի յատկութիւնները: Ֆիզիքական և հոգեկան տանջանք պատճառող երկիւղի և յիշողութեան, սրամտութեան, ջանասիրութեան և այլամեծ չափանիկ գովանութիւնները կատարելու համար: Սրանց համար հարկաւոր է անպայման անդորրութիւն և ուսանելի առարկայի հրապուրչութիւն: Իսկ երկիւղը վրդովում է, ցրւում, շփոթեցնում և գիտակցութեան մէջ առաջին տեղը տալիս է «կաշու» պաշտպանութեան խնդրին: Այդպիսի հանգամանքներում ի՞նչպէս կարելի է մանկան մէջ զարդացնել դրական յատկութիւններ: Միակ լաւ յատկութիւնը, որ երկիւղը կարող է պատւաստել՝ այդ գործողութիւնների մէջ շրջահայեցողութիւնն և զգուշաւորութիւնն է: Միակ այս դրական յատկութիւնն էլ հարկաւոր չափից այն կողմն է անցնում, մարդուն զարձնում է տատանող, գործն ավերջյետաձողող, իր ուժերի վրայ անվտան: միւս կողմից՝ զգուշաւորութիւնը հնարաւոր է և առանց երկիւղի, որովհետև մարդոց շատ լաւ գիտակցում է բնութեան և մարդկային հասարակութիւնների մէջ զոյութիւն ունեցող ուժերի ահագնութիւնը, որ պատահած գէպքում կարող է առանձին անհատի փոքր ուժերը ջախջախել և պատճառել նրան մեծամեծ չարիք:

Դրական լաւ յատկութիւնները զարգանում են ոչ թէ երկիւղով, այլ այնպիսի կրթութիւններով ու վարժութիւններով, որոնք յարմարեցրած են առանձին ան-

հատի բնաւորութեան և բնածին ընդունակութիւններին: Իւրաքանչիւր մանուկ ունի առանձնայատկութիւններ և դրանց համաձայն գործունէութեան առանձին պահանջներ: Այս ինչ կանկան կրթութեան համար օգտակար և նպատակայարմար համարուած վարժութիւնները չի մարելի առաջարկել մի ուրիշ մանկան կրթութեան համար: Պէտք է յարմարուիլ մանկան բնաւորութեան առանձնայատկութիւններին և տալ իւրաքանչիւրին իր ուժերին համաձայն առանձին վարժութիւններ: Ըստինքեան պարզ է, մանկան առանձնայատկութիւններին յարմարուելու համար բաւական չէ հարեւանցի, վայր ի վերոյ ծանօթութիւն, այլ հարկաւոր է նրա բնաւորութեան ընդարձակ և խորին ուսումնասիրութիւն: Մանաւանդ անհրաժեշտ է այդպիսի ուսումնասիրութիւնը, երբ կամենում ենք զօրացնել և զարգացնել մանկան թոյլ, բայց լաւ յատկութիւնները: Զի կարելի գտնել այնպիսի մի մարդ, որ ամբողջավին կազմուած լինի լաւ յատկութիւններից: Զօրեղ յատկութիւնների հետ միասին սովորաբար լինում են և թոյլ յատկութիւններ, որոնք դաստիարակից պահանջում են առանձին խնամք և հոգացողութիւն: Լաւ դատողութիւն ունեցողը կարող է ունենալ բաւական թոյլ յիշողութիւն, մանաւանդ մի որկ է մասնագիտական առարկայի վերաբերմամբ. զօրեղ տեսական կարողութեան հետ միասին մէկը կարող է ունենալ տատանւող բնաւորութիւն, հաստատակամութեան հետ՝ բաւական անհաշտ և անկարեկից բնաւորութիւն: Անհատի այդ ևնման թերութիւնները ման-

կավարժի առանձին հոգացողութեան առարկայ պիտի լինին: Ի՞նչ պիտի անել թոյլ յատկութիւնները զօրացնելու համար:—Ըստ ինքեան հասկանալի է, որ իւրաքանչիւր յատկութեան համար պիտի գործադրել աքանչիւր վարժութիւն: Այդ թոյլ, բայց չափազանց գնահատելի և մինչեւ անդամ անհրաժեշտ յատկութիւնները՝ պէտք է փայփայել և գուրզուրել ինչպէս մասներ՝ պէտք է փայփայել և գուրզուրել ինչպէս մատաղ տունկ, եթէ ոչ նրանք կըթարշամեն: Այդ տեսակ իւրաքանչիւր տունկի համար պիտի պատրաստել նրան յարմար հող, ժամանակին ոռոգել և անպակաս անել նրանից անհրաժեշտ ջերմութիւնը: Ուղղակի կարելի է ասել, որ թոյլ յատկութիւնները (թոյլ յիշողութիւնը, թոյլ բնաւորութիւնը և այլն) պահանջում են այնպիսի ուշագիր և խնամատար հոգացողութիւն, նրանց ուժերին ճշտութեամբ յարմարեցրած այնպիսի կրթութիւնների սիստեմներ, որ կարելի է անուանել ջերմանոցային: Իսկ ջերմանոցային դաստիարակութիւնը պահանջում է մեծ հմտութիւն, մեծ հոգս և մեծ սէր գէպի գործը: Այս մեր խօսքերից հետեւում է, որ երկիւղը բոլորովին մի անպէտք սիստեմ է դաստիարակութեան գործում: Դրական կողմից նա բոլորովին անզօր է մանկան մէջ որևէ լաւ յատկութիւն զօրացնելու և հաստատելու, որովհետև նա առաջացնում է բոլորովին ներհակ աղղեցութիւն, լաւ յատկութեան հետ նա չունի տրամաբանական որևէ առընչութիւն, իսկ հոգու և մարմնի մէջ վրդովմունք առաջացնել՝ հեշտութեամբ կարող է. ոչ ցանկալի գործողութիւնները ճնշելու համար նա ամենավասակար միջոցն է,

որովհետև այդ տեսակ ձնշումը ձեռք է բերւում չափազանց թանգ գնով—նւազեցնում է եռանդը և ամրողջ կազմուածքի կենսական գործունէութիւնը՝ խորտակելով նրա բոլոր ուժերը: Հետևաբար խելացի դաստիարակութիւնից բոլորովին արտաքսուած պիտի լինի երկիւղը:

Թերեւս ոմանք առարկեն, թէ կայ պատուաւոր, ազնիւ երկիւղ, որ ամեննեին չի կարելի վերագրել ընդունւած սովորական երկիւղի կարգին: Օրինակ՝ այդպիսին է խոճի խայթը, հասարակական սիրելի անձնաւութիւնների անբաւականութիւնը իր դէմ շարժելու երկիւղը: Եւ մըթէ այդ երկիւղներն ես չեն կարող ծառայել իրեն դաստիարակութեան միջոցներ:

Այդ յիշեալ երեսոյթները քննելու ժամանակ՝ հարկաւոր է ճշտութեամբ տարրերել նրանց: Եթէ այդպիսի պարագաներում մէկն զգում է այնպիսի երկիւղ, որի մասին մենք խօսել ենք վերը, ի հարկէ, այդ տեսակ երկիւղը կարող է կորստաբեր ազդեցութեան ունենալ: Երկիւղի ազդեցութեան մասին խօսելու ժամանակ աչքի առաջ պիտի ունենալ երեսոյթի իսկական էութիւնը, ոչ թէ այն փոփոխական պարսպաները, ուրոնք առաջացնում են երկիւղ: Երկիւղը կը մնայ միշտ երկիւղ, չընայելով թէ ինչից է առաջանում՝ խոճի խայթից, հասարակական կարծիքից, ծնողներից, Աստուծուց: Եթէ մարդ զգում է երկիւղ, նրա հետ միասին զգում է և նրա մնչող կարկամեցնող ազդեցութիւնը իր հոգու և մարմնի վրայ:

Մեր կարծիքով պատւաւոր կոչւած երկիւղի յի-

շեալ դէպքերը երկիւղ բառով արտայայտելը՝ լեզւական անձշտութիւն է: Սովորական երկիւղը, որի մասին արդէն խօսել ենք, կողմնակի որևէ մէկից մեզ պատճառելիք տանջանքի վախն է, օրինակ՝ արտաքին ընութիւնից, ուրիշ մարդկանցից, կենդանիներից, հիւանդութիւններից: Պատւաւոր երկիւղն ամեննեին այդպէս չէ: Այստեղ ոչ մի կողմնակի անձ մեզ տանջանք չի պատճառում, այլ, ընդհակառակը մենք ենք մեզ կամ ուրիշին տանջանք պատճառում: Մեր պատճառած տանջանքներն ուրիշին՝ մեզ անհաճոյ են, մենք կը ցանկանայինք խուսափել այդ տհաճութիւններից: Այս երկիւղի և սովորական երկիւղի մէջ տարրերութիւնը էական է: Եթէ որևէ մէկն իր գործողութեամբ տանջանք է պատճառել ուրիշին կամ իրեն, և վերջապէս՝ եթէ նա գիտէ, որ իր կամքիցն է կախուած այդ գործողութիւնը կատարելը կամ չըկատարելը, այդ պարագայում երկիւղի մասին խօսք լինել չի կարող, այդ բառի իսկական իմաստով: Այստեղ ես եմ բոլորի ազգիւրը և տէրը, ես իմ սեփական ցանկութեամբ կատարում եմ դործողութիւնը, ես ինքս եմ պատճառում տանջանք. ինձ ստիպող արտաքին ոյժ չըկայ, բացի ինձանից: Իսկ սովորական երկիւղի ժամանակ մենք կուում ենք մեղանից անկախ արտաքին փորձանքի դէմ, որից տանջւում ենք մենք ինքներս և ոչ մէկ ուրիշը: Աստուծուց կարելի է վախենալ միայն այն ժամանակ, եթի նրան ներկայացնում ենք մեզ չափազանց կոպիտ մարդկային յատկութիւններով—իրեն ահաւոր բռնապետ, օրինագանցութիւնը պատուհասող

բարկացկոտ մի դաժան էակ, որին հաճելի է մարդուն պատժել՝ մինչև անգամ չնշին զանցառութեան համար: Իսկ եթէ Աստուծուն ընդունում ենք իբրև մի արդարադատ էակ, լի անսահման սիրով, որ ամենայն ինչ ստեղծել է, բոլորի վրայ խնամք է տանում, առանց որի կամքի մէկի գլխից մազ անգամ գետին չի ընկնում, այնպիսի Աստուծուց չի կարելի վախենալ, նըրանից միայն կարելի է ակնածել և դէպի նա տածել երախտագիտութիւն և սէր: Կրօնապէս զարգացած մարդու գիտակցութեան մէջ Աստուծոյ երկիւղը բացակայում է, այդ խօսքի լաւագոյն իմաստով:

Նոյնը պէտք է ասել ազնիւ կամ պատւառը երկիւղի միւս տեսակների մասին: Եթէ մէկը, բանաստեղծի պատկերաւոր արտայայտութեան համաձայն՝ խիղճը ներկայացնում է իրեն իբրև «Ճիրաններով մի գաղան», որ պատառուում ու յօշուում է մարդուն իր մեղքերի համար, այն ժամանակ երկիւղը կարելի է ընդունել իբրև խղճի խայթ, իսկ եթէ խիղճն ընդունենք մարդու վճռահատութիւնն և գնահատութիւնըն իր սեփական վարմունքների, այդ պայմանում երկիւղի մասին խօսք լինել չի կարող, այլ ինդիրը վերաբերում է անձնական երկութեան և ներքին (հոգեկան) խառնախնթորութեան, որ առաջանում են սահմանաւծ կարգերին և պահանջներին անհամաձայն գործողութիւն կատարելուց յետոյ: Բարի զաւակը վախենում է իր վատ վարմունքով վշտացնել իր ծնողներին և նրանց դժգոհութիւնը շարժել իր դէմ: Այստեղ երկիւղ չկայ, որովհետև ծնողները ոչ մի տան-

ջանք չեն պատճառում իրենց մեղանչող զաւակին, այլ նրանք իրենք պիտի տանջուեն, իրենք պիտի վըշտանան, որ իրենց սիրելի զաւակն ունեցել է այնպիսի մի ոչ գովելի վարմունք: Մանուկն աչքի առաջ բերելով վշտացած ծնողների դրութիւնը, որոնց տանջանքի պատճառն իր վատ վարմունքն է եղել, զգուշանում է այնուհետև յանցանք գործելուց: Այստեղ նշանակութիւն ունի ոչ թէ երկիւղը, այլ գիտակցութիւնն այն ապագայ աններդաշնակութեան, որ կարող է առաջանալ որդու և ծնողների մէջ: Այդ աններդաշնակութիւնն անհանոյ է, բայց ոչ ամեն մի տհաճութիւն երկիւղ է:

## b.

Մանկան յատուկ երկիւղը—այս երկիւղի առարկաները, երկիւղալի առարկաների զօրեղ կամ թոյլ ներգործութեան պայմանները, եւ մանկան երկիւղի պատճառները:

Յայտնի է, որ մանուկները շատ երկշուտ են: Բազմատեսակ և միկնոյն ժամանակ ամենասանմեղ առարկաներն երեխաների մէջ առաջացնում են երկիւղի զգացում: Աչքի անցնելով մանուկներին երկիւղի ազդող առարկաները, նրանց կարող ենք բաժանել երկու խմբի: Առաջին խմբին պատկանում են այն առարկաները, որոնք ազդում են զգայարանքների վրայ,

իսկ երկրորդ խումբը երեակայութեան և մտքի վրայ:  
Մանկան առաջին երկիւղներն անմիջապէս կապուած են նրա արտաքին զգայարանքների հետ: Մանուկը երեակայութեամբ և մաքով երկիւղ զգում է ոչ իր կեանքն սկզբնական շրջանում, որովհետեւ մանուկը իր կեանքի առաջին ժամանակներում չունի երեակայութիւն և բանականութիւն: Դրանք աւելի հոգեկան կեանքի անագան ընդունակութիւններ են: մինչդեռ մանուկներն իրենց կեանքի հէնց առաջին օրից արտաքին զգայարանքների վրայ զգում են զանազան տպաւորութիւններ:

Տեսողութեան տպաւորութիւնները մանուկների համար երկիւղի ամենազլիսաւոր աղբերներից մէկն են: Դժուար է գտնել այնպիսի առարկաներ, որոնք մանուկներին երկիւղ չազդեն—ճանճերը, մոծակները, սենեակի շնիկները և կատուները, գետի ալիքները, կիսախաւար սենեակի մէջ լուսոյ ճառագայթները, դիմակները, գլխին դրած բարձր զգակները, օտարօտի շարժողութիւններ, ձեեր ու այլ հարիւրաւոր տեսանելի առարկաներ: Մի փոքրիկ աղջիկ առաջին անգամ տեսնելով ձագուկներով թոշունի բոյնը, երկիւղի սաստիկ ձիչ բարձրացրեց: Մի այդպիսի ուրիշ աղջիկ վախենում էր մօտենալ իրենց տարիքով փոքր ինչ մեծ աղջայ: Երկու տարեկան մի տղայ տեսնելով բաց հովանոցը յատակի վրայ, զարհուրելի աղաղակ բարձրացրեց: Մանուկներին երկիւղ աղջող այս տեսակ տեսանելի առարկաներից առանձնապէս ուշադրութեան արժանի են երկու խումբ: Առաջին խմբին պատկանում

են այնպիսի առարկաներ, որոնք երկիւղի հետ միասին առաջացնում են և զգուանք, երկրորդ խմբին պատկանում են խաւար տարածութիւնները:

Մկները, առնէտները, գորտերը, խխունջները, ճճիները, օձերը, գիտեները. թափած արիւնը մանուկների մէջ առաջացնում են զգուանքի և սաստիկ երկիւղի խառն զգացում: Սրանց տեսնելու ժամանակ երեխաների դողը բռնում է: Մօտ 9 տարեկան մէկ աղջիկ մուկ տեսնելիս սարսափահար ճշում և ամբողջ մարմնով դողում էր. մկան պատկերն անգամ նրա վըրայ համարեա նոյն ներգործութիւնն էր անում: Մի ուրիշ աղջիկ նոյն տեսակ սարսափ էր զգում խխունջ տեսնելիս: Մինչեւ անգամ փուշ խեցին և առհասարակ ամեն մի փափկամարմին կենդանի նրան այնպիսի սոսկում էին պատճառում, որ ծնողներն ստիպուած նախազգուցութիւններ էին ձեռք առնում այդ բանի դէմ: Աղջիկը հասակն առնում էր, բայց և այնպէս երկիւղը չէր պակասում: Ոչ մի կոչ նրա բանականութեանը, ոչ մի համոզում չէին օգնում: Աղջիկը չէր կարողանում իշխել իր զգացման վրայ: Նա հբաժարւում էր թերթել պատկերազարդ գրքեր, նայել նկարներ, երկիւղ կրելով՝ մի գուցէ նրանց մէջ հանդիպէ խխունջի նկարի: 17 տարեկան հասակից միայն մեծ ճիգ գործ զնելուց յետոյ՝ հազիւ հազ կարողանում էր տեսնել կենդանի խխունջ կամ նայել նկարը, բայց շօշափել, բռնել ձեռքով կենդանի խխունջ չէր կարողանում:

Մի փոքրիկ տղայ այն աստիճան զգում էր սար-

դի ոստայնից, որ անկիւնում տեսնելով այն, սարսափով յետ էր քաշուում: Լըգուան դիւ Սօլ հաղորդում է շատ դիտողութիւններ, այն տեսակ երեխանների մասին, որոնք նեարդային ցնցումներ են ստացել, որոնց վերջին հրաժեշտի համար մօտեցրել են ննջեցեալներին: Անզլիացի մատենագիր դէ Կվինսի պատմում է, թէ ինքն դեռ մանուկ էր, երբ մեռնում է քոյրը. մեծերից ծածուկ գնում է նայում հանգուցեալին. հէնց այդ տեղ զգում է նեարդային սաստիկ ցնցում: Այդ դէպքից յետոյ դեռ երկար ժամանակ նրան երեւում էին «մահճակալներում պառկած հիւանդ մեռնող երեխաններ, որոնք տագնապում էին մահուան երկիւղով, լալիս էին, ձչում: Նրա կեանքի ընթացքում դեռ երկար ժամանակ՝ երկակայութեան մէջ պառկերանում էին այդ տեսարանները և հալածում նրան: Այդ առիթով դէ Կվինսին ասում է իր մասին. «Թերես ես այժմ ուրիշ մարդ լինէի, եթէ ինձ հետ չըպատահէր այդ դէպքը»:

Այս յիշածու դէպքում այնքան մեծ դեր չի կատարում զլուանքը դիակից, որքան երկակայութեան գրգռուած գործունէութիւնը: Զզուանքն ու երկիւղն միախառնուած դէպքերում, դժուար է որոշել թէ որն է նրանցից աւելի զօրեղ—երկիւղը, թէ՝ զզուանքը. միայն անկասկած է, որ մանկան հոգու մէջ երկումն էլ գոյութիւն ունին:

Մանուկների մէջ տարածուած է և վախը խաւարից, մթութիւնից: Նրանք յաճախ վախենում են միայնակ գնալ դատարկ՝ մարդ չեղած սենեակը. մութ

ժամանակ վախենում են զնալ վողոց կամ դաշտ, իջնել մութ ներքնատներ, քնել առանց ճրագի: Սովորական առարկանները տեսողութիւնից ծածկող խաւարը երեխանների վրայ թողնում են զարհութելի տպաւորութիւն, առաջացնում է նրանց մէջ մի տեսակ միս. տիքական սարսափ: Քիչ երեխաններ են ազատ առանձնապէս մանուկներին յատուկ յիշեալ երկիւղից. անկարելի է լինում շատ մանուկների համոզել, թէ խաւարն անվնաս, անվտանգ է. ամենայն օր հէնց որ մութն ընկնում է. Նրանք չափազանց երկչուտ են դառնում: Խաւարի երկիւղն երեխանների մէջ առաջացնում է սաստիկ ցնցում, երբեմն մինչև անգամ մահ: Մի մայր իր չար երեխային փակում է մի մութ նկուղում և միքանի ժամ նրան թողնում է այնտեղ. վերջապէս երբ բանում են նկուղի գուռը, տեսնում են երեխան ուշաթափ ընկած է, երեք օրից յետոյ երեխան մեռնում է: Այս դէպքը միակը չէ: Դպրոցում մի 8 տարեկան երեխայի իբրև պատիժ փակում են մութ սենեակում: Սկզբում նրա վրայ ընկնում է սաստիկ երկիւղ, ապա յայտնուում են լնկնաւորութեան նշաններ, դրանից զառանցանք: Նրա մտաւոր կարողութիւնները, որ մինչև այդ ժամանակ կանոնաւոր էին՝ վատանում և երեխան դառնում է թուլամիտ:

Մանկան երկիւղի իբրև մի ուրիշ աղբիւր ծառայում են լսողութեան տպաւորութիւնները. գրանցից առաջին տեղը բռնում են խիստ աղմուկները—ամպի որոտումը, թնդանօթի և հրացանի պայթիւնը, զանգան տեսակ թնդիւններ, մեծ զանգերի դօղանջիւնը,

ծանր առարկաների անկումից առաջացած հեշիւնը և այն: Բայց և ձայներն երեխաներին պատճառում են երկիւղ—երեխայի ականջին շշուկով խօսակցութիւնը, ծվկոցը, շան մռոցը, մինչև անգամ ժամացոյցի յանկարծակի զարկի ձայնը: Դժուար է ճշտութեամբ ասել մանկան մէջ առաջին երկիւղ առաջացնողն որոնք են՝ լսողութեան թէ տեսողութեան տպաւորութիւնները, որովհետև դիտուած են երեխաներ, որոնք հրդեհի ժամանակ անվրդով զւարճացել են բոցի և ծխի տեսարանով, մարդոց իրարանցումով, բայց որոնց սարսափահար են արել հրդեհաշէջների փողերի ձայներն և նրանց կառերի գրդոցը: Երկիւղ առաջացնող առաջին և ամենագլխաւոր տպաւորութիւնները՝ լսողութեան տպաւորութիւններն են, մանաւանդ օտարոտի և իրենց ծագումով անորոշ աղմուկները: Օրինակ՝ երբ մանկան հետ սկսում են խօսել ցած և խոպոտ ձայնով, նա վախենում և լաց է լինում:

Իսկ մնացեալ արտօաքին զգայարանքներով ստացած տպաւորութիւնները հազիւ է պատահում որ երկիւղ ազդեն մանկան, և եթէ մանուկը վախենում է, այն էլ հիմնած է լինում փորձի վրայ, որ նրանք իրեն վնաս կամ տհաճութիւն են պատճառում:—Եթէ մանուկն ինքնաեռի վրայ կամ տաք ջրով մի որևէ տեղն այրել է, եթէ պատառաքաղով ձեռքը ծակել կամ դանակով կտրել է, եթէ միշտ դառը գեղ է խմել, եթէ հոտոտել է մի չափազանց անդուրեկան հեղուկ՝ այնուհետև երեխան վախենում է մօտենալ յիշեալ առարկին, հրաժարւում է հոտոտել որևէ հեղուկ, խը-

մել այնպիսի մի բան, որ այսպէս կամ այնպէս դեղ է յիշեցնում: Մի փոքրիկ աղջիկ կատւի հետ խաղալիս կատուն սաստիկ մանկում է նրա ձեռքը: Այս աղջիկըն այնուհետև իր ձեռքը չէր մօտեցնում հօր, մօր մուշտակին, մորթէ գլխարկին. վախենում էր ամեն տեսակ մորթիներից:

Մանկան վրայ երկիւղ ազդող ամենատարածւած այն առարկաներն են, որոնք ներգործում են տեսութեան վրա. օրինակ՝ զանազան ձեեր, շարժողութիւններ. երկրորդ տեղը՝ բռնում են լսողութեան զանազան տպաւորութիւնները, ապա զալիս են շօշափման, հոտառութեան և ճաշակի: Երեխաների վրայ երկիւղ ազդող վերջին երեք խմբի տպաւորութիւններն առաջանում են փորձից յետոյ, մինչդեռ առաջին երկու խմբի տըպաւորութիւններն որևէ է փորձից նախընթաց են:

Այժմ քննենք երեխաներին երկիւղ ազդող այն երկրորդ մեծ խմբի առարկաները, որոնք ներգործում են մանկան երեակայութեան և մտքի վրայ:

Փորձից յետոյ մանկան զիտակցութեան մէջ պահում են իր կրած տանջանքների և տհաճութիւնների տպաւորութիւնները. այդ պատճառով մանուկը երկիւղ է կրում նոյն տպաւորութիւնների կրկնւելուց: Մանուկը հէնց որ նկատում է որևէ նմանութիւն այն առարկաներին, որոնք իրեն տանջանք են պատճառել բոլորովին հրաժարւում է մօտենալ և ձեռք տալ այդ առարկաներին: Վերը յիշուած ձեռքն այրելու, ծակելու, կտրելու դէպքերը վերաբերում են այս խմբին: Մանուկները չափազանց հակամէտ են առանձին մաս-

նաւոր փաստերից հանել ամենաընդարձակ և ընդհանուր եզրակացութիւններ: Մանուկը փողոցից անցնելիս նրա վրայ յարձակւել է մի շուն կամ մի հարբած մարդ, փողոցի մի երեսից միւս երեսն անցնելիս կառք կպել է նրան: Ահա այս մասնաւոր գէպքերից հարքը կպել է նրան: Ահա այս մասնաւոր գէպքերից հանում է իր համար ընդհանուր ղեկավար կանոններ—որ բոլոր շները, բոլոր հարբած մարդիկ, բոլոր կառքերը երկիւղալի են, որ չի կարելի գետի ափը գնալ՝ կարելի է ջուրն ընկնել ու խեղդել և այլն:

Ի հարկէ. եզրակացութիւնը միշտ չի լինում այդպէս ընդարձակ և ոչ այնքան էլ անհամապատասխան փաստին: Մանուկը հետզհետէ հասակ առնելով, ընդարձակելով իր դիտողութիւնները, ճշտելով նախկին եզրակացութիւնները նոր փաստերով՝ սովորում է աւելի գգոյշ լինել իր եզրակացութիւնների մէջ, սահմանափակում է իր նախկին ընդհանրացումները, իսկ նոր եզրակացութիւններն անում է աւելի համաձայն իրականութեան: Եթէ որոշ գործողութիւնների համար մանուկը միքանի անգամ պատասխանատութեան է ենթարկել, վախենում է այնուհետեւ նման դէպքերում նոյն գործողութիւնները կրկնելու: Նման դէպքերում նրա երկիւղը լինում է սահմանափակ, որոշ, եզրակացութեան չափն էլ համապատասխան փաստերին: Առհասարակ պիտի ի նկատի առնել, որ դատողութեան և եզրակացութիւնների միջոցով երկիւղալի առարկաների թիւը կրճատում է, իսկ միւս կողմից՝ աւելի անում: Մանուկն ամենայն օր գործ ունենալով զալանում առարկաների հետ, հետզհետէ փորձը նրան նազան առարկաների հետ, հետզհետէ փորձը նրան

համոզում է, որ առաջին ժամանակներում երկիւղալի թուացող շատ առարկաներ իսկապէս երկիւղալի չեն. օրինակ՝ որոշեալ պայմաններում երկիւղալի չեն շները, ինքնաեւը, եռացող ջուրը, դանակը, պատառաքաղը, կառքը և այլն, որոնք առաջնրան այնպէս երկիւղ էին ազդում. միւս կողմից՝ այն առարկաները և երեսյթները, որոնց իր անգիտութեան պատճառով առաջ վերաբերում էր անվըրով, լոկ հետաքրքրութեամբ՝ սկսում են երկիւղ ազգել, օրինակ՝ թոյները, թունաւոր բոյսերը, վտանգաւոր կենդանիները, ըստ երեսյթին միքանի անվնաս գործիքներ, առօրեայ կեանքի շատ գէպքեր:

Մանկան զարգացման հետ իսկապէս աւելանում թէ պակասում է երկիւղալի առարկաների թիւը: Անկասկած պակասում է: Մանուկն իր կեանքի առաջին տարիներում չափազանց վեհերոտ, չափազանց երկշոտ մի էակ է. ամեն մի ճանճ կարող է նրան սարսափահար անել: Մօր գրկում կամ սենեկում շրջելիս նա անդադար դիմում է մօրը, դայեակին, տան մեծերին, որ իրեն պաշտպանեն մանկական երկիւղներից, վշտերից, տրտմութիւններից: Մի փոքրիկ աղջիկ երկիւղախառը զարմանքով դիտում էր, թէ ինչպէս եղբայրը ու զլխարկը մինչև աչքերը քաշած՝ նայում է իրեն, բայց երբ մի քանի օրից յետոյ նոյնը կրկնում են նըրա առաջ և ուրիշները, սկսում է ծիծաղել, ուրախանաւ, ինչպէս և միւսները: Աղջիկն ընտելանում է գըլխարկին և պահանջում է, որ իր ձեռքը տան, որպէս զի շօշափէ: Ահա այդպիսի երկչոտ մանուկը մեծանա-

լով, լինում է մի անվեհեր մարդ: Հասակի զարգացման հետ լսողութեան, տեսողութեան և այլ արտաքին զգայարանքների տպաւորութիւնների մէջ արժատացած կեղծ երկիւղները չքանում են, իսկ նոր իսկական երկիւղների թիւն այնքան շատ չէ, ինչպէս նախկին կեղծերի: \*)

Բացի դրանից, նոր երկիւղալի առարկաները ոչ միշտ սպառնում են վտանգ—թունաւոր բոյսերը, ահաւոր կենդանիները, զանգան վտանգները կեանքի մէջ պատահում են ոչ ամեն մի քայլափոխում: Ահաւոր կենդանիները հեռու են գտնում մեղանից, փորձանքները հազարդէպ են, թոյներն երեխաններից ծածուկ տեղ են պահում: Այդպէս, հասակի հետ երկիւղալի առարկաների թիւը պակասում է և ոչ թէ աւել-

\*) Թէ անծանօթ առարկաներն ինչպէսի սաստիկ երկիւղ են առաջցնում նոյնիսկ հասակաւորների մէջ, իբրև ապացոյց կարող է ծառայել Դարեւնի պատմած հետևեալ դէպքը:—Աւարտալիքի վայրենին առաջին անդամն է տեսնում կեանքի մէջ մարդուն ձիու վրայ նստած: Զիւարը ճանապարհորդն անկատելի մօտենում է վայրենուն և ձայն տալիս նրան... «Վայրենին յետ նայեց և տեսաւ ինձ, ասում է Դարեւնը. թէ ինչ մտածեց նա, զիւտեմ, միայն ոչ մի ժամանակ չէի տեսել երկիւղի և զարմանքի այնպիսի մի կատարեալ պատկեր: Նա կանդնած էր անշարժ, չէր շարժւում նրա ոչ մի անդամը, կարծես մեխւած էր գետնին, բերանը լայն բացած, աչքերը չուծ, նա մնաց այլպէս անշարժ մինչև իմ սեամորթ ուղեկիցը միքանի քայլ մօտեցաւ նրան: Այն ժամանակ վայրենին ինչոր աւներ ձեռքին՝ ցած ձգեց գետին, եւ լաւ ծառը բարձրացաւ վեր, որքան կարող էր, նա չէր կարողանում խօսել—և իմ սեամորթ առաջնորդի հարցումներին ոչ մի պատասխան չէր տալիս, ամբողջ մարմնով դողում էր, միայն ձեռքով նշան էր անում, որ մինք հեռանանք»: (Դարեւն):

զանում: Մերունին, որ իր կեանքի մէջ շատ բան է տեսել, շատ փորձանքներ է կրել՝ ոչ մի բանից չի վախենում, բացի մահից, երբեմն մահից էլ չի վախենում:

Երեխանների հասակի հետ ահաւոր առարկաների առաջացրած տպաւորութիւնների ոյժն էլ պակասում է: Հասակաւոր մարդը վախենում է ոչ այնպէս սաստիկ, ինչպէս մանուկը: Ահաւոր առարկանները մանուկների վրայ մեծ ներգործութիւն են ունենում երկու պատճառով—վտանգի չափի անյայտութեան և մանկան ուժերի թուլութեան պատճառով: Մանուկը հանդիպելով երկիւղալի առարկայի, բոլորովին անկարող է որոշել, թէ այդ առարկան իսկապէս որքան երկիւղալի է, ինչպիսի վտանգ է սպառնում, մեծ թէ փոքր: Սովորաբար մանուկը չափազանցեցնում է սպառնացող վտանգը. յաճախ նա փոքր երկիւղը մեծացնում է, քան թէ ընդհակառակը: Եւ այդ հասկանալի է, որովհետեւ թէ երկիւղ ազդող առարկայի յատկութիւններն են նրան անյայտ և թէ իր սեփական ուժերն են թոյլ: Մանուկն ինչով կարող է դիմադրել վերահաս վտանգին, ում վրայ կարող է յոյս զնել. ուղիշների վրայ միայն և եթ: Ահա այդ պատճառով նա չի էլ փորձում դիմադրել վտանգին, այլ նրանից միայն փախչում է, փնտուում է մի տեղ, որտեղ կարողանայ մի կերպ թագնուել: Այլ գրութեան մէջ է գտնուում հասակաւոր մարդը՝ նա հասկանում է սպառնացող վտանգի չափը և յաճախ համարում է նրան չնչին, ոչ այնքան էլ երկիւղալի: Բացի դրանից, նա իր մէջ զգում է այնքան ոյժ, ուրով կարող է դիմադրել վերահաս փորձանքին. նա այդ-

պիսի գէպքերի համար մինչև անգամ մշակած ունի առանձին միջոց, այնպէս որ, եթէ հնար չկայ սպառ-նացող հարուածը բոլորովին հեռացնել, գէթ որոշ չա-փով կարելի է նրան թուլացնել։ Այդպէս, միենոյն երկիւղալի առարկաները ոչ մի ժամանակ միանման ազգեցութիւն չեն անում մանկան և հասակաւորի վը-րայ. առաջնի համար և՛ երկիւղալի առարկաները շատ են, և՛ նրանց տպառորութեան ոյժը աւելի զօրեղ, քան թէ երկրորդի համար։

Մանկան համար երկիւղալի վերջին տեսակի ա-ռարկաները նրանք են, որոնք ներգործում են երե-խայի երեակայութեան վրայ. Մէկ կողմից երեխանե-րին վախեցնում են իսկապէս գոյութիւն ունեցող ա-ռարկաները, նրանց վերագրելով երեակայական մի-ծութիւններ և յատկութիւններ, միւս կողմից՝ մտա-ցածին էակներով։ Մանուկներին պատմում են գայլե-րի, արջերի մասին, իրը նրանք գալիս են ուտում մա-նուկներին. վախեցնում են մուրացկաններով, իրը և թէ նրանք երեխաներին դնում են իրենց տոպրակների մէջ ու փախցնում. ահարեկում են գերեզմանոցներով, ուր թափառում են գերեզմաններից գուրս եկած մե-ռելներ. պատմում են անտառների մասին, ուր շըր-ջում են վայրի գազաններ և աւազակներ և այլն։ Ա-պա գալիս են մի շարք մտացածին առարկաներ—ան-տառային և ջրային ողիներ, չարքեր, կախարդներ, ձձում հեծող պառաւներ, եօթ գլխանի գեեր, զանա-զան հրէշներ, անոտիապաշտութիւններ, նախապաշա-րումներ, և այլն և այլն։ Մէկ խօսքով մանկան վառ

երեակայութեան առաջ բացւում է մի առասպելական աշխարհ, լի ամեն տեսակ հրաշալիքներով, սարսափեց-նող ու ահարեկող էակներով։ Այնտեղ մարդոց, ա-ռանձնապէս երեխաներին՝ սպանում են, խեղում, խո-րովում են, ուտում են... Մանուկները փոքր ինչ հա-սակ առնելով, սովորում են կարդալ. նրանք առանձին սիրով ու բաւականութեամբ սկսում են կարդալ ամեն տեսակ ահաւոր պատմութիւններ աւազակների, ան-վիճեր ճանապարհորդների, կոփների, խորհրդաւոր ու ահալի ամրոցների, տների և այլն մասին։ Երեակա-յութիւնն աւելի ու աւելի բորբոքւում է, լցուում է զարհուրեկի պատկերներով և մանկական երկիւղը հաս-նում է իր ամենաբարձր գագաթնակէտին։ Մտացա-ծին ահաւոր պատկերները բազմաթիւ են, ուստի նը-րանց ազգեցութիւնն էլ մանկան վրայ լինում է զօ-րեղ. Ում յայտնի չէ, թէ մանուկներն ինչպիսի սար-սափով լսում են ահաւոր հէքիաթներն ու զրոյցները, և թէ գրանից յետոյ երեկոյեաններն երկիւղից չեն կարո-ղանում քնիլ, մտարեկով այդ հէքիաթները. գլուխ-ները թագցնում են վերմակի ու բարձի տակ, աշխա-տելով այդպիսով ազատուել երեակայութեան մէջ ըոր-բորուած պատկերներից։ Մտացածին ոգիներից, էակ-ներից ու պատմութիւններից մանուկների մէջ առաջա-ցած երկիւղն, անկասկած, ամենազօրեղն է, ոչ մի ուրիշ երկիւղ չի կարող նրա հետ համեմատուել, բացառու-թեամբ հազուադէպ իսկական զարհուրեկի առարկանե-րից ու պատահարներից։ Այդ իսկ պատճառով ամեն մի դաստիարակի ամենազլիխաւոր հոգսը պիտի լինի

մանուկներին ազատել այդ կարգի երկիւղից։ Երեակայութեան ազդեցութեամբ առաջացած երկիւղն իսկական մի պատուհաս, մի մեծ չարիք ու խոչընդուն է մանուկների բոլոր ֆիզիքական և հոգեկան կարողութիւնների կանոնաւոր զարգացման համար։

Վեհերու երեխայի իրեն հետաքրքիր օրինակ կարող է ծառայել Ս. Տ. Ակսակովը։ Նա այդ կողմից իրեն մանրամասն նկարագրել է «Բագրովի թոռան մանկական տարիները» գրւածքում։ Մանուկ Ակսակովին անխտիր սարսափահար էին անում թէ իրական և թէ երեխակայական երկիւղները-ձայները, ձները, շարժողութիւնները։ Ակսակովը ներկայ գտնուելով իր նորածին եղքոր մկրտութեանը, վախենում է, մի գուցէ քահանան մկրտով կտրէ նորածնի գլուխը, իսկ երբ քահանան երեխային ջրի մէջ է ընկղմում, Ակսակովն երկիւղից ճշում է։ Այդ պատահում է այն ժամանակ, երբ նա «մեծ բաւականութեամբ կարդում էր 15 հատոր Անգլիացի փիլիսոփայ Կլեվելանդի կեանքը», այսինքն 7 տարեկան հասակում։ Մի անգամ նրան նստեցնում են փոքրիկ ձիու վրայ, սաստիկ վախենում է. քանի որ ծառան ձիու սանձից բռնած քաշում էր, երեխան մի կերպ իր երկիւղը զսպում է, որովհետև շատ նայող-ներ կային, ամաչում է երկչու երեալ, բայց հէնց որ ծառան սանձը թողնում է, երեխան իրեն բոլորովին կորցնում է, երասանակները նրա ձեռքից վայր են ընկնում, երկիւղը յաղթում է ինքնասիրութեանը, փոքրիկ ձիաւորը ճիչ է բարձրացնում։ իսկ ճին իրեն ազատ զգալով՝ սլանում է դէպի ախոռը (այս պատա-

հում է Ակսակովի կեանքի 6 տարում)։ Ակսակովն առհասարակ ամեն բանից վախենում էր. յաճախ նրան պատմում էին զանազան տեսակ երկիւղներ և նախազգացումներ. նրա վեհերու հոգին տազնապում, տանջում էր. աւելի շատ տանջում էր կարծեցեալ երեւակայական վտանգներից. բան թէ իսկականներից։ Մէկ անգամ Ակսակովի հօր մօտ հիւր է գալիս հարեան կալուածատէրն իր մօր հետ. դրանը երկուսն էլ մարմնով չափազանց գեր էին։ Փոքրիկ Ակսակովը, որ այդ ժամանակ համարեա 7 տարեկան էր՝ վախենում է հիւրերին մօտենալ և բարեւել, մի գուցէ իրեն գրկեն, և ով է իմանում խեղղեն։ Նա շատ է ուրախանում, երբ ողջոյնը վերջանում է գլուխ խոնարհեցնելով։ Ակսակովը տեսնում է մի ինելագար մարդ, սկըսում է յուղուել, երկիւղ է կրում որ ինքն էլ կարող է խելագարուել. մի քանի օր անընդհատ հետեւմ էր իր մտքերին և իր հարցումներով ու կասկածանըներով ձանձրացնում մօրը, թէ իր վրայ արդեօք չե՞ն երեւում խելագարութեան նշաններ։

Զմեռուայ ճանապարհորդութիւնների ժամանակ սահնակի սղոցց նոր ձիւնի վրայ՝ սաստիկ վատ էին ազգումնը զգայուն նեարդների վրայ, և այդպիսի ճանապարհորդութիւնների առաջին օրերում նա տառապում էր մաղձային փսխումով։ Մէկ անգամ ցուրտ ձմեռուայ ճանապարհորդութեան ժամանակ մանուկ Ակսակովն սկսում է տանջուել ու յուղուել զանազան անհիմն նախազգացումներով։ Նա համոզուած էր, թէ իրենց հետ որևէ դժբաղդութիւն պիտի պատահի՝ նրանք կամ պի-

տի ցըտահար լինին կամ պիտի հիւանդանան. ապագայ դժբաղութեան նախազգացումը նրա քունը խանգարել էր: Ահա յանկարծ իրենց սահնակը կանգ է առնում: Ակսակովն սկսում է անհանգստանալ, արթնացնում է աղախնուն, խնդրում, աղաչում է նրան՝ տեղեկանալ, թէ սահնակն ինչու կանգ առաւ: Բայց սահնակը շուտով առաջ է շարժւում. կանգ էր առել, որովհետև սահնակավար գիւղացին բարակ հագնուած լինելով, քիչ էր մնացել ցըտահար լինէր: Վերջապէս նրանք անվտանգ հասնում են մօտակայ գիւղը: «Այս ժամանակից սկսած մինչև այսօր, անում է Ակսակովը, սարսափով և զղուանքով եմ ճանապարհորդութիւն կտարում գիւղական ճանապարհներով և գիւղացիների ձիերով»:

Դայեակի պարտականութիւնն էր միայն Ակսակովի քրոջը հսկել և խնամել. Նրան արգելուած էր մինչև անգամ Ակսակովի հետ խօսել: Բայց և այնպէս այդ կինն յաջողեցնում է քիչ ու շատ տեղեկութիւններ հաղորդել Ակսակովին մարդադայլի, չարքերի և մեռելների մասին: Զգայուն Ակսակովն այնուհետև սկսում է վախենալ խաւարից. ցերեկն էլ երկիւղ էր կրում մտնել մութ սենեակ: Նրանց տանը կար մի անբնակ, կողպած և բաւական մութ սենեակ, որ մի ժամանակ նրա պապի (մօր հայրը) առանձնասենեակն էր եղել: Պապի մահից յետոյ այդտեղ պահում էին հանգուցեալի իրեղէնները: Դայեակն երեխային պատմել էր, իրեն թէ երբեմն երբեմն տեսնում են պապիկին սեղանի առջև նստած զբաղւելիս իր թղթերով: Այդ խօսակցու-

թիւնից յետոյ երեխայի սիրտն այնպիսի մի ահ է ընկնում, որ այդ սենեակի մօտովն անցնելիս աչքերը փակում էր: Մէկ անգամ միջանքովն անցնելու ժամանակ մոռանում պատուհանից ներս է նայում պապի առանձնասենեակը, և մտարերում է դայեակի պատմածը, երկում է աչքին՝ իրեն թէ պապիկը նստած է սեղանի առաջ: Երեխան ճշում և ընկնում է ուշաթափ: Մայրն ամեն կերպ աշխատում է ապացուցանել դայեակի պատմութեան անհեթեթութիւնը, բայց իզուր. Նա բռնութեամբ երեխային տանում է պապի առանձնասենեակը, որ իր աչքով տեսնէ, թէ բազկաթոռների վրայ փռուած են միայն ճերմակեղէններ, բայց այդ էլ չի օգնում: Երկիւղի սերմերն արդէն մի անդամ ընկել էին մանկան զգայուն և վեհերու հոգու մէջ և տալիս էին իրենց պառուղները:

Ակսակովն իր մանկութեան տարիներում ծնողների հետ յաճախ ստիպուած էր նաւակով անցնել Բէլաեա, Կամա և Վոլգա մեծ գետերի մէկ ափից միւս ափը: Մեծ գետի տեսքը, ալիքները, նաւակի օրօրուելն ու սուզումը և ափերի հեռաւորութիւնը նրա մէջ առաջացնում էին սաստիկ երկիւղ, որ սկսում էր նաւակի մէջ նստելու րոպէից և տեռում էր մինչև միւս ափը հասնելը: Այդ ամբողջ ժամանակում երեխայի լեզուն պապանձում էր, հօր և մօր հարցումներին ոչ մի խօսք չէր պատասխանում: աչքերը փակում էր, լաց էր լինում, ճշում կամ թէ նստում էր լուս, համարեա կիսամեռ դրութեան մէջ: Երբեմն գետի ալեկոծութիւնն աւելի սաստիկ էր լինում, այդ ժամանակ

նրան պատում էր աննկարագրելի սոսկում, և այն  
միտքը՝ թէ ինքը պիտի անցնի այդպիսի մի երկիւղա-  
լի ճանապարհով՝ արիւնը սառեցնում էր նրա երակ-  
ներում և համարեա զիտակցութիւնից զրկում:

Ակսակովն երկիւղից սկսում է տանջւել պապի  
հիւանդութեան և մահուան ժամանակ: Այդ երկիւղը  
ոչ միայն սաստիկ ցնցում է նրա ամբողջ օրգանիզմը,  
այլև գրգռում է նրա երեսակայութիւնը, առաջացնում  
նրա մէջ զարհուրելի պատկերներ, պաշարում նրան  
սոսկումով ու պատճառում աննկարագրելի տանջանք-  
ներ: (Ակսակովն այդ ժամանակ 6 տարեկան հասա-  
կումն էր):

Ակսակովներն ապրում էին Ուֆայում, երբ տե-  
ղեկութիւն ստացան, թէ Ս. Տ.-ի պապը ծանր հիւանդ  
է, մեռնելու վրայ է: Ձմեռն էր, բայց և անպատճառ  
պէտք է գնային: Ակսակովին այդ ճանապարհորդու-  
թիւնը հաճելի չէր: Մասն թւում էր նրան այնպիսի  
մի ահաւոր բան, որ նրա մասին մտածելն անդամ նը-  
րան զարհուրանք էր պատճառում: Առանձնապէս նրան  
անհանգստութիւն էին պատճառում և ուրիշ մտած-  
մունքներ. նա կարծում էր՝ թէ պապը մեռնելիս պի-  
տի ճշայ, լաց լինի. իսկ ինքը չէր կամենում լսել և  
տեսնել այդ: Բացի դրանից նրան թւում էր, թէ այդ  
ճանապարհորդութեան ժամանակ մայրն անպատճառ  
կը հիւանդանայ, իսկ ինքն ու քոյրը ցրտահար կը լի-  
նեն, որովհետեւ փոքր են: Նա յուզւած և վշտացած  
էր. երեակայութիւնը բորբոքւել էր, ներկայացնում  
էր տխուր պատկերներ: Վերջապէս գալիս և հապնում

են: Պապը ցանկանում է տեսնել թոռնիկին: Պապիկի  
հետ տեսակցութեան միտքը սոսկում է պատճառում  
Ակսակովին. նա կարծում էր, որ պապիկը վերջին  
հրաժեշտի ժամանակ կը գրկէ իրեն և այդ գրութեամբ  
կը մեռնի. իրեն չեն կարող դուրս կորզել հանգու-  
ցեալի գրկից, որովհետեւ պապիկի ձեռքերը ընդարձա-  
ցած կը լինեն և իրեն էլ պապի հետ հողի տակ կը  
գնեն: «Տէ՛ Աստած, ասում է Ակսակովը, ինչպէս  
սիրոս թալկանում էր, շունչս բռնւում, քափ ու քըր-  
տինքը պատում էր ինձ: Վաղ առաւօտեան վեր թռայ,  
նստեցի անկողնիս մէջ, մինչև անդամ կամենում էի  
արթնացնել ըրոջս. եթէ չը ճշացի, թերեւ պատճառն  
այն էր, որ ձայնս փորս էր ընկելա: Պապիկի հետ տե-  
սակցութիւնն անցնում է անվտանգ, պապիկը գեռ  
կենդանի էր: Երեկոյեան Ակսակովն սկսում է զրոյց  
անել Պարաշայի հետ, որ կարգուած էր Ակսակովին և  
ըրոջը ծառայելու: Խօսակցութեան ժամանակ Ակսա-  
կովն իմիջի այլոց հարցնում է նրան. «ինչու պապի-  
կը լաց չի լինում, չի ճշում, չէ որ մահը ցաւ է պատ-  
ճառում»: Պարաշան ծիծաղելով պատասխանում է.  
«Ո՞չ, մեռնելու ժամանակ մարդ ցաւ չի զգում: Պապի-  
կի լեզուն բռնւել է, ոչ ոքի էլ չի ճանաչում. կարծիս  
մի բան է կամենում ասել, բայց չի կարողանում, մի-  
այն աչքերը չուած նայում է ու շրթունքները շարժում»:  
Մեռնող պապիկի կերպարանքը նոր և աւելի զարհու-  
րելի տեսքով է պատկերանում մանկան երեսակայու-  
թեան մէջ, Այդ պատկերը միշտ նրա աչքի առաջն էր  
և քունը կտրել էր: Գալիս է մայրը և նրան իր կող-

քին է պառկեցնում, հանգստացնում, որից յետոյ երեխան քնում է: Թիշերւայ մէջ աչքերը բանալով, աւելի զարհուրում է—տեսնելով՝ չկան ոչ մայրն և ոչ Պարաշան. մոմլ հանգցրած է, միայն գիշերային փոքրիկ լապտերն է առկայծում, արձակելով աղօտ և երերուն լոյս: Խօսք չեմ գտնում արտայայտելու այն սոսկումը, որ պատեց ինձ: Կարծես եռման ջրով սիրտս խաշեցին ու ամբողջ մարմնովս անցաւ սարսուս: Մըտայ վերմակի տակ, գլուխս ծածկեցի և զգում էի՛ թէ ինչպէս սառը քափուքրտինքը պատում է ինձ: Իզուր փակում էի աչքերս, պապիկս կանգնած էր առջևս՝ շըրթունքները շարժելով՝ չուծ աչքերով նայում էր ինձ. այնպէս, ինչպէս պատմել էր Պարաշան... Եթէ այդ ժամանակ որևէ մի բան չզկար կամ ճոռար, թւում է ինձ, որ սոսկումից կը մեռնէի: Յանկարծ հեռւից լսեց սկիզբը լացի ձայն: Կարծեցի թէ երեսակայում եմ, բայց լացից յետոյ լսեց վայնասուն, հեծեծանք, կական. այդ ըոսկէին պապիկը հոգին աւանդել էր. նրա վրայ էին այդպէս լացուկոծ անում... Ես այլս անկարող էի դիմանալ, վերմակը յետ ձգեցի և սկսեցի ճշալ, և այնպէս սաստիկ, որքան ձայնս զօրում էր: Քոյրս զարթնեց և նա էլ սկսեց ծւալ: Մեր ճիշը լսեցին և եկան մեզ մօտ: Ցերեկն երեխայի հոգու արիութիւնը վերադառնում էր. նա իրեն հանգիստ է զգում մինչև երեկոյեան մթնշաղը, արեգակի մարող վերջին ճառագայթների հետ մարում է և մանկան հոգու արիութիւնը: Ցերեկը քոյրն առաջարկում էին բան, միասին գնան դահլիճը՝ տեսնելու ինչ կայ, նա խիստ զարհուրելի է, նայում է մի աչքով: Պարաշայի ամեն մի խօսքը սարսափով լցնում է աղայի հոգին, իսկ վերջին նկատողութիւնն այնպէս շանթահարեց երեխային, որ սենեակից դուրս պըծաւ (դահլիճն այդ սենեակին կից էր), փախաւ գնաց տան միւս ծայրը: Թոռնիկը ցանկանում էր՝ որքան կարելի է պապիկին շուտ դուրս տանեն տանիցը. նա համոզւած էր, եթէ ինքը նայէ պապիկին, պապիկը կը կենդանանայ ու իրեն կը բռնի: Դրանից երեսում է, որ քրոջ դայեակի պատմած առասպեկները մարդագայլի, քաջքերի և մեռեների մասին խոր արմատներ էին ձգել նրա հոգու մէջ և այժմ առաջանում էին զարհուրելի պատկերներ:

Մանկական երկիւղն ուսումնասիրող Փրանսիացի մի գիտնական 28 հոգուց կազմուած դասարանի աշակերտներին առաջարկում է այսպիսի մի գրաւոր աշխատանք, որ նրանցից իւրաքանչիւրը նկարագրէ իր կեանքի մէջ պատահած ամենազօրեղ երկիւղի գէպքը: Նա այդ աշխատանքները դասաւորում է այսպէս. եօթ աշակերտ նկարագրում են ցերեկը կամ գիշեր իրենց հետ պատահած երկիւղի գէպքեր առաւել կամ նւազ իրական վտանգի ժամանակ, օրինակ՝ երբ հետապնդել է եղը, յարձակւել է շուն և հարբած մարդ, երբ ջուրն է ընկել, սկսել է քթից սաստիկ արիւն հոսել. 13 հո-

գի էլ խիստ երկիւղ են զգացել ենթադրական վտանգ-գից, օրինակ՝ անսպասելի հանդիպումից, ծառի տերեների սօսափիւնից և ստւերից, որ ընդունել են աւագակի տեղ, կատակով վախեցրած դէպքից. 4 հոգի աւելի երկիւղ են զգացել երևակայական էակներից. 2-ը երբ ճանապարհը կորցրել են. 2 էլ երբ սպասելիս են եղել գործած յանցանքի արժանի պատիժը կը-րելու: Այդ աշակերտներն այնպիսի հասակում են ե-ղել, երբ արդէն բացակայում է զուտ ֆիզիքական եր-կիւղը, որ տեսողութեան և լսողութեան տպաւորու-թիւների միջոցով առանց պատճառի խիստ սարսափ է ազդում փոքրահասակ երեխաներին: Երկիւղի 28 դէպքումն էլ արդէն չենք տեսնում առանց պատճառի երկիւղ, նրանք վերաբերում են այն տեսակ երկիւղ-ների, որոնք կապւած են առաւելապէս դատողութեան-կամ երևակայութեան հետ: Դատողութեան հետ կապ-ւած դէպքը 11 (առաջին 7-ը վերջին 2+2), երե-ւակայութեան հետ 17 (13 և 4 դէպք): Ուրեմն, այդ հասակում երևակայական երկիւղի առարկաները բո-լոր ահաւոր առարկաների կիսից աւելի են, մինչդեռ այդ կարգի երկիւղի առարկաների թիւը այդ հասա-կից յետոյ հետզհետէ պակասում է:

Թէ ինչպիսի պայմաններում երկիւղալի առար-կաները մանուկների վրայ ունենում են թոյլ կամ զօրաւոր ազդոցովթիւն:

Վերոյիշեալ դէպքերից երկում է, որ մանուկների

կանոնաւոր զարգացումը երկիւղալի առարկաների վի-րաբերմամբ կայանում է հետևեալում: Մանկան աճ-ման հետ երկիւղալի առարկաների թիւը և նրանց տպաւորութեան ոյժը նւազում են հասակին մօտա-ւորապէս հակառակ յարաբերութեամբ. իսկ Փիզիքա-կան, առանց պատճառի երկիւղը՝ որ անմիջական կա-խում ունի տեսողութեան, լսողութեան և այլ զգա-յարանքների ամենահասարակ ու անվտանգ տպաւորու-թիւններից՝ անյայտանում է, նրան փոխարինում է գատողական և երևակայական երկիւղը, որը դպրոցա-կան առաջին շրջանում զարգանում է խիստ մեծ չա-փով, իսկ յետոյ հասակի, գիտութեան ու փորձառու-թեան զարգացման հետ այդ էլ պակասում է:

Այդպէս է մանուկների կանոնաւոր յարաբերութիւն-ների ընթացքը երկիւղի վերաբերմամբ: Այդ ընթացքն աւելի կամ նուազ չափով ձեափոխում է՝ նայելով ման-կան անհատական յատկութիւններին և նրա կեանքի ա-ռանձնակի պայմաններին: Դիտողութեան նիւթ դարձ-նել մանուկների բոլոր առանձնայատկութիւնները, ի հարկէ, անկարելի է, բայց ցանկալի է՝ թէ տեսական և թէ գործնական նպատակով գտնել և որոշել այն ամենաէական պայմանները, որոնք ազդում են մա-նուկների վրայ այսպէս կամ այնպէս վերաբերուել դէ-պի երկիւղալի առարկաները: Եւ որովհետեւ մանուկ-ների երկչուութեան մասին միայն կարելի է դատել արտաքին նշաններից, ուստի մենք էլ մատնանիշ կա-նենք այդ արտաքին նշանները:

Մանուկների երկիւղի ամենաքնորոշ նշաններն են՝ ճիչ, դողում և երեսի գունաթափութիւն։ Սրանց միանում են մի շարք ուրիշ նշաններ՝ վախեցած երեխան լաց է լինում, երեսի գծագրութիւնը փոխում է, աչքերը չուռում են, շնչառութիւնը կանգ է առնում, սիրաը սաստիկ բարախում է, մանուկը վախեցած առարկայից փախչում է, որքան ոտներում ոյժ կայ, որոնում է պատսպարան և պաշտպանութիւն. Նրա բուլը շարժողութիւնները, կերպարանքն այնպիսի մի արտայայտութիւն են ստանում, որ կարծես թէ երեխան հարւածից թագնւել է ուզում։ Բայց երբեմն երկիւղը զրկում է մանկանը շարժողութիւններ անելու կարողութիւնից. Նա մնում է անշարժ։ Մանուկն երեկոյեան լսելով մի որեէ զարհուրելի պատմութիւն, վախենում է նստած տեղից շարժւել, կարծես գամւած է իր տեղում։ Մի որեէ առարկայի յանկարծակի յայտնւիլն երեխային զրկում է շարժողութեան ընդունակութիւնից։ Փողոցում յանկարծ մի հինգ տարեկան երեխայի վրայ է գալիս ձիաքարշը, անցորդների և կառապանների աղաղակները չեն կարողանում ստիպել այդ մանկանը տեղիցը շարժւելու, մինչև որ անցորդներից մէկը նրան ըռնում և մի կողմ է քաշում։ Երեխաններն երկիւղի ազդեցութեան տակ շատ անգամ պապանձւում, ոչ մի խօսք չեն արտասանում, ըոպէապէս կորցնում են իրենց յիշողութիւնը և նրանց գաղափարները բոլորովին շփոթւում են։ Աւելի երկչոտ մանուկները հարցաքննութեան ժամանակ կորցնում են խօսելու ընդունակութիւնը, իսկ մի քանիսն

էլ որեւէ օպերացիայից առաջ, օրինակ՝ ծաղկի պատւաստումից՝ ուշաթափ ընկնում են գետին։ Բացի դրանից, մանուկներն երկիւղից ստանում են զանազան հիւանդութիւններ։

Այժմ որոշենք այն պայմանները, որոնք նպաստում են երկիւղի զարգացմանը կամ արգելում են նրա զարգացումը։

Երկիւղի ներգործութեան համար ամենաէական պայմաններից մէկը կազմւածքի առողջական վիճակն է։ Երկիւղով է միշտ արտայայտում մէկի անզօրութիւնը կամ վատուժութիւնը։ Շատ զօրեղ արարածներն աներկիւղ են, չըկայ այնպիսի մէկը, որից նըրանք վախենան. ոչ ոք չի համարձակւիլ նըրանց վընասել. ամեն մի մեծ փորձանք կամ վտանգ իրենց հզօրութեամբ կարող են իրենցից հեռու վանել։ Այդ պատճառով վատուժութիւնը երկիւղի զարգացման համար յարմար հող է։ Ուսումնարաններում և ընտանիքներում արած գիտողութիւնները հաստատում են, որ երկչոտ մանուկների ֆիզիքական ոյժը—առանձնապէս մկանային ոյժը—միջին չափից աւելի ստոր է։ Այդպիսի մանուկներն ունենում են դիւրաթիք և քնքոյշ կազմւածք, լինում են նեարդային, զգայուն, մարմնամարզութիւն չը սիրող և նրա մէջ անյաջողակ, իսկ երբեմն ուղղակի աչքի են ընկնում իրենց սակաւարիւնութեամբ և վատառողջութեամբ։ Երկչոտ երեխանների ֆիզիքական վիճակը յաճախ բնորոշում են «նեարդային» բառով, որով կամենում են ասել, թէ այդպիսի երեխան ունի շարժուն կերպարանը, շուտ է յոգնում,

շուտ է գրգռւում, մէկ տրամադրութիւնից արագ փոխւում է հակառակ տրամադրութեան, անընդունակ է երկարատև և միակերպ աշխատանքի:

Ֆիզիքական և երկիւղի մէջ եղած սերտ կապն յայտնի երկում է այն հանգամանքից, որ ծանր և մաշող հիւանդութիւններից յետոյ այն երեխանները, որ մինչև այդ ժամանակ ամենամին վեհերուտ չէին՝ դառնում են երկուտ: 11 տարեկան մէկ երեխայ հիւանդանում է տիֆով: Մինչև հիւանդութիւնը նա խիզախ և համարձակ երեխայ էր, իսկ հիւանդութիւնից յետոյ փոխւում դառնում է կասկածոտ, քաշւող և ուղղակի երկուտ: Եթէ ուսուցիչն սպառնում էր նրան պատժել, երեխան երկիւղից գլխապատճու դպրոցից դուրս էր փախչում, գնում թագնուում էր մի ծածուկ տեղ և այլ ևս չէր կամենում դպրոց գնալ, միայն բռնութեամբ էին դպրոց վերադարձնում: Ֆիզիքական հզօրութիւնը, եռանդը, ուժերի հարուստ պաշարը՝ ահա սրանք են երկիւղի դէմ ամենալաւ պաշտպանները:

Իսկ ինչ վերաբերում է մանուկների մտաւոր և բարոյական յատկութիւններին, թէ սրանցից որոնք են նպաստում երկուութեան զարգացման և որոնք արգելում՝ մինչեւ այժմ եղած դիտողութիւնների վրայ հիմնելով շատ դժուար է որոշ պատասխան տալ: Միայն այսքանը կարելի է ասել, որ մտաւոր յատկութիւնների վրայ եղած դիտողութիւնները ցոյց են տւել, որ երկիւղի զարգացումը կախում չունի մտաւոր գործողութիւններից: բայց և այն էլ պէտք է ասել, որ նրանց փոխադարձ զարգացման մասին

արած դիտողութիւններն անբաւարար են: իսկ մինք մեր կողմից ենթադրում ենք, որ մտաւոր զարգացումը բաւական չափով թուլացնում է երկչոտութիւնը: Մանուկները շատ առարկաներից վախենում են նրանց հետ ծանօթ չլինելու պատճառով, բայց երբ աւելի մօտիկից են հետազօտում, համոզում են, որ նրանք երկիւղալի չեն: Այդ տեսակ երկիւղը, ինչպէս արդէն վերև ցոյց տւինք՝ հասակի և փորձառութեան հետ աստիճանաբար նուազում և անյայտանում է: Եթէ վայրենուն և քաղաքակրթւած մարդուն համեմատենք միշմեանց հետ երկիւղի կողմից, կը տեսնենք, որ առաջինը անհամեմատ աւելի յաճախ և աւելի սաստիկ է ենթակայ երկիւղի, քան թէ երկրորդը: Բնութեան ահաւոր երկոյթները, թշնամի հզօր աստւածներն ու ոգիները, մնոտիապաշտական սարսափիները միծ տեղ են բռնում վայրենի մարդու կեանքի մէջ, մինչդեռ այդ տեսակ երկիւղները համարեա անծանօթ են կըրթւած մարդուն: Այդ պատճառով մենք ենթադրում ենք, որ մտքի զարգացումը մարդուն ոչ միայն երկիւղի տրամադիր չի դարձնում, այլ ընդհակառակն՝ նրանց վերցնում է երկիւղը: Գիտութիւնները, մտաւոր լոյսը հալածում են մարդկային մտացածին շատ երկիւղներ, ինչպէս ցերեկւայ լոյսը վանում է գիշերւայ ահաւոր տեսիլները:

Մտաւոր յատկութիւններից երկիւղի արամադիր կարող է գարձնել վառ երեակայութիւնը: Եթէ մանուկը վառ գոյներով է իրեն ներկայացնում զանազան առարկաներ, անձնաւորութիւններ ու դէպեր, եթէ

կարողանում է նրանց գուգորդել նորանոր ձերով՝  
երկար ժամանակ և պայծառ պատկերացած կը մնան  
նրանք մանկան զիտակցութեան մէջ և կառաջացնեն  
ձնշող աղբեցութիւն:

իհարկէ վառ երևակայութիւնը կարելի է ուղղել գէպի զանազան առարկաներ և զանազան կողմեր: Երեակայութեան ստեղծագործութիւնը կարող է ունենալ իրական բնոյթ, կարող է զբաղւել ամենակիենասկան՝ մինչև անգամ զիտութեան հետ առընչութիւն ունեցող՝ խնդիրներով, բայց և կարող է ստանալ խառնաֆնթոռ, երազական ուղղութիւն: Ահա երեակայութեան այս վերջին ուղղութիւնը նպաստում է երկիրդի զարգացման: Այդպէս, ոչ թէ առհասարակ վառ երևակայութիւնը, այլ որոշ ուղղութեան վառ երևակայութիւնն է նպաստում երկիրդի զարգացման. իսկ մըտաւոր և իրական առարկաների հետ առընչութիւն ունեցող երեակայութեան ուղղութիւնները կարող են երկիրդի զարգացման թշնամի լինել: Դրանով կարելի է բացատրել, որ վառ երևակայութիւն ունեցող մասուկներից ոմանք երկշռու են, իսկ ոմանք՝ ոչ:

Կամքին վերաբերեալ յատկութիւններից մասուկ-ների երկչուտութեան ամենամիջաւոր դաշնակիցներն են կամքի թուլութիւնը, իրեն իշխելու, զսպելու և կենտրոնանալու անզօրութիւնը, նոյնպէս փափկասի-րութիւնը և զգայնութիւնը։ Որևէ անձն որբան աւելի զուրկ է հաստատակամութիւնից և ներքին դիմադրող ուժից, որքան նա աւելի թուլամորթ է և մատչելի կողմանակի տղեցութիւնների՝ այնքան էլ նա աւելի

Երկիւղը է: Երկիւղը գալիս է արտաքին կողմից, եթէ նա որևէ դիմագրութեան չը հանդիպէ, զլխովին կը գերէ մարդուն: Երեխային երկիւղ աղդող առարկաները չափազանց շատ են: Այն երեխաները, որոնք ունին զօրեղ կամք, բնաւորութիւն, իշխանասիրութիւն, ու ամեն տեղ առաջին դիրքը գրաւելու ձգտում՝ նըրանք հեշտութեամբ անձնատուր չեն լինում երկիւղի, նրա դէմ կրուում են, աշխատում են իշխել իրենց վրայ, իսկ թոյլ կամքի տէր երեխաներն ամբողջովին ենթարկւում են երկիւղի աղդեցութեան, մանաւանդ զլխովին երկիւղի զոհ է այն կակուղ և թոյլ բնաւորութեան երեխան, որի հետ վարւում են խստութեամբ և ենթարկում են զաժան պատիճների. կամ թէ որևէ ժամանակ զգացել է սաստիկ երկիւղ և այդ նրա յիշողութեան մէջ թողել է խոր տպաւորութիւն:

Մի քանի հետազօտողներ փորձել են որոշել երկ-  
չոս մանուկների տոկոսը, օրինակ՝ դպրոցներում: Ի  
հարկէ, այդ խնդիրը բաւական դժուար է: Բոլոր մա-  
նուկներն առաւել կամ նուազ չափով երկչոս են, հա-  
մաձայն իրենց անձնական յատկութիւններին և այն  
պայմաններին, որոնց մէջ նրանք մեծանում են. Հկայ  
այնպիսի մի մանուկ՝ բացի թուլամիտներից և հոգե-  
կան հիւանդներից՝ որ մի որևէ առարկայից չը վախե-  
նայ: Երկիւղը բոլորովովին բնական, թէս անհաճոյ՝ մի  
զգացում է, նա անխզելի կերպով միացած է մանկան  
ֆիզիքական և բարոյական թոյլ ուժերի հետ, և մա-  
ստանդ գրան նպաստում է այն հանգամանքը, որ մա-  
նուկները գեռ ևս չեն ճանաչում իրենց շրջապատող

ակսում է զարգանալ երրորդ տարում. մինչդեռ հաստատ է, որ այդ զգացումը մանկան մէջ պարզ և որոշակի երևան է գալիս նրա կեանքի առաջին տարում, նոյնիսկ առաջին կիսում, մինչև անգամ առաջին երկու շաբաթներում: Դարւինը հաստատում է, որ իր երեխան վախենում էր առաջին երկու շաբաթներում. եթէ լսում էր յանկարծական աղմուկ՝ աչքերը քթթում էր: Դարւինը նման դէպքեր նկատել է իր միւս երեխաների վրայ միևնոյն հասակում: Աւելի ուշ հասակում զանազան դէպքերի առիթով երկիւղի արտայայտութիւնը եղել է աւելի որոշ: Երբ մանուկը 66 օրական էր, Դարւինը պատճառաբար փաշտում է, երեխան սաստիկ վեր է թռչում, ճակատը կնճռուառ է, թռում է վախեցած և սկսում է խիստ ճչալ և մի ժամ անցնելուց յետոյ էլ ամենաչնչին աղմուկը նրան վախեցնում է: Երկիւղը մանկան կանուխ զգացումներից մէկն է. նա առարկաների, նրանց վասակար ու վանագաւոր յատկութիւնների հետ գեռ չը ծանօթացած՝ այդ զգացողութիւնն արդէն ունի:

Եւ որովհետև մանուկները վախենում են առաջին անգամ տեսած անվնաս և անմեղ առարկաներից, ուստի հասկանալի է, որ փորձի վրայ հիմնուած աչ մի պատճառ չկայ այդ պատճկաներից վախենալու: Հետեւաբար մանկան երկիւղն իր սկիզբն առնում է ոչ վիրձից. մանուկների մէջ կայ երկիւղի բնուծին հակամիտութիւն, որ փորձից նախընթաց է՝ պատճառ է լինում երկիւղի երևան գալուն: Ի՞նչ պէս պէտք է հաս-

առարկաների և երևոյթների յատկութիւնները: Այդ պատճառով երկիւղը մանկան հոգու և նրա հոգեբանութեան անխուսափելի բաղադրիչ մասն է: Հետևաբար ովկ կամենում է որոշել երկչոտ մանուկների տոկոսը, նա չը պէտք է աչքի առաջ ունենայ այդ բոլորվին բնական և անխուսափելի երկիւղը, այլ չափաղանց յաճախ, չափաղանց զօրեղ և տանջող երկիւղը. նա միայն հաշուի պէտք է առնէ յաճախ և զօրեղ երկիւղը. կրող մանուկներին, մէկ խօսքով «երկիւղի նահատակներին»:

### Մանկան երկիւղի պատճառները

Մանկան երկիւղն ունի ոչ թէ մէկ, այլ մի քանի պատճառ, նրանց մէջ ամենազլխաւորն և հիմնականը ժառանգականն է—մանկան երկչոտութեան բլնածին հակումը:

Մանկան մէջ երկիւղի երևան գալը զանազան դիտողներ զանազան ժամանակ են դնում, օրինակ՝ 7—8 ամսական հասակում, երրորդ ամսում և մինչև անգամ՝ երկրորդ շաբթում: Երկիւղի երևան գալու ժամանակի տարբերութիւնը շատ մեծ կախում ունի դիտողութեան ճիշտ և ուշադիր լինելուց և այն հասկացողութիւնից, որ դիտուր կազմել է երկիւղի և նրա արտայայտութիւնների մասին: Բինէն հաստատում է, որ մանուկներն երկու տարեկանից աւելի առաջ երկիւղ չեն զգում, իսկ մի քանի չփառող կանայք նրան հաղորդել են, որ երկիւղի զգացոււքը մանուկների մէջ

կանալ երկիւղի բնածին հակամիտութիւնը, ի՞նչ բան  
է նա ըստինքեան:

Մի քանի հետազօտողներ հաստատում են, որ  
երկիւղի զգացումը առնասարակ բոլոր մանուկների  
համար էլ բնածին է, իբրև կազմակերպւած պատ-  
րաստի հոգեկան զգացում. այդպիսի պատրաստի ժա-  
ռանդական զգացողութիւնը յատուկ է և կենդանինե-  
րին, օրինակ՝ թոշուններն ունին այդ զգացողութիւ-  
նը հէնց աշխարհ գալու րոպէից: Այդ ձեռվ երկիւղի  
բնածին զգացում չկայ: Որևէ որոշ զգացողութիւն զգա-  
լու համար հարկաւոր է ունենալ—1) որոշ կազմու-  
թեամբ նեարդային համակարգութիւն և 2) գրգիռ:  
Ամբողջ հոգեկան կեանքի գործարանը նեարդային հա-  
մակարգութիւնն է, նրա կազմութեան ամեն տեսակ  
թերութիւններն իրենց ազդեցութիւնն արտայայտում  
են հոգեկան կեանքի գործունէութեան մէջ: Եւ որով-  
հետև նորածին մանկան նեարդային համակարգու-  
թիւնը դեռ հեռի է վերջնական և կատարեալ կազմու-  
կերպութիւնից, ահա-այստեղ, այս առաջին պարագա-  
յում—հանդիպում ենք այնպէս խոչընդոտների, որոնք  
մեղ թոյլ չեն տալիս նորածին մանկան մէջ ենթա-  
դրել որոշ հոգեկան դրութիւններ, իթիւս որոնց և եր-  
կիւղի զգացում:

Բացի դրանից երկիւղի զգացում առաջանալու  
համար անհրաժեշտ է արտաքին տպաւորութիւն, այս-  
ինքն՝ որևէ երկիւղալի առարկայի գործողութիւն:  
Եթէ այդպիսի առարկայ չըկայ, զգացողութիւն էլ չի  
առաջանայ, որովհետև միայն պատրաստ կը լինի եր-

կիւղի ծագման հնարաւորութիւնը՝ իբրև որոշ կազմու-  
թիւն ունեցող նեարդային համակարգութիւն: Արտա-  
քին գրգիռների բացակայութեան պատճառով այդ հը-  
նարաւորութիւնն էլ կը մնայ իբրև սոսկ հնարաւորու-  
թիւն: Իսկ որտեղ են արտաքին գրգիռները մինչեւ  
ծնունդը: Պարզ է, այդպիսի գրգիռները չըկան, հետե-  
ւարար չը կայ և երկիւղի իբրև պատրաստի կազմա-  
կերպւած զգացում:

Այդպէս, բնածին երկիւղ ասելով պէտք է հասկա-  
նալ նեարդային համակարգութիւնը, որ հակամէտ է  
երկիւղի, այսինքն՝ որ պատրաստ է բազմազան տպա-  
ւորութիւններն ընդունել իբրև երկիւղալի տպաւորու-  
թիւններ: Ամեն մի նորը, անծանօթը, որ զօրեղ կամ  
թոյլ տպաւորութիւն է առաջացնում, նեարդային հա-  
մակարգութիւնն իր ներկայ կազմութեամբ զգում է իբրև  
մի զարհութելի, ահաւոր վտանգաւոր, չար բան: Բայց  
որտեղից է առաջացել այդպիսի հակում, ի՞նչպէս է  
նա կազմւել մեր նեարդային համակարգութեան մէջ:

Երկիւղի զգացումն ամենասովորական է եղել  
մարդու գիտակցութեան մէջ. այնպէս էլ նա մնացել է  
մինչեւ այժմս, հաւանական է՝ կը մնայ և ապագայումն  
էլ. դեռ երկար ժամանակ պիտի գտնւենք երկիւղի  
ազդեցութեան տակ: Կենդանիներն ևս ենթակայ են նոյն  
զգացողութեան, զոյութեան կուի օրէնքն իշխում է նը-  
րանց կեանքի մէջ, իսկ այդ օրէնքն երկիւղի և սարսափի  
օրէնք է: Իւրաքանչիւր կենդանի ստիպւած է վախե-  
նալ իրենից հզօրագունից: Իւրաքանչիւր կենդանի պի-  
տի կուի իր կեանքի պաշտպանութեան համար: Կեն-  
դանիները, մանաւանդ ստորին կարգի, ծնւում են այն-

պիսի մի անհամար բազմութեամբ, որ դրանց բոլորի համար ոչ միայն կերակուր չէր բաւիլ, այլև ընակութեան տեղ անգամ չէր գտնւիլ: Նրանցից ահազին մեծամասնութիւնը պիտի որ ոչնչանայ, իսկ բոլոր մնացեալներն իրենց ընկերների և հարեամների հետ ընակութեան տեղի և կերակուրի համար կատաղի և օրհասական կոիւ պիտի վարեն: Ամբողջ գործարանական աշխարհը գտնւում է յարատե, անընդհատ և անողոք կռւի մէջ և բոլորը միասին հնդակայ են կըուին յարակից երկիւղի ձնշման, կենդանիների վրայ ծանրացող այդ օրհասական ձնշումից չէր կարող ազատ մնալ և մարդը նա ծնւել է երկիւղի մէջ, բարուրւել է ահով, մեծացել սարսափով:

Նախնական մարդը համարեա միշտ երկիւղի մէջ է. նա վախինում է վայրի գազաններից, որոնք նրանից անհամեմատ զօրեղ են, վախինում է բնութեան ահաւոր երևոյթներից, վախինում է իր ցեղին թշնամի հարևան ցեղից, վախինում է իր ցեղի մէջ գտընող զօրեղ և իշխանութեան տէր մարդկանցից, վախինում է աստւածներից և զանազան ոգիներից, որոնք զօրաւոր են, պահանջկոտ, վրէժինդիր և չար: Երկիւղը նախնական մարդուն հալածում էր ամենքայլափոխում: Իհարկէ կային բաղդաւոր ցեղեր, որոնց մօտ երկիւղն այնքան էլ շատ չէր, որոնց կեանըը լի էր ուրախութեամբ և երջանկութեամբ, բայց այդպիսիների թիւն եղել է սակաւ. մեծամասնութիւնը գտնւել է երկիւղի տակ:

Քաղաքակրթութեան դարգացման հետ նւազել է

Երկիւղը, փոխւել է ուրիշ ձեռքի, բայց դեռ հեռու է բոլորովին վերանալուց. վատ չէր լինի, եթէ աւելի պակաս լինէր: Օրինակ՝ օրէնքներ հաստատւելուց յետոյ առաջացաւ օրէնքների պատժի երկիւղ, որը գնալով ընդարձակւել և ընդունել է զանազան ճիւղաւորութիւններ ու ձեռք—պատիմների երկիւղ ընտանիքում, ըրէական պատիժ, եկեղեցական պատիժ, հասարակական կարծիքի դատապարտութիւն և այլն և այլն: Մէկ խօսքով կրթւած մարդու կեանքը ծնւած օրից մինչև գերեզման լի է երկիւղով, որը նրա հոգեկան յոյզերի մէջ նշանաւոր տեղ է գրաւում: Սերնդից սերունդ, երկար դարերի ընթացքում և մարդիկ և կենդանիները տարւել և ապրել են երկիւղով: Այդ պատճառով իվերջոյ մարդն էլ օրգանապէս հակամէտ է դարձել երկիւղի. նրա մէջ առաջացել է մի անյաղթելի ձըգտում ամեն տեսակ նոր զգացողութիւնները համարել իրեւ երկիւղալի տպաւորութիւններ: Ներկայ մարդը բնութեամբ երկչոտ մի արարած է, որի ապացոյցն է նրա մէջ արմատացած սարսափի գոյութիւնը: Թէ ինչ է սարսափը, գիտէ ամեն ոք,—այդ անսպասելի երկիւղ է:—Յանկարծ լուսթեան մէջ լսւում է մի ձայն, խաւարի մէջ փայլատակում է մի լոյս, գիշերը որևէ կարծը կամ փափուկ առարկայ դիպչում է մեր մարմնին,—այդ գէպքերում զգում ենք սարսափ, թէև երբ ըննում ենք, յայտնւում է, որ ձայնը առաջացրել է վայր ընկնող աթոռը, լոյսն ընկել է վառւող լապտերից, պատահարար դիպել ենք հէնց մեր ձեռքով գրած բարձին,—բայց և այնպէս սարսափն արդէն տեղի է

ունեցել: Ի՞նչու ենք սարսափահար լինում: — Այն պատճառով, ինչ պատճառով սարսափահար է լինում մանուկը տեսնելով աքաղաղ, չնիկ, գլխարկ, դիմակ, կամ լսում է ժամացոյցի հարւածը, փողոցում բարձրացած աղաղակը և այլն և այլն, այսինքն՝ այդ պատճառում է շնորհիւ մեր նեարդային համակարգութեան առանձին գրութեան, որ այդպիսի կազմութիւնն է ստացել հազարաւոր դարերի ընթացքում: Ինչպէս մենք ինքներս չենք կարողանում համոզել մեզ, որ չը վախենանք բոլորովին անվտանգ երկոյթներից (որովհետև մեր սարսափի պատճառներն իվերջոյ յայտնուում են չնչին), այնպէս էլ չենք կարողանում հասկացնել մանուկներին չը վախենալ ոչ երկիւղալի առարկաներից: Հասակաւորները կըզգան սարսափ, իսկ մանուկներն երկիւղ, երբ կը հանդիպեն նոր, մինչև այդ բոպէն իրենց անծանօթ երկոյթների և առարկաների, որովհետև այդպէս է կազմւած նրանց նեարդային համակարգութիւնները: Փոխեցէք նեարդային համակարգութիւնը, և ահա այն ժամանակ միայն կըչքանան սարսափին ու երկիւղը:

Հասակաւորներն ու մանուկներն ստէպ առանց պատճառի ունենում են երկիւղի զգացում. այդ կարելի է բացատրել միայն երկիւղի բնածին օրգանական հակամիտութեամբ: Այդպիսի տրամադրութեան ժամանակ ամենաչին խշշոյն ստիպում է մարդուն ցնցել, ամենաանվտանգ առարկան՝ մինչև անդամ ժանօթ անձի յանկարծական յայտնւիլը՝ սասսափեցնում է: Այդպիսի հանդամանքում մարդ իրեն չի կարողա-

նում յաղթել: Առանց պատճառի երկիւղ ստէպ ունենում են մանուկները. նրանք գիշերն երբեմն արթնանում են սարսափահար, նոյնիսկ եթէ քնելուց առաջ ոչ մի զարհուրելի պատճութիւն էլ լսած չեն լինում, և, ըստ երեսութիւն, եղել են առողջ: Այդպիսի դէպքերում իրենց հանգստացնելու համար նրանք պահանջում են ճրագը վառել կամ իրենց հետ մի քիչ զրոյց անեն. առաջարկում են հարցումներ, որոնց պատասխանը, ի հարկէ, լինում է իրանց հոգեկան զրութեան համար նպաստաւոր: Հարցումները վերաբերում են զանազան երկիւղալի առարկաների, որոնց վրայ կենտրոնացած է նրանց երկիւղը և հոգու վրդոված դրութիւնը, օրինակ՝ աւազակների, գայլերի, առիւծների և այլն: «Մայրիկ, երեկոյեան ուշ ժամանակ ձայն է տալիս մանուկը մօրը: «Ի՞նչ ես կամենում, զաւակս»: — «Քաղաքում աւազակներ չեն լինում»: — «Չեն լինում»: — «Երանք հօ մեր տունը չեն կարող մտնել, չե»: — «Չեն կարող»: — «Դու այդ հաստատ գիտես»: — «Հաստատ գիտեմ»: Ապա երեխան հանգստանում և նորից քնում է: Այդպիսի դէպքերում միշտ միենոյն տեսակ հարցումներն են առաջարկում և պատասխաններն էլ առաջուց պատրաստ են լինում, բայց զրոյցն այնուամենայնիւ հանգստացնում է մանկան յուղւած հոգին:

Պէտք է ասել, որ կենգանիների նեարդային համակարգութիւնը նոյնպէս տրամադրի է երկիւղի, ինչպէս և մարդոցը: Նոր անվտանգ տպաւորութիւնները, մանաւանգ անսպասելիները՝ թւում են կենդանիներին երկիւղալի: Եթէ գիտենք ճնճղուկներին, աղաւ-

նիներին, կատուներին, շներին, ձիերին, կովերին և այլ միւս կենդանիներին, որոնք ապրում են մեր տըներում կամ մեր շուրջը, կը տեսնենք, որ նոր տպաւորութիւնը նրանց մէջ առաջացնում է անդիմադրելի երկիւղ, օրինակ՝ շոգեմեքենան ձիուն, շոգենաւը կամ գործարանի զիլ սուլոցը շանը և այլն: Մէկ տան մէջ վանդակում երկու շաբաթ ապրում էր արդէն կիսով չափ ընտելացած մի ճնճղուկ, որին երբեմն վանդակից դուրս էին թողնում սենեակի մէջ թոչելու: Մէկ անգամ վեցամսական կատուն մտնում է այդ սենեակը և, ըստ սովորութեան՝ բարձրանում է մահճակալի վրայ: Ճնճղուկը թուզում մահճակալի մօտ կանգնում է կատւի դիմաց: Կատուն վախենում է, երեք անգամ «փ-փ-Փ» է անում և սարսափահար մտնում է անկողնի տակ, որտեղից դռւրս է գալիս միայն մի քանի ժամ անցնելուց յետոյ:

Մանկան երկիւղի միւս պատճառն էլ նրա փոշառառութիւնն է տանջանքի մէջ: Իւրաքանչիւր մէկին էլ վիճակում է ունենալ անհաճոյ զգացողութիւններ, իւրաքանչիւր մէկին էլ վիճակում է տանջւել: Իւրաքանչիւր մի մանուկ ունենում է անխուսափելի տհաճութիւններ, օրինակ՝ սովորական գործունէութիւնից յոգնածութիւն, լսողութեան, տեսողութեան, հոտառութեան, ճաշակի, շօշափման, չափազանց զօրեղ կամ չափազանց թոյլ տպաւորութիւններ. տանջանք, քաղցից, ծարաւից, խոնաւութիւնից և ցրտից, տանջանք զանազան հիւանդութիւններից, որոնցից անքաժան են բազմաթիւ և բազմատեսակ անյարմարու-

թիւններ և զրկանքներ: Այդ բն ական տանջանքների վրայ աւելանում են և այլ բարձական տանջանքներ, որ առաջ վմաթիւ զուտ արւեստաներն իրենց յարաբերութ լացնում են հասակաւորչերն իրենց յարաբերութ համբ մանուկների հետ: Մինչև այսօր մանուկներ ահազին մեծամասնութիւնը դաստիարակւում է բուռակներ կամ նւազ չափով նրանց վիշտ ու տանջ: Անց պատճառող դաժան պատիժների սիստեմով: Պահիմները կարող են լինել ոչ միայն մարմնի, ական, այլ և քարոյական, որոնք համարեա մարմնական պատիժներին հաւասար տանջանք են պատճառում մ: անուկներին:

Մ, մնուկների կեանքը հետազօտող միքանի բանասէրներ, աչքի առաջ ունենալով նրանց բազմատեսակ տիա, ճութիւնները, վշտերն ու տանջանքները, մի այսպիսի լուրջ հարցում են առաջարկում՝ մանուկների կեանքի մէջ աւելի շատ են բաւականութիւնները, թէ տհաճութիւնները:

Առաջարկած խնդիրն ինչպէս կամենում են, թող վճռեն, միայն մի բան անկասկած է՝ որ մանկական տանջանքները չափազանց շատ:

Մանկան տանջանքներն անմիջական կապ ունեն նրա երկիւղի հետ: Երկիւղն է սպասումն վերահաս տանջանքի: Հետեւաբար որքան շատ են մանուկների տանջանքները, որքան նրանք զօրեղ ու բազմատեսակ են, այնքան էլ երկիւղն աւելի շատ է: Երկիւղը, առանձնապէս նրա լարւած գրութիւնն ու խստութիւնը՝ անմիջական կախումն ունի մանկան տանջանքների քանակութիւնից և ուժից: Ոչ կամինքում է մանուկնե-

րին պաշտպանել երկիւղից, նա հոգածութեամբ նըանց պիտի հեռու պահէ և տանջանքներից: Մանուկն որքան ուշ ծանօթանայ տանջանքների ու որքան աւելի սակաւ կրէ տանջանքներ, այնքան աւելի անվեհեր կը լինի:

Կրած տանջանքների փորձառութիւնը մանուկների զարգացման համար այնպիսի մեծ նշանակութիւն ունի, որ մի քանի հոգեբաններ հնարաւոր են համարում ամբողջ մարդկային երկիւղն առաջացնել կրած տանջանքների փորձառութիւնից: Այդպիսի կարծիք ունի Լոկկը: Նա հաստատում է, որ մարդկային հոգու մէջ չկան ոչ բնածին գաղափարներ և ոչ բնածին ընդունակութիւններ. նա ամբողջ հոգեկան կեանքն առաջացնում է արտաքին և ներքին փորձառութիւնից: Նա ասում է. մանուկների մէջ չկայ բնածին երկիւղ, մինչեւ անգամ նրանք չունեն երկիւղի բնածին հակում. մանուկներին իրնէ անծանօթ են սարսափն ու երկիւղը, նրանք անսահ են, նրանք պատրաստ են աներկիւղ մօտենալ ամենազարհուրելի առարկաների: Փորձառութեամբ երկիւղ առաջանում է երկու միջոցով—առաջինն է լրած տանջանքը և երկրորդը՝ բաւականութիւնից զրկելը: Մանուկը հէնց որ մի քանի անգամ մասսում է, սկսում է իր կրած տանջանքը զուգորդել ուրիշ առարկաների հետ և նրանցից վախենալ. իսկ միքանի առարկաների հետ էլ զուգորդում է բաւականութիւնն և զրա հետ միասին այդ բաւականութիւնից զրկելու երկիւղը: Այդպէս, Լոկկի կարծիքով, մանկան երկիւղը նոր անծանօթ անձնաւորութիւնից բացատրում է ոչ թէ տպաւորութեան նորութեամբ ու զօրեղութեամբ,

այլ երկիւղով, թէ նոր եկող անձն իբրև գործունեայ անդամ մուտ գործելով այն փորձիկ աշխարհը, որի մէջ ապրում է մանուկը՝ կարող է մանկանը զրկել այն յարմարութիւններից ու բաւականութիւններից, որոնք սերտ կապւած են մանկանը շրջապատող նախկին անձնաւորութիւնների հետ: Լոկկի կարծիքով՝ երկիւղն իրնէ այնքան օտար է մանուկների ընութեան, որ մինչեւ անգամ օգտակար է նրանց մէջ պատւաստել այդ յատկութիւնը (երկիւղը), որպէսզի նրանք լինին զգաստ և շրջանայեաց:

Ի՞արկէ, անտարակուսելի է, որ մանկան երկիւղը զուտ փորձնական զգացում ընդունելը՝ ճիշտ չէ, որովհետեւ բաղմաթիւ են այն փաստերը, որ ապացուցանում են, թէ մանուկների և կենդանիների երկիւղը շատ առարկաներից ու երեսյթներից՝ աւելի առաջ է, քան թէ փորձնական և բաւականութիւնից զրկելու երկիւղը: Բայց և այնպէս երկիւղի փորձառութեամբ առաջ գալու ենթադրութիւնը, իբրև հաստատութիւն մեր խօսքերի՝ ընդգծում է այն անխղելի կապը, որ գոյութիւն ունի երկիւղի և տանջանքի մէջ: Այդ ենթադրութիւնը մեր ուշադրութիւնը դարձնում է այն հանգամանքի վրայ, որ երկիւղն առաջ է գալիս ոչ միայն պատճառած դրական տանջանքից, այլ և երբ մեզ պատկերացնում ենք, թէ զրկելու ենք սովորական բաւականութիւններից:

Մանուկների երկիւղի ընդարձակ զարգացման երրորդ և վերջնական պատճառն է ակամայ նմանադութիւնը մեծերին: Երկիւղն այն տեսակ զգացումնե-

րից է, որոնք տարածւում են արագ, կարճ ժամանակում վարակելով բազմութիւններ։ Իւրաքանչիւրին յայտնի է յանկարծահաս ահը (պահика), թէ ինչպէս նա հզօր է, անդիմադրելի և արագ։ Նա արագութեամբ տարածւում է ամբողջ գորաքանակների վրայ, խլում է նրանցից ոյժը և քաջութիւնը։ Երկիւղի այդ վարակումը մեծերից փոխանցւում է մանուկներին։ Իսկ հասակաւորներն իրենք գտնւում են երկիւղի ներքոյ։ Հասակաւորների մէջ կան բաւական թւռվ երկչոտներ, որոնք պատրաստ են չնչին առիթից սարսափահար լինելու։ Մանուկներն ապրելով հասակաւորների շրջանում, նրանցից վարակում են երկիւղով։

Մանուկների վարակումը երկիւղով լինում է երկու տեսակ—աստիճանաբար և վայրկենական։ Առաջին տեսակն այն է, երբ մանուկը փոքրառփոքը ենթարկում է իրեն անծանօթ կարգերի ազդեցութեան և սկսում է զգալ այնպիսի երկիւղ, որ առաջ չունէր։ Օրինակ՝ մանուկը չէր վախենում խաւարից, առանց երկիւղի քնում էր միայնակ, մութ ժամանակ դուրս էր զալիս փողոց, միայնակ գնում փնտում էր հեռաւոր և աղօտ լուսաւորւած սենեակում որևէ իր և այլն։ Անա այդ մանուկը մօտ երկու ամիս հիւր լինելով իր ազգականների տանը, վերադառնալով իրենց տունը՝ ծնօդների մօտ՝ վարակւած նոր երկիւղներով—խաւարի, հեռաւոր սենեակների, երեկոյեան աղօտ լուսաւորւած փողոցների և այլն։

Յանկարծական վարակում երկիւղով առաջանում է այն դէպում, երբ մանուկը պատահում է որևէ զօ-

րել և նոր տպաւորութեան, չիմանալով թէ ինչպէս վերաբերւի այդ տպաւորութեան, արդեօք երկիւղալի՞ է այն, թէ ոչերկիւղալի։ Այդպիսի դէպքերում հասակաւորների վերաբերմունքն ուղղակի վճռում է՝ թէ ինչպէս կը լինի մանուկների վերաբերմունքը։ Այն ժամանակ, երբ մանուկները դպրոցումն էին՝ կայծակը խփում է դպրոցի շինութեան մօտ և յորդ անձրեն էլ հեղեղում է բակը։ Բոլոր մանուկներն էլ բնագդով իրենց աչքերը յառում են վարժուհու երեսին, ոչ միայն պաշտպանութեան և քաջալերութեան համար, այլ և հարցումով՝ թէ կմյ արդեօք երկիւղալի բան, հարկաւոր է արդեօք վախենալ, թէ ոչ։ Եթէ վարժուհին ինքը վախենար, այն ժամանակ յանկարծահաս ահն ընդհանուր և անխուսափելի կը լինէր, բայց բարերազդաբար նա չի վախենում, մնում է անվրդով և դէպքն էլ անցնում է անվանգ։ — Միուրիշ դպրոցում բանուրներն զբաղւած են լինում գազի խողովակը քըննելով, որպէսզի իմանան թէ որտեղից է գազը դուրս գալիս։ 150 աշակերտ դիտում էին նրանց աշխատանքը, յանկարծ առաջանում է փոքր պայթիւն։ Բոլոր մանուկները նայում են վարժուհուն. սա անխոռվ համայում է աղախնին փակել գազի ծորանը։ Վերջինս երկիւղից ճչում է, իսկոյն նրան հետեւում է բոլոր երեխանների ճիչը, բոլորին էլ տիրում է ընդհանուր սոսկում։

## Զ.

Մանկան երկիւղն անկարելի է թողնել անուշադիր, որովհետև նա մի ծանր, անհաճոյ զգացում է, որ ձնշող և վնասակար ազդեցութիւն է ունենում մանկան ամբողջ էութեան վրայ—արդելում է շարժողութիւնները, շնչառութիւնը, արեան շրջանադարձութիւնը, սարսափահար է անում մանկանը, երբեմն կարկամեցմում է նրան, խլում է նրա յիշողութիւնը, ըմբռնողութիւնը, մինչեւ անգամ ուղղակի պատճառում մարմնական և հոգեկան հիւանդութիւններ։ Միւս կողմից աչքի առաջ պիտի ունենալ, որ երկիւղը յատուկ է բոլոր մանուկներին. Նա թէ մանուկների և թէ հասակաւրների հոգեբանութեան մի անհրաժեշտ բաղկացուցիչ տարրն է։ Հետեաբար ներկայումս երկիւղը բոլորովին ոչնչացնելու մասին խօսք անգամ չի կարող լինել, այլ որքան հնարաւոր է, նրան պէտք է սահմանափակել և նրա ոյժը թուլացնել։ Բայց այդ նպատակին համնելու համար ի՞նչ պէտք է անել։

Երկիւղն արտայատութիւն է մարդկային անզօրութեան։ Հզօր էակն երկիւղ չի զգաւ։ Որքան էակն աւելի զօրաւոր է, այնքան էլ նրա մէջ երկիւղը նւազ է։ Հետեաբար, մանկան երկիւղի շրջանը սահմանափակելու և նրա ազդեցութիւնը մանուկների վրայ նւազեցնելու համար՝ հարկաւոր է նրանց այնպիսի դաստիարակութիւն տալ, որ նրանք լինին ուժեղ, վըստահ և անվեհեր։

Թողեք որ մանուկը գործէ լայն, արձակ ասպարիգում. այդ է նրա բնութեան պահանջը։ Մի խրախուսէք մանուկների մէջ նստակեցութիւնը, մտահոգութիւնը, ֆիզիքական հանգիստը, երկար ընթերցանութիւնը։ Մանուկն ամեն բան պիտի ուսանի շրջագայելով, վազվելով, ցատկաելով. ամեն բան պէտք է ձեռին վերցնէ և ամեն ձևով նրանց պէտք է հետազոտէ։ Մանուկը ջերմանցի բոյս չէ. նրան ոչ թէ ջերմանց է հարկաւոր, ոչ թէ մանկանոցում փակւել, այլ նրան հարկաւոր են թարմ օդ, ամենօրեայ զրօսանքներ, շատ ու ամեն տեսակ մարզանքներ պարտիզում, բակում, փողոցում։ Այն մանուկը, որ չափազանց շատ է տանը նստում, այն էլ միշտ գիրքը ձեռքին, որ սակաւ է խաղում թարմ օդի մէջ՝ անհամեմատ աւելի երկչոտ կը լինի, քան թէ այն մանուկը, որ սովոր է յաճախ լինել փողոցում ու պարտէզում։

Շատ օգտակար են խմբական ճանապարհորդութիւնները թէ ամառը և թէ ձմեռը մերձաւոր և հեռաւոր տեղեր։ Ոչ մի մարզանք այնպիսի օգտակար ազդեցութիւն չի ունենում մանկան ինքնուրոյնութեան ու անվեհերութեան զարգացման վրայ, որպիսին են այդտեսակ ճանապարհորդութիւնները։ Այդպիսի ճանապարհորդութիւնների ժամանակ մանուկը դուրս է գալիս իր սովորական կիանքի գծած շաւղից, կարգու կանոնից։ Նա տեսնում է բազմաթիւ նոր առարկաներ, ստանում է բազմաթիւ նորանոր տպաւորութիւններ, պարտաւոր է վարւել նոր եղանակով և ոչ ըստ հնոյն, հարկաւոր է անցնել առւակների, առուների,

խանդակների վրայով։ հարկաւոր է ճիշտ ժամանակին գտնւել նշանակւած տեղում, չուշանալ երկաթուղու գնացքին և այլն։ էքսպուրսիաների ժամանակ, ինչպէս որսորդութեան՝ լինում են զանազան արկածներ, պատահում են փոքրիկ վտանգներ, որոնցից հարկաւոր է խոսափել, պատահում են բոլորովին նոր անձնաւորութիւններ, որոնց հետ պէտք է յարաբերութեան մէջ մտնել։ Այս բոլորը քաջալերում են մանկանը, առաջանում են նրա մէջ եռանդ, ճարտարութիւն, արթնացնում են ինքնուրոյնութիւն։ Այդ պատճառով, որքան կարելի է՝ թող յաճախ կատարեն էքսկուրսիաներ, ընկերական զրոսանքներ, թող մանուկները յաճախ թափառեն անտառներում, լեռներում, դաշտերում խմբերով և միայնակ։ Նոյնպէս չափազանց օգտակար և ցանկալի են բացօղեայ զանազան մարզանքներ, օրինակ՝ զրոսանք նաւակով և հեծանիւով, սահել, սըղղալ, լողալ և այլ հասարակական մրցութիւններ ու խաղեր։

Ով կամենում է մանուկների մէջ զարգացնել որևէ բնաւորութիւն և ընդունակութիւն, նա պէտք է որ չահարեկէ նրանց, այլ հնարէ, գտնէ նրանց բնաւորութեան և ընդունակութիւններին համապատասխան վարժութիւններ, աչքի առաջ ունենալով՝ որ մանուկներն իրենց յատկութեամբ գործունեայ էակներ են։ Այս հայեցքն ըստ էռութեան շատ հասարակ է և իր գործնական հետեանքներով չափազանց կարևոր։

Մանուկները գերազանց գործունեայ արարածներ են. չկայ այնպիսի մի հասակ, որ կարելի լինի

համեմատութեան դնել մանկութեան հետ։ Մանուկների արագ աճեցողութիւնը ու նրանց անսովոր ժրութիւնը համոզում են կըրաքանչիւրին, որ մանուկների մէջ կենսական գործառնութիւնները կատարում են ուժգին և արագ, կեանքը նրանց մէջ եռում է։ Այդ նոյնը պէտք է հասկանալ նրանց Փիզիքական և հոգեկան կեանքի վերաբերմամբ։ Մանկան ըռուղն հետաքրքրութիւնը, անսովոր ըմբռանողութիւնը, նոր փաստերի հանդիպած ժամանակ նրա բուլոր ուժերը կլանող խորին ուշադրութիւնը, նըրա նրբին դիտողութեան անյագ ընդունակութիւնը—մանուկների այս նշանաւոր յատկութիւնները ցոյց են տալիս նրանց մտքի գրքի արագ զարգացումը, որ յետ չի մնում նրանց Փիզիքական աճեցողութիւնից։ Մէկ խօսքով, մանուկների Փիզիքական և հոգեկան կեանքն ընթանում է արագ քայլերով, որի արտայայտութեան ակնյայտնի փաստերը նկատելի են մինչև անգամ անուշաղիր դիտողին։

Մանկան այդ հիմնական յատկութեան վրայ, այսինքն՝ նրա անդիմադրելի բուռն ձգտման դէպի բազմակողմանի գործունէութիւն՝ հաստատած պիտի լինի մանուկների գաստիարակութիւնը։ Մինչև անգամ դժւար է երևակայել, թէ որքան սքանչելի յատկութիւններ կարելի կը լինէր հաստատել մանուկների մէջ և որքան թերութիւններից նրանք պաշտպանւած կը լինէին, եթէ նրանց դաստիարակութիւնը հիմնած լինէր մեր ցոյց տւած ոկզունքի վրայ։ Մանուկները յաճախ ձանձրոյթից հալումաշ են լինում, չիմանալով

թէ ինչով զբաղւեն, իսկ մեծերն անձեռնհաս են լինում նրանց տալ հետաքրքիր զբաղմունքներ։ Շատ անգամ մանուկները բազմաթիւ տխմար չարութիւններ են հնարում պարապութիւնից, որովհետև նրանց ուժերը պահանջում են գործունէութիւն, բայց չէ գտնում մէկը, որ նրանց խելացի զբաղմունք տայ։ Մանուկների բազմաթիւ մոլորութիւններն ու վատ սովորութիւններն սկիզբն են առնում պարապութիւնից և ձանձրոյթից։

Հասակաւորները վատ են ըմբռնում մանուկների գործունէութեան անյագ տենչը և սակաւ են բաւականութիւն տալիս նրան։ Նրանք անտարբերութեամբ անհօգութեան են մատնում մանկավարժական ամենահարուստ այդ գանձը, որ բնութիւնը դրել է մանուկների մէջ, և նրանք այդ հարուստ դաստիարակչական գանձն աշխատում են փոխարինել արեստական վասակար միջոցներով, ինչպէս են՝ ահը և սրաբազմաթիւ տեսակները։

Դեռ բաւական չէ հասկանալ, թէ մանուկն իր աճման շրջանում գործունէութեան պահանջունի, հարկաւոր է դիտենալ և այդ պահանջին բաւարարութիւն տալ։ Ահա այստեղ մեծերն անձեռնհաս են գտնուում։ Նրանք զբաղմունքների համար մանուկներին բնչնիւթեն առաջարկում։ — Մեծ մասամբ այնպիսի առարկաներ, որոնք սակաւ են համապատասխանում նրանց պահանջներին և ճաշակին։ Մանուկների սկզբնական մտաւոր դաստիարակութեան սովորական առարկաներն են՝ գրել-կարդալ, հաշւել, ուսանել օտար լեզուներ,

աշխարհագրութեան տարերը և զանազան գիտութիւններ։ Այս բոլոր թւած առարկաներն ևս մանուկների համար չափազանց վերացական և սակաւ հետաքրքիր են։ մինչդեռ սրանց վրայ նրանք տքնում են ամբողջ տարիներ, որի հետեւանքը լինում է այն, որ նրանք տածում են անյաղթելի զգւանք դէպի մըտաւոր զբաղմունքները։ Մանուկները խնդրում են հաց, իսկ հասակաւորները նրանց տալիս են քար։ Մանուկների այդ բնական պահանջները չը հասկանալով և չիմանալով նրանց բաւականութիւն տալ, հասակաւորները դիմում են սպառնալիքների և ահարեկման, որպէսզի մանուկներին կամայակամայ ստիպեն մեքենայաբար սերտելու ատելի դասագրքերը։

Բայց դրա փոխարէն համարձակ կարելի է պընդել թէ նա, ով աւելի լայն և խորն է հասկացել մեր մատնանշած մանուկների բնաւորութեան յատկութիւնը՝ նրանց բազմազան գործունէութեան անսպառ և մշտապէս նորոգւող տենչը և կարողացել է այդ տենչին բաւականութիւն տալու միջոցները զըտնել, այդպիսին արդէն կատարել է մանուկների թէ սկզբնական և թէ յաջորդ շրջանների դաստիարակութեան ամենաէական և ամենամեծ մասը և արդէն աւելորդ ու անպէտք դարձրել երկիւղի գործութիւնը։ Նա ապահովել է մանուկների բոլոր դրական յատկութիւնների ու ընդունակութիւնների աստիճանաբար զօրացումն ու զարգացումը։ Նա ընդմիշտ արտաքսել է մանուկների կեանքից ձանձրոյթն, երկչւտութիւնը, ահն ու սարսափը և դրանց յարակից թախիծն ու կա-

մակորութիւնը. այդ բոլորի փոխարէն հաստատել է նրանց մէջ բնաւորութեան հաւասարակշռութիւն, զըւարթ տրամադրութիւն, առողջութիւն, անվեհերութիւն, պաշտպանել է նրանց ֆիզիքական և բարոյական վատ հակումներից ու սովորութիւններից, որ առհասարակ ուստում ու մաշում են պարապ մանուկների կազմւածքը։ Յենւելով այդ միակ հաստատուն սկզբունքին՝ դաստիարակը վստահ և յուսալից կարող է առաջ վարել իր գործը, երկիւղ չունենալով ապագայից։

Այդ միջոցով մանկան մէջ անվեհերութեան զգացումը զարգացնելով, միևնոյն ժամանակ պէտք է հոգ տանել, որ մանուկը շուտով ընտելանայ իր ամենօրեայ առտնին գործերն ինքը կատարելու, առանց մեծերի օգնութեան։ Պատահում է, որ մանուկները յաճախ յանձնում են դայեակների, ծառաների, աղախինների, գաստիարակիչների և դաստիարակչուհիների հսկողութեան և օգտում ինսրանց ծառայութեամբ, մինչդեռ այդ ծառայութիւնն իրենք կարող են կատարել իրենց համար։ Մանուկներն ըստ կարելոյն վաղ պիտի սովորեն իրենք իրենց հագնւել, լւացւել, հաւաքել իրենց անկողինը, խաղալիքները, գրքերը, կարգի բերել իրենց գրասեղանը, ճերմակեղինը և հանգեց։ Վաղ առաւտեան նրանց թոյլ պէտք է տալ գնալու տան մօտ գտնած պարտէզը կամ այզին, պէտք է թոյլատը լ միայնակ կատարելու կարճատե զրօսանքներ, եթէ զրօսավայրն անվտանգ և հանգիստ է. այդ զրօսանքները հետզհետէ կարող են լինել աւելի

երկարատե. մանուկն երկար ժամանակ զրօսնելով փողոցում, կը սովորէ ինքն իրեն հսկել. մանկանը հարկաւոր է կատարել տալ փոքրիկ յանձնարարութիւններ, ընկերացնել որևէ գործում. թոյլ մանուկը հասկանայ, թէ կան գործեր, որ առանց մեծերի օգնութեան և զեկավարութեան ինքն միայնակ չի կարող կատարել, բայց և կան այնպիսի գործեր, որ ինքը կարող է կատարել, մանուկը հէնց շատ վաղ բուռն ձըգտում ունի գործել անկախ և ազատ։ Նրան պէտք է տալ և լայն ազատութիւն, այնքան՝ որքան թոյլ է տալիս նրա հասակը։ Եթէ մանուկը սկսած գործի մէջ գժւարանում է, տարակուսում է, չէ իմանում՝ թէ ինչպէս վարուէ, ինչպէս դուրս գայ այդպիսի նեղ գրութիւնից ու ոչ մի վերջնական որոշում չի կայացնում՝ այն ժամանակ հարկաւոր է պահանջել ու պնդել, որ նա վերջնական վճիռ կայացնէ և յանդիմանել նրա անվճռականութիւնը։ Թոյլ մանուկը չը գտնէ ամենալաւ միջոցն իր ներկայ նեղ կացութիւնից դուրս գալու, բայց եթէ նա մի փոքր երկար մտածէ և գործի հանգամանքը կշաղատէ, նրա որոշումը շատ էլ վատ չի կարող լինել։ Յամենայն դէպս՝ սխալ վճիռն ամենեին պախարակելի չէ, որովհետեւ տարակուսելի դէպքում աւելի լաւ է գնալ դէպի որևէ մի կողմ—աջ, ձախ, առաջ, յետ՝ քան թէ մոլորւած մնալ կանգնած միենոյն տեղում, չը շարժւել որևէ ուղղութեամբ, քան թէ ախ ու վախ անել, տանջւել շարունակ միենոյն հարցումով՝ ինչ անեմ, որ կողմը դնամ—մջ թէ ձախ։ Եթէ այդ տեսակ վարժութիւններով մանկան մէջ

զարգանան ֆիզիքական ոյժ և անվեհերութիւն, այն ժամանակ կարելի է նրան սովորեցնել, որ եկած տեղն ինքն իրեն չը կորցնէ, ուղղակի կռւուէ երկիւղի դէմ: Մանուկը պիտի տոգորւի այն համոզմունքով, թէ փորձանքը, որ կարող է մեղ սպառնալ, անդիմադրելի և անխուսափելի բան չէ, եթէ նրա դէմ նախազդուշութեան միջոցներ ձեռք առնենք, լարենք ու կենարուացնենք մեր ուժերը, ահա այն ժամանակ կարելի է փորձանքը մեղանից հեռացնել: Վտանգի մօտենալու ժամանակ հարկաւոր է վստահանալ իր ուժերին, չը վհատիլ: Հարկաւոր է մանկանը փորձով ապացուցել, թէ վտանգը հեռացնելու ջանքերը նւազեցնում են նրա չափը, դանդաղեցնում են նրա մօտենալը, նրա ուղղութիւնը փոքր ինչ փոխում են, ինչպէս ուժերի լարումը արագ բռւժում է տանջանքը և նախապաշտնում ապագայում նոյնը կրկնւելուց: Այդ պատճառով չափազանց խրատական կը լինի մանուկների համար, եթէ հասակաւորները մի քանի անգամ նրանց հետ միասին ենթակայ լինեն այդպիսի ահաբեկող դէպքերի, որպէսզի ցոյց տան թէ ինչ միջոցներով նրանցից ազատելու ելք կարելի է գտնել: Բացարութեան համար բերենք օրինակներ:

Մանուկը շներից վախինում է, գիտէ դէպքեր, երբ շները յարձակւել են անցորդների վրայ: Ահա հասակաւորը թող սովորցնէ նրան, թէ այդպիսի դէպքում ինչպէս պէտք է վարւի նա, առանց վտանգաւոր տեղից խուսափելու և հեռաւոր ճանապարհ ընտրելու: Ամենից առաջ շանը չը պէտք է գրգռել, բարկացնել,

յետոյ՝ եթէ շունը հաջում է հեռւից կամ մինչև անգամ մօտիկից, բայց չի յարձակւում՝ ճանապարհ շարունակիր հանգիստ, ուշադրութիւն մի դարձնիր, իբրև թէ նա իսկի չը կայ էլ,—կը հաջէ և կը հեռանայ. իսկ եթէ սկսում է յարձակւիլ՝ չը պէտք է վախենալ, չը պէտք է փախչել, այլ պաշտպանւել: Իսկ դրա համար առաջուց պատրաստի պիտի ունենալ պաշտպանութեան որևէ գործիք—ձեռնափայտ, քար և այլն: Շները նոյնպէս վախկոտ են, և տեսնելով, որ իրենց՝ վրայ ձեռք են բարձրացնում՝ վախչում են: Այդ պարագան հնարաւորութիւն է տալիս կամացուկ յետ նահանջել: Եթէ յարձակումը շատ սասարիկ է, պէտք է աշխատել մօտակայում գտնել որևէ պատսպարան—ծառ, պատ և այլն, մէջքով նրան յենւել՝ մէկ կողմից յարձակումից պաշտպանւելու: Ծայրայի դէպքում կարելի է ալղաղակել օգնութիւն կանչել: Պէտք է հաւատացած լինել, որ շների մեծամասնութիւնը հանգիստ գնացող անցորդի վրայ չի յարձակւում, իսկ եթէ յարձակւի՝ պատահելով դիմագրութեան, ոչ մի վնաս չի պատճառի:

Ենթադրենք՝ մանուկը վախենում է ջրից, իսկ գետը մօտ է: Դրա համար հարկաւոր է ամենից առաջ զգացնել տալ և հասկացնել մանկանը գետի հրապոյրը՝ զրոսանքներ կատարելով նրա ափերին,—ցոյց տալ մանկանը, թէ ինչպիսի գործունեայ կեանք է եռում գետի վրայ և նրա ափերին, թէ ինչպիսի գեղեցիկ տեսք ունի ալեկոծւող և բոլորովին հանգիստ գետը, թէ ինչպէս սքանչելի է արեգակի, ծառերի, տների,

լուսնի անդրադարձումը նրա ջրերում և այլն։ Կարելի է մանկանը պատմել գետի մասինշատ հետաքրքիր և ուսանելի տեղեկութիւններ, օրինակ՝ թէ որտեղից է գալիս գետը և ուր է գնում, ինչ տեսակ ձկներ են դտնւում նրա մէջ, ինչպիսի ապրանքներ են տեղափոխում նրա վրայով, թէ ինչ զբաղմունք ունին գետափեայ բնակիչները և այլն։ Կարելի է հետաքրքրութիւն զարթեցնել մանկան մէջ կարթով ձուկ որսալու մասին, կարելի է նրան ծանօթացնել առհասարակ ձուկ որսալու զանազան գործիքների և միջոցների հետ։ Գետը ճանաչելու համար նշանաւոր տեղ պիտի բռնէ նաւակով զրոսանքը։ Այդ շատ հաճելի և օգտակար մարզանք է, միևնոյն ժամանակ համարեա անվտանգ։ Պէտք է սովորեցնել մանկանը թիավարել թէ գետի ընթացքով և թէ հոսանքին հակառակ, գետի վրայ կատարել մի քանի խմբական ուրախ ճանապարհորդութիւն, այցելելով գետեղբեայ հետաքրքիր և նշանաւոր վայրերը։ Բազմաթիւ ֆիզիքական մարզանքների հետ միացած այդ մարզանքներից նրանք կտանան շատ հաճելի և օգտակար տպաւորութիւններ։ Վերջապէս պէտք է սովորեցնել մանկանը գետում լողանալ և լող տալ, պէտք է նրան ցոյց տալ գետի ծանծաղ և խոր աւելերը՝ թէ որտեղն է վտանգաւոր և որը՝ ոչ, ճիշտ բացատրել, թէ նա ինչպէս պէտք է վարւէ, եթէ պատահաբար ընկնի խոր տեղը կամ արագասահ հոսանքի առաջ։

Հստ ինքեան հասկանալի է, որ երկիւղի դէմ մաքառելու համար վերոյիշեալ գիտութիւնը կը տայ

իր բարի պատողները միայն այն ժամանակ, երբ կարելի կը լինի ուժերը լարել և համապատասխան եռանդ զարգացնել իսկապէս երկիւղ ազգող վտանգն իրենից վանելու։ հակառակ դէպքում երկիւղը կը թողնէ իր ճնշող տպաւորութիւնը։

Երկիւղի դէմ մաքառման մի կարևոր պայմանն էլ այն է, որ երկիւղը յաճախ չը պէտք է կրկնւի։ Երկիւղալի և սարսափելի դէպքերը և երկոյթները յամենայն դէպս մանկանը փոքր ինչ կը շփոթեն և կը յուղին։ Այդ պատճառով յաճախ կրկնւող երկիւղալի դէպքերը մանկան մէջ կառաջացնեն ոչ ցանկալի զգացումների տրամադրութիւն, բացի գրանից չի կարելի յաճախ առաջացնել ուժերի բաւականաչափ լարում։ Երկիւղով գաստիարակութիւնը՝ իմիջի այլոց՝ և նրանով է վատ, որ շարունակ մանկանը սպառնում, շարունակ նրան վրդովում է, չէ տալիս նրան դալքար և հանգիստ։ Երկիւղով գաստիարակուող մանուկը ոչ մի ժամանակ չի կարող վտան լինել, որ սպառնացող վտանգը կարելի է հեռացնել, որովհետև մի փորձանքին հետեւում են փորձանքների ուրիշ անհամար շարքեր։

Մանկանն առհասարակ հանգամանօրէն պիտի բացատրել, թէ շատ հազւադէպ են այնպիսի վտանգներ ու փորձանքներ, որ հեռացնելու կամ նւազեցնելու համար անզօր լինեն մարդկային ճիգերը, նրանց մեծ մասը կարելի է նւազեցնել իօկ մնացեալի էլ ոչ սակաւ մասը բոլորովին հեռացնել, միայն հարկաւոր է չըլքանել, հարկաւոր է լարել, կենտրոնացնել ուժերը և ոչ մի ժամանակ չը խուսափել մաքառումից։ Ենթադրենք՝ քո

վրայ յարձակւում է քեզանից աւելի զօրեղ մի ստահակ և կուտարար տղայ. այդպիսի դէպքում չը պէտք է լքանել, անձնատուր լինել կամ տեղի տալ, այլ ամենաշուանդուն դիմադրութիւն պիտի ցոյց տալ՝ ձեռքերով, ոտներով, ատամներով. թերես նա իր կատաղած գրութեամբ ներկայ դէպքում աւելի սաստիկ ծեծէ, քան թէ մտադրւած էր, բայց միւս անգամ աւելի ըգոյշ կը լինի յարձակւելու այդ աներկիւղութեամբ պաշտպանող տղայի վրայ. Ուժերի լարումը մինչև անգամ կը նւազեցնէ արտաքին բնութեան պատճառած տանջանքները. Օրինակ՝ սաստիկ ցուրտ ու սառնամանիք եղանակին բաց կառքով երկար ճանապարհորդութիւն ես կատարում. կառքում նստած սառում ես: Այս դէպքում տանջանքը բոլորովին հեռացնել չի կարելի, բայց կարելի է նւազեցնել, միայն չը պէտք է լքանենք ու յուսահատւենք, հարկաւոր է որ շատ շարժողութիւն անենք, կառքից իջնենք, գնանք ոտքով, վաղենք կառքի յետևից, եթէ ընկեր ունենանք նրա հետ մրցութեան մանենք, խօսք տանք միմեանց, որ այսքան վերստ անպատճառ գնանք ոտով. կառքի մէջ չը պէտք է նստել անշարժ, այլ անդամները շարունակ շարժել, չմտածել մեզ հասած տհաճութեան ու անյարժարութեան մասին, այլ մի ուրիշ բանի մասին:

Երկիւղի դէմ մաքառման ժամանակշատ կարեոր է, որ երկիւղ ազգող առարկայի մէջ աշխատենք զըտնել հետաքրիբ, գւարճալի և խրատական կողմ, որի վրայ կարողանանք կենտրոնացնել մեր ուշը. և այդպիսով վանել մեզանից երկիւղը. Այդպիսի դէպքում

երկիւղին կը հակադրւի մի ուրիշ գւարթ, քաջալերիչ և զօրացուցիչ զգացում. Օրինակ՝ մի ընտանիքում մանուկներին ընծայում են փոքրիկ մոզական լալտեր, որ մեծ հետաքրքրութիւն էր առաջացրել նրանց մէջ. Մէկ անգամ այդ լապտերով ներկայացման ժամանակ, երբ ճրագները հանգըրին՝ չորս տարեկան տղան վախեցաւ և սկսեց լաց լինել: Մայրն առաջարկեց նըրան գնալ միւս լուսաւոր սենեակը, բայց երեխան չը համաձայնեց, մնաց նստած իր տեղում. նրան ամեն կերպ համոզում էին չը վախենալ, բայց այդ խրատները համարեա անցնում էին իզուր: Մանուկը թէ վախենում էր և թէ հրաժարւում էր գնալ միւս լուսաւոր սենեակը: Բանը նրանումն է, որ նրա մէջ երկիւղի հետ միհասին կար խիստ մեծ ցանկութիւն տեսնելու մոզական լապտերի հրաշալիքները և այդ ցանկութիւնն առանց մեծերի կողմից որևէ յորդորանքի, հատանաբար հակառակ իրեն երեխայի կամքին՝ ստիպում է նրան դիմադրել երկիւղի աղղեցութեան: Լալտերն երկար ժամանակ սարքի չէր ընկնում, հարկ եղաւ քառորդ ժամ մթութեան մէջ սպասել այդքան ժամանակ մանուկն ինքն իր հետ մաքառում էր: Նրա մէջ հետաքրքրութիւնը հետզհետէ յաղթող է հանդիսանում, և որպէսզի ինքն իրեն քաջալերած լինի, սկսում է կէս հարցական կէս զրական եղանակով խօսել այն մասին, թէ մութ սենեակում երկիւղալի բան չը կայ, կրկնելով այն պատճառաբանութիւնները, որ դրանից քիչ առաջ իր վրայ ամենակին ներգործութիւն չէին ունեցել: Հէնց որ պատի վրայ երևաց լոյսի պայշ-

ծառ շրջանակը և նրա մէջ սկսան շարժւել ստւերներ՝ տղան հրճւանքից բոլորովին մոռացաւ երկիւղը:

Այժմ խօսինք այն միջոցների մասին, որոնցով կարելի է մաքառել մանուկներին յատուկ երկիւղների դէմ:

Որովհետև մանուկը հակամէտ է վախենալու ամեն մի նոր առարկայից, ուստի մեծ ուշագրութիւն պիտի դարձնել այն առարկաների վրայ, որոնցով շըրջապատած է մանուկը: Մանկան սենեակից պէտք է հեռացնել բոլոր աւելորդ առարկաները, այնտեղ պէտք է թողնել միայն խսկական անհրաժեշտ իրեղէնները: Մանկանցից անմիջապէս պէտք է հեռացնել այն առարկաները, որոնք իրենց մեծութեամբ, ձեռվ կամ ձայնով, կամ գոյների զուգորդութիւնով մանկան վրայ առաջացնում են զօրեղ, յուզիչ տպաւորութիւն: Անհրաժեշտ առարկաների հետ մանուկներին պէտք է ծանօթացնել մեծ զգուշութեամբ և աստիճանաւորութեամբ: Եթէ առարկան վախեցնում է մանկանը՝ առջին անգամներում ամեննեն չի կարելի երեխային բռնի մօտեցնել այդ առարկային, կամ ձեռքը տալ, կամ ստիպել շօշափելու և այլն: Սկզբում այդ տեսակ առարկաները միայն հեռուից կարելի է ցոյց տալ նրան, և հասակաւորն առաջին անգամ ինքը պէտք է շօշափէ այդ առարկան, ձեռքը վերցնէ, մէկ խօսքով՝ գործով բացատրէ մանկանը, որ այդ առարկան ոչ մի վնաս չի տալիս: Յետոյ այդ առարկան նոյն զգուշութիւններով աստիճանաբար մօտեցնել երեխային, համոզելով նրան շօշափելու, շոյել, ձեռին վերցնել և խա-

ղալ նրանով: Մինչդեռ երեխան վախենում է առարկայից, չի կարելի նրան թողնել միայնակ առարկայի հետ. եթէ առարկան կարող է ծառայել իբրև խաղալիք կամ առաջացնել զւարճալի կամ հաճոյական տպաւորութիւն, մանկան վրայ պիտի ներգործել այդ կողմով: Ամեն անգամ նոր, նոյն իսկ փոքր ինչ երկիւղ ազդող՝ առարկայի հետ ծանօթացներու ժամանակ պիտի պահպանել այդպիսի խիստ աստիճանաւորութիւն. մանկան վրայ ամեննեին գործ չը պիտի դնել բռնութիւն, ոչ էլ թոյլ տալ որևէ կոպիտ. յանկարծական և անակնկալ զօրեղ տպաւորութիւն. այդ միջոցները կարող են ուժգին ցնցել մանկան ամբողջ կազմւածքը, առաջացնել հիւանգութիւն և նրա մէջ պահպանել երկար տարիներ, երբեմն ընդ միշտ՝ անջնջելի երկիւղ դէպի սարսափ ազդող առարկան, ևս առաւել պատժի երկիւղով չը պէտք է ստիպել երեխային մօտենալ, ծանօթանալ սարսափ ազդող առարկային, որովհետև այդպիսի դէպըում մանուկը կզգայ կրկնակի երկիւղ:

Զափազանց խիզախ զինւորական մի հայր նկատելով, որ իր աղջիկն ու տղան պառաւ գայեակի դաստիարակութեան շնորհիւ շատ վախկոտ են՝ վճռում է մի անգամից նրանց միջից արմատախիլ անել այդ թերութիւնը: Տասը տարեկան տղան սաստիկ վախենում էր նաւակով զրունել, բացի զրանից համարեադէպը էլ չէր եղել այդպիսի զրունք կատարելու: Հայրը հրամայում է տղային իր հետ միասին նաւակով զրունք կատարել լճի վրայ, որի ափին այժմ նրանք

բնակւում էին: Տղան լաց է լինում, աղերսում է հօրը չը տանել իրեն այդ զբուանքին, տանը թողնել բայց հայրը մնում է անդրդեկիլի, և որպէսզի որդին չը փախչի ու չը թագնւի, հրամայում է կապեն նրա ձեռներն ու ոտները և գնեն նաւակը: Տղան նաւակում այնքան ճշում, լաց է լինում, որ ճայնը խզում է: Հակառակին, երբ հայր ու որդի լին մէջտեղն են հասած լինում, բարձրանում է հողմ և նաւակն այս ու այն կողմն է տարուբերւում: Երեխան լաց ու ճչից թուլանում է, սարսափահար դողում է: Երբ տուն են վերադառնում, տղան միանգամայն թուլացած և կարկամած քուն է մտնում, բայց քունը լինում է անհանգիստ, շուտ-շուտ վեր է թուչում: Դրանից յետոյ տղան երկար ժամանակ կորցնում է ախորժակը և տառապում է սակաւարիւնութեամբ:

Այս նոյն զինւորականիւ վարմունքն իր 8 տարեկան աղջկայ հետ աւելի տխուր հետևանք է ունենում: Նա կամենում է բռնութեամբ աղջկանը մոռացնել տայ վախը մութ սենեակից: Հրամայում է աղջկան զնալ մութ սենեակն և այնտեղից բերել ծխախոտովլի տուփը: Երեխան լաց է լինում, ասում է, որ վախենում է, չի կարող զնալ մութ սենեակից: Աղջկայ անհնագանգութիւնը զայրացնում է հօրը, որ հրում ձգում է երեխային մութ սենեակը և գուռը վրան կողպում: Մի ժամից յետոյ երբ սենեակի դուռը բանում են, տեսնում են՝ աղջիկն ուշագնաց գետնին ընկած. նրան վերցնում զնում են անկողին. նրա հետ սկսում են ջղայից ցնցումներ, որ յետոյ կրկնում են ամեն մի նեարդային գրգոման ժամանակ:

Ամենատարածւած և ամենազօրեղ մանկան երկիւղներից մէկն է վախը խաւարից: Դաստիարակներն ամեն կերպ պէտք է մաքառեն այդ երկիւղի դէմ: Այս խնդրի վերաբերմամբ Ժ. Ժ. Ռուսսօն շատ օգտակար խորհուրդներ է տալիս:

Սովորեցէք կառավարւել առանց լոյսի, ինչպէս կոյրերն են, անդադար մի զիմէք ճրագի օգնութեան: Շօշափման (և մկանային զգացողութեան) օգնութեամբ շտա լաւ կարելի է շարժւել մթութեան մէջ, որոշել ամեն ինչ աւելի ցանկալի է, որ մարդուս աչքերը լինեն իր մատների ծայրերում, քան թէ մոմավաճառի խանութում: «Խաւարի մէջ շօշափման օգնութեամբ կարելի է բազմաթիւ դիտողութիւններ անել, մինչև անգամ ձեռք չը դիպցնելով ոչ մի առարկայի, իսկ եթէ ձեռք կցցնենք առարկաներին, այնժամանակ շօշափման օգնութեամբ ըմբռնած առարկաների թիւն աւելի շատ կը լինի»:

Կազմեցէք, որքան կարող էք՝ շտա գիշերային խալեր. այս խորհուրդն աւելի կարենութիւն ունի, քան թէ թւում է ըստ երեսոյթին: Խաւարից տխուր՝ մինչև անգամ սարսափելի՝ բան չը կայ, այս պատճառով մի փակէք ձեր երեխային դատարկ խաւար սենեակում, դրանով նրան սարսափահար կանէք, կը պատճառէք ուշաթափութիւն, հիւանդութիւն և նոյն իսկ մահ: «Մանուկը թող ծիծաղելով մտնէ մութ տեխիսկ մահ: Ծանուկը թող ծիծաղելով մտնէ մութ տեխիսկ մահ: Ծիծաղելով էլ գուրս գայ այն տեղից...» Պէտք է երեկոյեաններն երեխաներին ժողովել միասին և սկսել նրանց վարժեցնել մթութեան: Սկզբում նրանց

Հը պէտք է ուղարկել մութ սենեակ, այլ կիսախաւար մի սենեակ, այն էլ մի քանի հոգով միասին, իսկ յետոյ՝ մէկ-մէկ, սկսելով ամենաքաջից, երկչոտ երեխաների հետ հասակաւորն էլ պէտք է զնայ—երեխայի ձեռքից բռնած հասակաւորը պիտի ցոյց տայ նրան, թէ խաւարի մէջ առարկաները մնում են նոյնը։ Դրանից յետոյ աստիճանաբար կարելի է մանկան փոքրիկ յանձնարարութիւններով ուղարկել մութ սենեակը, այդ ժամանակ բարձր ձայնով քաջակերելով նրան։ Օգտակար է երեկոյեաններն երեխաների հետ միասին զրօսանքի ելնել։ Կարելի է մթութեան մէջ կազմել ուրախ խաղեր՝ ընծաներով, կատակներով, վազվելով, քրքիջով, «Ո՛ւըան գերազանց կզգայ իրեն միւսներից այն մարդը, որ դաստիարակւել է այդ եղանակով։ Այն ոտները, որ սովոր են հաստատուն քայլել մթութեան մէջ, այն ձեռքերը, որ ընտելացած են մթութեան մէջ հեշտութեամբ վերցնելու շրջապատող առարկաներ՝ առանց դժւարութեան կը զեկավարեն այդ տեսակ մարդուն ամենաբարձր խաւարում։ Նրա երեակայութիւնը զբաղւած լինելով իր մանկութեան գիշերային խաղերով, դժւար թէ մթութեան մէջ ուշագիր լինի ցնորական ահաւոր տեսիլների։ Եթէ գիշերւայ խաւարի մէջ լսելի լինի հռնոց, այդ կը լինի իր մանկութեան ընկերների քրքիջը ևոչ թէ քաջքերի, եթէ նրան երեսութեանայ ամբոխումն, այդ կը լինի ոչ թէ ջադուների խրախճանքը, այլ իր դաստիարակչի սենեակը։ Մանկութեան ուրախութիւնը յիշեցնող գիշերը նրան ամենին զարհուրելի չի թւայ, նրանից վախենալու փո-

խարէն՝ կը սիրէ նրան»։

Մանկութեան յատուկ երկիւղի երկրորդ տեսակն է ահ անկենդան մարմիններից, գորտերից, մկներից, արիւնից և առհասարակ այն առարկաններից, որոնք առաջացնում են երկիւղախառն զգւանք։ Ինչ վերաբերում է այդ տեսակ երկիւղի սկզբնապատճառին՝ պէտք է ասել այն ոչ բնածին և ոչ էլ անհրաժեշտ է յիշեալ առարկանների վերաբերմամբ։ Հաստատ փաստ է, որ մանուկները ննջեցեալից չեն վախենում։ Իրաւ է, անշարժ զրութիւնն այն էակի, որ առաջ շարժում էր, խօսում էր, յարձակումից պաշտպանում էր՝ կարող է զարմացնել մանկանը, ապշեցնել նրան իր նորութեամբ և յետոյ, ինչպէս ամեն մի նոր երկոյթ՝ առաջացնէ մանկան մէջ երկիւղ, թերևս խառն ափսոսանքի հետ, որ այդ էակը կորցնել է այնպիսի հետաքրքիր յատկութիւններ։ բայց եթէ մանկան շրջապատող անձինք իրենց պահում են հանգիստ, չեն արտայայտում վրգովմունք ու վախ, մանկան երկիւղը շուտով անցնում է։

Մեռնում է հայրը. Նրա 6 տարեկան աղջիկը հօր մահւանը վերաբերում է իբրև բոլորովին մի երեխայ—աշխատում է միշտ նրա հետ խաղալ. շուտ շուտ նայում է նրա երեխին, համբուրում է նրան, քաշըլըշում է նրա մօրուքը և բեխերը. սկզբում շատ էր զարմանում, թէ ինչու առաջ հայրիկի մօրուքը և բեխերը չէր կարելի քաշել, իսկ հիմա կարելի է։ Տանեցոց բոլորի գլուխն էլ խառն լինելով, աղջկանն աչքաթող են անում մէկ օր, ահա այդ ժամանակ այն

կոյսը, որ հանգուցեալի վրայ սաղմոս էր քաղում՝ սկսում է երեխայի միտքը պղտորել զանազան պատմութիւններով՝ դժոխքի, սատանաների, մեռների և այլ իր խելքին մատչելի նիւթերի մասին։ Աղջիկն սկսում է արտայատել երկիւղի նշաններ դէպի հանգուցեալը, բայց շուտով վերջ են դնում կոյսի դաստիարակչական գործունէութեանը և երեխան վերադառնումէ իր նախկին անհոգ և միամիտ յարաբերութեանը դէպի հանգուցեալ հայրը։

Ահա այս պտտճառով մենք ենթադրում ենք, որ մանուկների երկիւղը ննջեցեալներից և անկենդան մարմիններից մեծ մասամբ արւեստական է և պատւաստած հասակաւորներից։

Ոչ միայն կարեսոր է, այլև անհրաժեշտ է, որ մանկանը ծանօթացնենք մահւան իրականութեան հետ։ Դիմիկի գունատութեան և անշարժութեան մէջ ըստ ինքեան զարդուրելի ոչինչ չը կայ։ Հարկաւոր է միայն խելացի վերաբերմունք։ Հարկաւոր է մանկանը մահը բացատրել իրբն յարատե յաւիտենական հանգիստ և քուն, չը խառնելով դրա հետ ոչ մի ահաւոր տպաւորութիւն։ Կարելի է երեխային տանել գերեզմանատուն, այնտեղ ցոյց տալ նրան գերեզմանները, ասել, որ մեռած մարմինը փտում է, և այդ ամենը մանկան մէջ չի առաջացնի ոչ մի երկիւղի զգացում։ Պերէն պատմում է մի այսպիսի փաստ։ Հայրն որդուն տանում է գերեզմանատուն, ցոյց է տալիս թարմ գերեզման, գերեզմանից հանած ոսկերեր, մանուկը մնում է բոլորովին անվրդով, նոյն հանգստութեամբ ինչպէս և հայրը՝ շօշափում է ոսկեները։ Իրաւ է, որ հօրը տալիս է շատ հարցեր, օրինակ՝ երբ ինքը մեռնի, իրեն

հետ էլ նոյնը կը պատահի, այսինքն՝ ինքն էլ կը փտի և իր մարմնից նոյնպէս կը մնան միայն ոսկերներ, հայրն իր վրայ լաց կը լինի արդեօք և ինչու պիտի լաց լինի և այլն։ Տուն վերադառնալու ժամանակ, հէնց գերեզմանատանը՝ բաց է թողնում հօր ձեռքը և վազում թիթեռնիկի բամակից, նրան բռնելու։ Զը կարողանալով թիթեռնիկը բռնել, վերադառնում է հօր մօտ և ասում. «Հայրիկ, մենք դարձեալ կը գանք այստեղ, չէ»։ Այստեղ մանուկը մահւան մասին խօսում է այնպէս, որի ժամանակ մեռնողի ստամոքսն է ցաւում և ոչ էլ զլուխը։

Առողջ և կանոնաւոր երեխանների մէջ աղտոտառարկաներից զգւանքի զգացումը շատ թոյլ է, միայն եթէ այդ զգացումն արւեստական կերպով չեն զօրացրել։ Մանուկները չեն գարշում իրենց ձեռքը վերցնելու, նայելու և դիտելու այնպիսի առարկաներ, որոնց ձեռք անգամ մօտեցնելու զգւում են հասակաւորները։ Մանուկները չեն գարշում և այդ կողմից խտրութիւն չեն անում։ Նրանք շատ անգամ յամառութեամբ հրաժարւում են խմել մի գաւաթ փոքր ինչ խանձւած կաթը, բայց միենոյն ժամանակ ձեռքերին այս և այն կողմն են քաշ տալիս սատկած մուկը, ճնճղուկի և ուրիշ կենդանիների դիակներ, որոնց վրայ հասակաւորները գարշանքով են նայում և որոնց վրայ հասակաւորները գարշանքով են նայում և այդ պատճառով մանուկներին տանից գուրս վանում է պատմութիւն կամ պատմութիւն աղջիկ, որտեղից է լինում գտնում է մի գուղու (շաբա), այնքան է ուրախանում իր այդ գիտութիւնը, որ սկսում է աղաղակել։ «Այ իմ դոդոշիկ, հովրայ, որ սկսում է աղաղակել։ Այ իմ դոդոշիկ, հովրակ, սիրուն դոդոշիկ» ու համբուրում է նրան։ Այդ

աղջլկը փողոցում պատահած ամեն մի անձանօթ շան պատրաստ էր գրկել, համրուրել, մտնում էր հէնց նոր ցկնած շան բռնը. բռնում էր գորտեր, մկներ, սարդեր և այլն: Ամեն մի շրջմոլիկ կատու կամ շուն նրա բարեկամներն էին:

Մանուկների երկիւղը մտացածին էակներից անկասկած պատւաստւած և արւեստական մի վախ է, որ առաջանում է հասակաւորների զրոյցների, հէքիաթների և այլ այդ տեսակ առասպելների ընթերցանութեան աղդեցութեամբ: Այդ երկիւղի ծագման առաջն առնել բաւական դժւար է, որովհետև ժողովրդի ահագին մեծամասնութիւնը հաւատում է զանազան տեսակ չար ոգիների, կախարդների, դեերի և այլն գոյութեան. խզել մանկան յարաբերութիւնը տգէտ, անկիրթ դասակարգերին պատկանող անձնաւորութիւններից անկարելի է, նրանք չափազանց սերտ շաղկապւած են մեր կեանքի հետ: Այդ կողմից մեղսակից է գրականութիւնը, որ ժամանակ առ ժամանակ ընծայաբերում է մանուկներին զանազան ահաւոր պատմութիւններ. այդ պատճառով մանկան ընթերցանութեան զրքերի ընտրութիւնը պէտք է զգուշաւոր լինի: Յամենայն դէպս մտացածին էակներից մանուկների երկիւղի չափը, յաճախ կամ հազւագէպ լինելը կախւած է հողատար գաստիարակութիւնից: Կարելի է գործն այնպէս տանել, որ երկիւղի այդ տեսակը համարեա գոյութիւն չունենայ, բայց և կարելի է այնպէս անել, որ նա աճէ, ահաւոր չափեր ստանայ:

Եթէ կամենում ենք մանկան երկակայութիւնը ազատ պահել տիմար ցնորդներից և զբա հետ միասին մտացածին էակների անմիտ երկիւղներից, պէտք

է հոգ տանինք մանկան մտաւոր զարգացման մասին, պէտք է նրան ծանօթացնենք շրջապատող բնութեան առարկաների, մարդկային հասարակութեան և նրա կեանքի հետ: Մտացածին երկիւղներն անհեթեթութիւններ են, որովհետև նրանք հետեւանք են աշխարհի և նրա յատկութիւնների մասին առասպելական և տգէտ հասկացողութեան: Եթէ մանուկը կը համոզէի, որ իր շուրջը ամեննեին չը կան զարհուրելի էակներ, որ առասպելական և մտացածին աշխարհն ամեննեին նման չէ իրական աշխարհին, որ հէքիաթի մէջ ամեն ինչ չափազանցացրած է, լուն ուղտ է դարձրած, այնժամանակ այլնս չի վախենայ: Մանաւանդ կարեոր է մանկանը տեղեեկութիւններ հաղորդել ընութեան մի քանի ահաւոր թւացող երկոյթների մասին, ինչպէս են՝ փոթորկաբեր ամպերի, որոտումի և կայծակի, խստաշունչ հողմերի, մրիկի, քամու սուլոցի և կաղկանձիւնի մասին և այլն, նոյնպէս մարդկային կենցաղավարութեան մի քանի հաստատութիւնների, կարգերի և երկոյթների մասին, օրինակ՝ գողերի, աւազակների, բանտերի և այլն, իբրև այնպիսի հաստատութիւնների, որոնց նպատակն է հասարակութեան (ժողովրդի, անհատի) հանգստութիւնն ապահովել: Առհասարակ քննադատական վերաբերմունքը և զնահատութիւնը կատարող երկոյթների կարող են բաւական չափով թուլացնել ահաւոր տպաւորութիւնները:

Իբրև եղրակացութիւն մեզ մնում է յիշեցնել, որ ծնողները ոչ ուղղակի և ոչ անուղղակի, ոչ գիտութեամբ և ոչ անգիտութեամբ չը պէտք է պատւաստեն երկիւղ իրենց զաւակների մէջ: Նրանք մեր այս խորհուրդը դրժամ կը լինեն, եթէ դաստիարակութեան

մէջ գործադրեն պատժի և պարգևի սիստեմը։ Դաստիարակութիւնն այդ միջոցներով, նոյն է թէ դաստիարակութիւնը երկիւղի միջոցով։ Պատիժը պատճառում է մարմական կամ հոգեկան տանջանք։ Սպասել տանջանք, կը նշանակէ կրել երկիւղ. այդպիսի դէպքում ոչ մի նշանակութիւն չունի այն պարագան, թէ պատիժը համարում ենք իրաւացի կամ թէ ոչ։ Իւրաքանչիւր մի պատիժ իբրև տանջանք պատճառող՝ առաջացնում է երկիւղ։ Այդ պատճառով պատիժների օգնութեամբ դաստիարակութիւնը մի անժխտելի հակասութիւն է անվեհերութեան զգացում դաստիարակելու սիստեմին, այդ արդէն կը նշանակէ արմատացնել և զօրացնել երկիւղը։

Մանուկները կարող են վարակել երկիւղով կամ հասակաւորներից կամ ընկերներից։ Հասակաւորներն իրենց վրայ խիստ հսկողութիւն պիտի ունենան, որպէսզի չը վարակեն մանուկներին։ Պէտք է խոստովանել, որ հասակաւորները շատ յաճախ վարակում են մանուկներին վախկոտութեամբ, որովհետեւ ստէպ իրենք ենթակայ են նոյն թուլութեան։ Այդ կողմից զգո՞ւ պիտի լինեն դպրոցական այր և կին գործիչները, որովհետեւ նրանք հեշտութեամբ կարող են յանկարծական ահուսարսափ առաջացնել ամբողջ գառարանում և մինչև անգամ ամբողջ դպրոցում։

Մանուկները կարող են երկիւղով վարակել և միմեանցից. երկչոտ մանուկների տոկոսը համեմատութեամբ մեծ է։ Ուսուցիչները պիտի լաւ ձանաչեն երկչոտ մանուկներին և ամեն ջանք պիտի գործ դնեն նրանց մէջ զարգացնել անվեհերութիւն։ Դպրոցում ոչ մի դէպքում թոյլ չը պէտք է տալ որ երկչոտ մանուկները համա-

խմբւեն միասին, ընդհակառակը նրանց պիտի ցրւել սրտոտների մէջ։ Երկչոտները միասին համախմբւելով երկիւղով կը վարակեն թէ միմեանց և թէ միւս մանուկներին։ Զբօսանքի ժամանակ անտառում, դաշտում, նաւակում, եթէ նախատեսնում է այնպիսի մի դէպք, որ կարող է շփոթել կամ վախեցնել՝ այդպիսի հանգամանքում երկչոտ մանուկներին ամենսին աչքաթող չը պէտք է անել, նրանց թոյլ չպէտք է տալ առաջընթաց լինել, պէտք է խրախուսել և հանգստացնել. այլ խօսրով՝ նրանց պէտք է առաջնորդել ձեռքից բռնած, եթէ ոչ հեշտութեամբ կարող են ընդհանուր ահուսափան առաջացնել։

Մանուկներին ամենսին չը պէտք է վախեցնել, նոյն իսկ կատակով։ Երկիւղը, սարսափն առաջացնում են ամբողջ օրգանիզմի մէջ այնպիսի զօրեղ ցնցում, որի խոր տապաւորութիւնը մնում է երկար ժամանակ։ Ես մինչև այժմ լաւ յիշում եմ, թէ ինձանից փոքր ինչ մեծ եղբայրս ինչպէս ինձ վախեցրեց։—Նա պահւել էր մանկանոցի դռան ետևը, դռան ճեղքով տեսայ, որ նա այնտեղ թագնւեց, բայց և այնպէս, երբ ներս մտայ, դռան քամակից դուրս պըծաւ ու ճչաց՝ ես սաստիկ վախեցայ։ Այդ միենոյնը կըկնուում էր յաճախ, և ամեն անգամ չէի կարողանում այնքան զսպել ինձ, որ չը վախենամ, մանաւանդ՝ եթէ այդ պատահում էր երեկոյեան դէմ, թէև այս էլ պէտք է ասել, որ իւրաքանչիւր անգամ մօտենալով մանկանոցի դռան, բարձր ձայնով յայտարարում էի եղբօրս, թէ զիտեմ՝ նա թագնւած է դռան յետեւը։ Այդպիսի սարսափը, մանաւանդ յաճախ կըկնւած՝ կարող է անվեհերութեան զարգացմանը պատասի։ Զօրեղ երկիւղը, թէև կստակով ա-

ռաջացած՝ կարող է ունենալ չափազանց կորստաբեր հետևանքներ: Մի հետարքիր մանուկ դռան ճեղքից նայում էր տեսնելու, թէ մսագործն ինչպէս է մորթում հորթը: Մսագործը նկատում է այդ, բռնում է տղային, իրեւ կատակ՝ կապում է նրա ձեռքերը, սկըսում է սրել դանակը և սպառնալ: թէ նրան պէտք է մորթէ, ինչպէս որ մորթում է հորթը: Այդ դէպքն այնպէս ցնցում է երեխային, որ այդ օրից սկսած ստանում է ընկնաւորութիւն և հոգեկան հիւանդութիւն:

Վաղ ժամանակներում ծնողները, մանաւանդ դայեակները՝ վախեցնում էին մանուկներին, որպէս զի նրանք շուտ քնեն և իրենք նրանց պահելուց ազատւն: «Ճուտով քնիր, ասում էին նրանք, եթէ ոչ բօր օն կը գայ քեզ կը տանի կամ մուրացկանը կը ձգի քեզ իր տոպրակի մէջ և կը տանի:» Պատահում էր, որ երեխան իսկոյն և եթ չէր ենթարկում երկիւղի աղդեցութեան, սկսում էր հարցումներ տալ բօրօի և մուրացկանի մասին: «Ինչո՞ւ չես քնում, ընդհատում էր նրան դայեակը, «լսո՞ւմ ես, ահա եկել է բօրօն, դուք ծեծում է», և իր խօսքերը հաստատելու համար սկսում է պատը ծեծել: «Այդ նա է, ահա դալիս է այստեղ... Լոիր. լոիր, շուտ փակիր աչքերդ»: Եւ երեխան սարսափանար կատարում է հրամանը: Բայց պատահում է, որ այնուամենայնիւ չի կարողանում շուտով քնել, տանջում է և վերջապէս յուզւած և սարսափանար քուն է մտնում: Դրա հետևանքն այն է լինում, որ վատ երազ է տեսնում, գիշերը վախենում է, յանկարծակի վեր է թռչում, բարձրացնում է գլուխը, երբեմն անկողնում նստում, իսկ երբեմն պարկած անշարժ աչքերը մի կէտի յառում, այդ ժամանակ նրա ամբողջ


կերպարանքն արտայայտում է սարսափ և գիտակցութեան բացակայութիւն: Խսկ եթէ հարցնում էք նրան զարթնելու պատճառը, նա ոչինչ չի պատասխանում, ոչ ոքի չի ճանաչում, առաւտեան էլ ոչինչ չի յիշում՝ կամ ասում է՝ բօրօն, զարհուրելի բօրօն կամենում էր իրեն բռնել տանել, կամ թէ՝ մուրացկանը կամենում էր իրեն ձգել տոպրակի մէջ և այդ տեսակ խօսքեր: Մէկ խօսքով, ինչ որ լսել էր անկողնում քնից առաջ, գալիս է նրա երեկակայութեան առաջ, սարսափեցնում է քնի ժամանակ, ցնցում է նրա ամբողջ օրգանիզմը, ստիպում է նրան քնից վերթոչելու, արթնանալու:

Առնասարակ երկիւղով կատակ անել, սարսափեցնել երեխաներին՝ անգթութիւն է, կարելի է ասել, անբարոյականութիւն է, ուստի այդ ոչ ոք թոյլ չը պէտք է տայ իրեն, եթէ մինչև անգամ կատակը թւի անմեղ և անվտանգ: Մենք լաւ չենք ճանաչում մանկան հոգին և այն, որ հասակաւորին թւում է դատարկ ու անմեղ մի կատակ, գուցէ մանկան օրգանիզմի վրայ ունենայ կորստաբեր հետևանք, երկիւղից չափազանց ցաւած ու տանջւած սիրտը Ս. Տ. Ակսակովի իրաւացի թելաղբել է նրան գրել հետևեալ խօսքերը: «Մանկան սրտի մէջ երկիւղից առաջացած տանջանքներն այնպէս զարհուրելի են, որ նրանց վրայ ծիծաղելը յանցանք է... թող օրհնեալ լինին նրանք, որոնք խնայում են մանկան վեհերոտ սիրտը և ազատում են նրան երկիւղ զգալուց»:

Աչքի առաջ ունենալով մանուկների անկատարելութիւնը, նրանց ուժերի թուլութիւնը և անփորձութիւնը, նոյնպէս և այն հանգամանքը, որ մանուկների թերութիւնների մեծ մասի պատճառն իրենք հասակա-

ւորներն են, որոնք ժամանակին լիովին չեն բաւականացրել նրանց պահանջները, յաճախ լաւ օրինակներ չեն տւել, դրանից պարզ հետևում է, որ մանուկների հետ հասակաւորների վարմունքի հիմնական ղեկավար սկզբունքները պիտի լինին ոչ թէ ահարեկում ու զանազան պատիժներ, այլ գործունէութիւն, մտերմութիւն և սէր:

Դաստիարակչական ոչ մի խելացի սիստեմ դրանից գուրս ուրիշ սկզբունքներով չի կարող առաջնորդւիլ. որովհետև դաստիարակութիւնը չի ձգտում հասնելու պատժի և սպառնալիքների. նրա նպատակն է օգնել զարգանալու տհաս և թոյլ էակներին: Միրոյ, մտերմութեան և զանազանակերպ գործունէութեան մթնոլորտում միայն կարող են զարգանալ այդպիսի էակներ: Ով մանկանը դաստիարակում է երկիւղի սիստեմով, նա չէ հասկացել դաստիարակչական գիտութեան ամենագլխաւոր և տարրական սկզբունքները: Կասկած չկայ, որ երկիւղը, իրբ ղեկավար սկզբունք դաստիարակութեան՝ ժամանակով կը վերջանայ, որովհետև երկիւղի մէջ զօրեղ է ամեն տեսակ եռանդի ճընշումն ու նւաստացումը, իսկ խելք ու բանականութիւն բոլորովին բացակայում Ան, Թէկ մանուկները կարող են յաճախ ի չարը գործ դնել իրենց դաստիարակների համբերութիւնն և սէրը, բայց այնուամենայնիւ այդ չէ խանդարում մեր յիշած սկզբունքների ընդարձակ գործադրութեան. դարձեալ կրկնում ենք՝ դաստիարակութեան նպատակն է օգնել թոյլերի և տհասների զարգացմանը, որը հնարաւոր է միայն սիրով, համբերութեամբ և ներազամութեամբ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

XIV—XV Մանկան հոգին—պրօֆ. Սիկորսկու, թարգմ. Միս. Աս. և Ստ. լ. 45 կ.

XVI Ժառանգականութիւնը և դաստիարակութիւնը—Ռուդոլֆ Լեմանի, թարգմ. լ. Բաբայեանի 15 կ.

XVII Դաստիարակութեան իդէալները, Ռուդոլֆ Լեմանի:—Մանկան հոգեկան կեանքի զարգացումը թարգմ. լ. Բաբայեանի 20 կ.

XVIII Ընտանեկան թատրօն.—Վ. Բ. թարգմ. Միս Ասիլեանի 20 կ.

XIX Մանուկը բնութեան մէջ. Ա. Արստավի. թարգմ. Մ. Ասիլեանի 15 կ.

XX Մանկան ծիծաղը—Վ. Ռուդակովի և

XXI Բարուագիտութեան դասաւանդումը—պրօֆ. լ. Սովածի—15 կ.

XXII Երեխաների կապրիզներն ու դիւրագրգուկ. թիւնը, Ն. Կարցովի. Աս. թարգմ. Մ. Սահակիան—20 կ.

XXIII—XXVI Երկիւղն ու անվեհերութիւնը սկզբանական դաստիարակութեան ժամանակ, Կապտերի—50 կ.

Ա.Մ.ԲՈՂՋ ՇԱՐԻ ԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ

Ճանապարհածախուց՝ 1 ռուբլուց ոչ պակաս գընողների համար խմբագրութեան վրայ է.  
Հասցէն՝ Տիֆլիս, Ռեդակցիա „Ասկեր”

ՀՀ Ազգային գրադարան



NL0152203

H APM.  
H 2-55662

187  
992

ԳԻՒՆ է 50 ԿՈՊ.